



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. Քանայան
Հանձնաժողով
1904/10

891 · 99

P-17




391.542-3

ԹԻՄ

ՀԱՄԱԼԵԱՆՑ Ս.

ԺԱՄԱՆԵԿԸ ՈՍԿԻ

Ազգայնական Ֆ. Հոֆմանից



Հանրամասնելի գրք. Գինը 40 կոպ.

Հոգախն և թագաւորազր

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԷՍ», Միկայէլեան փող., 81.

1904 (15)

ՔԱՄԱԼԵԱՆՅ Ս. 13 APR 2011

891. 99

Թ- 17

պր.

527

ԺԱՄԱՆԱԿԸ ՈՍԿԻ

Ազգայնական

Ֆ. 20 Ֆ Մ Ա Ն Ի Յ

Պատկերագրեր

1001
4519

Ե-510
Ք-1-2

BOG



ԹԻՖԼԻՉ 1904

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Միֆայելիան փողոց № 81

(15)

29.08.2013

60313

1885 99A 51

ՇՈՒԼԱԻՒՅԻ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐ
ՆԱԴԻՐԵԱՆՑ ՀԱՆԳ. ՌՈՄԱՆՈՍԻ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒՐՈՒՄ Է

Ի ԻՐ ՇՆՈՐՀԱՊԱՐՏ ՍԱՆ

ԳԱՄԱԼԵԱՆՑ Ս.

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Марта 1904 г.

Նոր նիւր չեմ տալիս հայ հասարակութեան:

Պատանիների համար որոշուած այս գրեցիկը իբրեւ ընթերցանութեան հետաքրքիր նիւր դեռ շատ քիչ անգամ քարգնանուած է գերմաներէնից հայերէն Նագարեանց հանգ. Սեփաննոսի ձեռնարկ ու սպագրուած «Հիւսիսափայլ» ամսագրում հասակաւորների համար:

Նիւրը այն տեսակներից չէ, որ հնացած լինի, բայց հեղինակի ոտք, իմ կարծիքով, բարւակաւ հապաղ է: Նա կամենալով նոյնը գրուելի ձեռով պատկերագրող՝ հրատարակել, բարւոք համարեցի բնագիրը ազատ փոխադրել, տեղ տեղ յայտարարներ անելով: Թէ այդ ո՛րքան է ինձ յաջողուել, ընթերցողը բոլոր դասի:

Գրեցիկը գերմանիայում անբիւ բարեկամներ ունի: Երբեք նրա հերոս Լուպպին իւր սիրուն օրինակին հետեւող մի քանի տասնեակ բարեկամներ էլ հայ պատանեկութեան մէջ գտնի,—այդ կը լինի մեծագոյն վարձատրութիւն փոփոխակաւ արժանութեան:

Քամալեանց Ա.

1904. Մարտ. Թիֆլիզ.

Ժ. Ա. ՄԱ. Ն Ա. ԿԸ Ո Ս Կ Ի.

Ա.

Ամառուայ մի զարմանալի սիրուն իրիկու էր: Մառազարդ փողոցով անց ու դարձ անողները դիմացի փողրիկ տանը վայնասուն էին լսում. բաց պատուհաններից լացի ու կականի հետ խառն Վեր էր լինում մտրակի խիտ զարկերի շառաչիւնը, երբեմն մէկի բերանից նախատական դուռը, միւսի բերանից բողբոջ սրտածմլիկ ճիշեր թուշելով ընդհատում էին այդ համերգը, բայց չէին վերջացնում. հորից թնդում էր մըտրակը ու կրկին նորոգում մանկական սուր ձայնի ծփոցն ու ծկլթոցը: Այնպէս յուզիչ էր տեսարանը, որ անցնող մարդիկ վրդովմունքից դիմներն օրօրում էին. մի քանիսը մինչև անգամ ուզում էին ներս մտնել ու այդ անողորմ տուր ու թակին վերջ դնել: Այդ բարի մտադրութիւնը իրափանեց հարեան պառաւը. անտամ ծնոտները լըլըացնելով մօտ եկաւ կանգնողներին ու բոլորովին սառնասիրտ ասեց.

—Անհող զնացէք ձեր տները, կանգնելու առանձին բան չկայ. դա Լուպպու ձայնն է, ինչպէս մակալից ծեծ է ուտում:

—Ո՞վ է այդ Լոպպին, չի՞ կարելի իմանալ հարցրեց կանգնողներից մինը, որ վճռած լինելով, ներս մտնել յօտեցել էր տան դռան.

—Հարցնում ես՝ ո՞վ է Լոպպին, ճվաց պառաւը ունքերը դարմանքից վեր քաշելով ու ցիցաչոր ձեռները իրար չխփացնելով.—վնյ քու հէրն օրհնուի՛. երտեղացի ես, որ չես ճանաչում Լոպպուն, քաղաքիս մեծագոյն անառակին, դադարկաշըջիկ փուշ արարածին, որ Աստու իրան օրը պարապ թափառում է ու ուր սուր զնում է, կրակ ու պատուհաս է տարածում: Այն օրից որ այդ ոչ ու փուշը սկսեց հարևանիս տանը ապրելու էլ հանգիստ չունենք նրա ձեռից, մի գլուխ շարացնում է ու վրդովեցնում: Հեռու չգնանք. հէնց երէկ բոլոր հաւերս կապտել էր իրար վզից, խեղճերը խեղճոտուած կըլինէին, եթէ քիչ ուշ վրայ հասնէի, Մօտ օրերս էլ հարևան կնկայ կատուին էր օյին արել, մի շարան բոժոժ կապել էր պոչից. այդ զնգզնգոցի վրայ ողջ թալը ստի էր կանգնել: Խեղճ կատուն սարսափած գիտէր ոչ ուր փախչի: Մէկէլ օրը նոյնպէս ուրիշ հարևանի ամենասիրուն աղունակները ծածուկ ծպպացրել էր ու վզները ծալելով տարել մի քանի սև փողով վաճառել: Ա՛խ, ջանս քեզ մատաղ, դու չես գիտում, ի՞նչ պտուղ է այս Լոպպին: Ամեն Աստու օր նոր անկարգութիւն և անառակութիւն է սարքում. եթէ այսպէս գնայ, վերջն այն կըլինի, որ սապնած թօկը վիզը կըգցեն ու կըխեղդեն: Ար-

ժան տեղն է, որ ամեն օր սուր ու թակ է ուտում. այդ անհրաժեշտ է նրան, շատ ափսոս, որ մտրակի ամեն մի վրայ բերածը չի դիպչում:

Պառաւը ձեռները դէս դէն շարժելով դեռ բլբլացնում էր, երբ մի 12 տարեկան սիրուն տղայ պատուած հագուստով դռան շէմքում երևաց. պայծառ արտասունքները սև թերթերունքների վրայ դեռ պսպղում էին ու կարմիր շրթունքները գողգողում: Հէնց որ իմացաւ թէ խօսքը իւր մասին է ու հարևան պառաւը իւր վրայ է բամբասում, իսկոյն ձեռով արտասուքը սրբեց, բերանը պուտեց ու կունքը կողքերին դարսելով խօսեց.

—Ա՛յ դու շատախօս, լըլրան պնռաւ, էլի սկըսել ես ծնոտդ ջաղացի քարի պէս բան գցել: Ես արդէն լսեցի այն սիրուն դովասանքները, ինչ որ դու միշտ ինձ համար ախորժակով կըլնում ես: Ա՛սա ինչքան կարում ես, ինձ փոյթ չի: Հաւերդ իրար վզից կապտել եմ, սուտ չի. շատ էլ լաւ եմ արել, ինչո՞ւ էին մեր պարտէզը քարուքանդ անում իրանց շանկերով: Դրացու կնկայ կատուին բոժոժ եմ կախ տուել. ձեռիս միջոյն եմ եկել. հապա ինչո՞ւ մկներ բռնելը թողած գալիս է մեր կաթը գողէգող լակում: Ասում ես, հարևանի աղունակները բռնոտել եմ, չեմ ուրանում, բայց ինչո՞ւ են նրանք մեր բակը գալիս և մեր աղունակների կերակուրը խլում: Դու լաւ կանես, լըլրոցդ քեզ քաշես. քեզ ճանաչում են,

ինչ հոգի որ ես. չարախօս լեզուդ մարդու մա-
ղին էլ կոթ կը կպցնի: Գնա՛, գնա՛ տունդ, օջա-
ղիդ մտիկ արա, տես բզուկներդ, կաթսաներդ
ինչ հալի են. ո՞վ գիտէ տապակէդ այրուել, խեց-
գետինները կրակն են թափուել: Դէ, գնա հեռա-
ցիր, գլխացաւ պառա՛ւ:

— Տեսնում էք այս լրբին, կապկտրածին, ճը-
փաց պառաւը հերտտած. իբր թէ ինձպէս աղ-
քատ կինը տապակայ ու խեցգետին ունի տանը:
Այս ասում է փուչ կենդանին ինձ չարացնելու
համար: Ուշ միք դարձնիլ, տեղն ու տեղը հնա-
րովի է: Ա՛խ դ՛ն գետին խորտակուած, թէ ձե-
ռքս կընկնես, ես քեզ այն նշանց տամ, որ ասես՝
արեդ է կանաչ: Դ՛ն, գրողի ապրանք, դ՛ն, փուչ
պտուղ:

Լոպպին այս անէծքների վրայ փառ փառ
ծիծաղեց:

— Դէ հերիք էր, ինչ որ շնորքդ ցոյց տուիր,
քաջքի տատմէր. անիծելուց աւելի հօ ուրիշ ար-
հեստ չունես: Ծուռ սաներովդ զուր ես ետնիցս
վազում, ինձ բռնելը երազումդ կը տեսնես: Համ-
բերիր, թէ ձեր խաղողը կը հասնի, ծտերի բա-
ժին էլ չեմ թողնիլ: Իմացած կենաս, որ անելու
եմ, պճուաւ վիշապ:

Այս խօսքերից ետ իսկոյն երեսը շուռ տուեց
Լոպպին ու ծլկեց հեռացաւ, որ անէծքների հե-
ղեղից ազատուի: Խմբուած ունկնդիրները ուրախ
բարձր ծիծաղելով ցրուեցին այս ու այն կողմը:

Պառաւը մնաց իւր չարութեան մէջ եփ դալիս,
անիծել-պղիծելը ուղեց շարունակել, տեսաւ լը-
սող չկայ, ձայնն իրան քաշեց. շունն ինչ շուն է,
մենակ հաշելուց ձանձրանում է, նա էլ մրթմրթալէ
քաշուեց իւր տունը, ներս մտաւ, դուռը ետնից
ամուր չըխկալէ փակեց: Իսկ Լոպպին խնդալով
վազեց մօտիկ անտառը, ուր ցանց ու ծուղակ էր
դրել, տեսնելու, արդեօք թռչուն կամ ճագար
չեն բռնուել:

Խեղճ ու կրակ Լոպպի. ներսից նա իսկի այն-
պէս ուրախ չէր, սնց որ դրսից էր երևում. ու-
ղիղ որ ասենք՝ նրա քաշած օրը շան կեանք էր:
Ծնողները կենդան չէին, հայրը պալատի սպա-
սաւոր էր եղած, իւր անկարգ կեանքը, կոնծելու
սէրը եղել էին պատճառ, որ նա թագաւորի աչ-
քում գէշ էր թուացել ու վերջն էլ տեղից զըր-
կուել: Արբեցութիւնը նրա օձիքից ամուր բռնած
տարել էր մինչև գերեզման: Կինն էլ երկար չէր
ապրել: Խեղճ մանուկը մի օր աչքը բաց էր ա-
րել տեսել իրան աշխարքում մեն մենակ: Նրա
ամենամերձաւոր ոքմինը իւր մօրաքոյրն էր, թա-
գաւորի գոմի սպասաւորի կինը, անգաւակ էր.
դրա համար Լոպպուն վերցրեց իւր տանը պա-
հելու. նրա արած խնամքը մեծ բան չէր. փըշ-
րունք մշտունք էր տալիս, որ քաղցը յագեցնի և
թոյլ էր տալիս, որ ձեղնայարկի անկիւնում գլու-
խը վեր-դնի, քնի: Հագցնելու վրայ այնքան էր հօ-
գում, որ բոլորովին մերկ չերևայ: Սրանից աւե-

լին անելու հնար չունէր ձորաքոյրը, պալատի լուացարար կանանցից մէկն էր—ողջ օրը անց էր կացնում լուացքատանը. իւր հոգեորդու համար ամենեւին աւերորդ ժամանակ չունէր:

Այսպէս էր և ձորաքոյր ձարդի դրութիւնը. առաւօտից մինչև մութ թագաւորի դմուռն էր, Լոպպին նրան տեսնում էր իրիկուները, երբ նրա ձեռից ցերեկուայ ցելքութիւնների համար ծեծ էր ուտելու: Օր չէր մթնում, որ նա անկարգութիւն չանի: Չէր էլ կարող որ չանի: Ահա թէ ինչո՞ւ.—ողջ տարած օրը թողնուած էր իւր կամքին. դպրոց դնալ չունէր. ձորաքոյրը ուսման վարձ վճարել չէր կամենում. հանգիստ ծաղպատակ նստելու էլ առանձին սէր չունէր: Չանձրոյթը նրա համար մահից վատթար էր. ինչ անէր—ժամանակը անց էր կացնում խելքի փշածի պէս անօգուտ բաներով, առանց երկար մտածելու թէ ո՞րն է լաւը կամ վատը: Հաստատ դիտէր որ իրիկունը դրա համար ապաշխարելու էր: Խնամակալի ձեռի մտրակը ամեն անգամ դիպչելիս այրում դաղում էր, բայց և այնպէս ցելքութիւնից ձեռ չէր վերցնում. նրանից ստացած հաճոյքը հարիւր անգամ երկարատև էր քան մտրակի պատճառած կսկիծը: Ուստի անխօս ընդունում վայելում էր այդ ծեծը իբր աւերորդ ընծայ, որ ամենօրուայ ընթրիքին կից անշուշտ լինելու էր: Միայն սրտի էր գալիս այն միջոցին, երբ անմեղ էր ծեծւում ինչպէս այսօր: Վրդով-

մունքի ձեռից էլ հովութիւն չունէր: Ա՛խր մեղտեղը նա մեղ չունէր, յանցաւորը բախում չղթալով կապած նրա աղուէսն էր: Հաւերից մինը խիստ մօտ է գնացել, սանհէր աղուէսը կալել է, անուշ արել: Սրանում Լոպպին ինչ մեղաւոր էր. անխելք հաւին նա հօ չէր խրատել, որ աղուէսի դնչին մօտենայ: Արդար ասած՝ աղուէսն էր թալուտելու, ոչ թէ Լոպպին:

Բայց էլ ո՞րտեղ. եղածը եղած էր, Լոպպին թակը կերել էր, պտէր մարսել: Նրա բարկութիւնն ու հերսը առաւել նրա վրայ էր գալիս, որ խնամակալը աղուէսին սպանել էր:

—Դրանով ես սիրտս կօտրողը չեմ. նշանակութիւն չունի, անտառը աղուէսի ճուտերով լիքն է, էդուց կը դամ մինը կը բռնեմ, նրա վատութիւնը կը մնայ:

Այսպէս որոշեց Լոպպին ու իրիկունը ուշ անտառից եկաւ տուն:

Ճշմարիտ ասած՝ գրացի պառաւը զուր չէր ասում, որ Լոպպին անպիտան արարած է: Նրա արածը իսկի բերան բերելու բան չէր. արհեստ էր շինել ծածուկ աղունակներ թռցնելը, թէկուզ իրանց բակն էլ եկած չլինէին. քաշ էր գալիս շորթու պէս փողոցներում ու անտառում թռչունի բներ հանտալու, սոխակ ու մուշահաւների կախելու, որ վաճառի, բերանը քաղցրացնելու բան-ման առնի: Ժամանակը զուր կորցնում էր առանց կարգալ գրել սովորելու: Այս թերու-

Թիւնների հետ Լոպպին գարձեալ մնացել էր ան-
նախանձ, դուրեկան, աչքաբաց տղայ: Ճիշտ է՝
նա այնպէս խորամանկ ու ստահակն էր, որ հա-
տը չկար, բայց դրա հետ միշտ պատրաստակամ
ու բարեսիրտ, երբ նրա հետ քաղցր էին վար-
ւում: Անուշ վարմունք իւր կեանքում ոքմինից չէր
տեսել, ընդհակառակ ով ասես նախատել, հայ-
հոյել, անխնայ խփել էր նրան և դեռ հրաշք պէտք
էր համարիլ, որ այդքան բաներից ետ չէր դառել
չարախանձ, չկամ: Այսքանը պարզ էր, որ Լոպ-
պին ամենեւին չէր մտածում իւր ապագայի մա-
սին. ապրում, իւր օրը անց էր կացնում, օնց որ
թռչունը ծառի վրէն. ցնծում էր առանց աջ ու
ձախ նայելու, անհոգ թռչունը քեզ օրինակ՝ ու-
տում խմում էր, երգում ծիծաղում էր, լալիս
հրճում էր, հետեւելով գէպքի բերմունքին, դրա-
նով էլ վերջացան, էլ ինքն իրան հաշիւ տալ չը-
կար: Ի՞նչ յանդիմանես, նա դեռ մանուկ էր, իսկ
մանկութիւնը ոչ դարդ է հարցնում, ոչ հոգս:

Հետեւեալ օրը Լոպպին ժպտուն, ցնծադէմ
մի կտոր սև հաց գրպանում դրած գնաց ան-
տառը ազուէսի ճուտ բռնելու: Երկու ժամ թրև
գալուց ետ արդէն մինը գտել, դրել էր գտակի
մէջ ու ձեռը զդոյշ վրէն պահում, որ չփախչի:
Հէնց այն է, տուն դառնալու վրայ էր, որ իրա-
նից քիչ հեռու հրացանի տրաքոց լսուեց:

— Սա որսկան է լինելու անպատճառ, փնթփրն-
թաց նա, մի վաղեմ, տեսնեմ ինչ է սպանել:

Նրա համար, ասածն ու կատարածը մի բան
էր. ոչ առաջն եկող մացառին ուշ դարձրեց, ոչ
ծառերին, վռազ վռազ ծլկեց. երկու բոպէից ետ
ուղիղ որ մի որսկան նշմարեց. մօտ գնաց ու ճա-
նաչեց թագաւորազ Ադելբերգին, մեն մենակ
ապառաժուտ, խոր անդնդի անին կանգնած, շա-
նը հիս-հիս էր անում, որ ներքև իջնելու ճամ-
բայ դանի, բայց անասունը սիրտ չէր անում, ան-
գնդի այս ու այն ծերպի գլուխը հոտոտում էր
կաղկանձալէ, մէկ ուզում էր ներքև գլորուի, մէկ
էլ վախենալով միտքը փոխում, ահարկու խորու-
թիւնից ետ էր փախչում ու ֆլեգստալէ փռում
տիրոջ սաների մօտ:

— Առաջ, անաջ, Կնրօ, փնդոնիր որսը, խրա-
խուսում էր թագաւորազը շանը: Կարօն ֆլեգստում
էր ու ազին բուլղի-բուլղի անելով ծռմուռում,
ներքև գնալն ու վզից կտրելը մէկ էր իմանում:

Լոպպին չհամբերեց, ձայն տուեց. — Թագա-
ւորազ տէր, նա չի կարող: Եւ բոլորովին մօտ
գնալով թուխ վստահ աչքերը նրա դէմքին դցե-
լով շարունակեց խօսքը. — այդ բանը նա չի կա-
րող. բայց եթէ իմ օգնութիւնը պէտք է, հրա-
մայեցէք, այս բոպէիս ներքև գնամ:

Թագաւորազին սկզբում տարօրինակ թուաց
նրա առաջարկը, բայց պատրաստակամ տղայի
սիրուն դէմքը նրան այնպէս դուր եկաւ, որ ողոր-
մածաբար ժպտալով հարցրեց.

— Ո՞վ ես դու, այ տղայ, սրտեղից լոյս ընկար
այստեղ:

— Ե՛ս. թագաւորազ տէր, ես Լոպպին եմ,
հայրս Ռիխտերը պալատի սպասաւոր էր, մի՞թէ
այդ չէք գիտում: Այժմ մօրաքրոջս ամուսնու,
Կինգերլայն ակոսապանի մօտ եմ: Քիչ ժամա-
նակ առաջ անտառ եկայ աղուէսի ճուտ բռնելու,
այ, տեսէք գդակիս մէջն եմ դրել, չորս հատից
ամենասիրունը սա էր. բնի առաջ խաղում էին,
վրայ ընկայ ու բռնեցի: Բայց խնդրում եմ, ա-
սէք, ինչի համար է Կարօն ներքե գնալու: Եթէ
ձեր ուղածը իմ ձեռով կըգայ, աչքիս վրայ դրա
կատարելը: Կարօն գնացողը չի, դրա մէջ միան-
գամայն համոզուած եղէք, թագաւորազ տէր:

— Ես էլ կարծում եմ, ժպտալով ասեց թա-
գաւորազը, որի աչքում համարձակ մանուկը կա-
մաց կամաց մտնում էր. — գիտե՞ս ինչ, մի ար-
ժուի հրացանով խփել եմ, հակառակի պէս ըն-
դել է ներքե ձորը: Եթէ գնաս այն բերես, ինձ-
նից ընծայ կտանաս:

— Ա՛խ, տէր, ընծան որն է, խօսեց Լոպպին
անմեղ ծիծաղով, ես այդ կը կատարեմ Ձեզ հա-
ճութիւն պատճառելու համար: Միայն մի քանի
րոպէ համբերեցէք, որտեղ որ է, թուշունը գըտ-
նեմ բերեմ: Աղուէսս այստեղ եմ թողնում, թա-
գաւորազ տէր, կուզէք աչք բռնել, որ չփախչի:

— Ինչո՞ւ չէ, սուր գէսը, կըզնեմ որսիս մա-
յրսի մէջ:

Լոպպին առանց քաշուելու աղուէսը իւր գը-
դակով տեղաւորեց թագաւորաղի ցանցածե պար-
կի մէջ ու ճարպիկ կատուի պէս չանկուտելով ա-
հալի զառիվայրը, ակնթարթում անյայտացաւ
ժայռի ծերպերում բսած թփերի ետև: Երկու
թէ երեք րոպէից ետ ձորի խորքում ահա լսելի
եղաւ նրա ուրախ զիլ ձայնը:

— Բռնել եմ, ձեռիս է, թագաւորազ տէր,
բայց գազանը դեռ շունչ ունի. գնդակը թևին է
դիպել, սպանեմ թէ ողջ թողեմ:

— Ոչ, ոչ, ափսոս է, թախանձեց թագաւորա-
զը, միայն զգոյշ կաց, չըշանկուի, չըկծի. արծիւը
սուր մագիլներ ու կտուց է ունենում:

— Անհոգ կացէք, թագաւորազ տէր, ճչաց նա
դէպի վեր, սրա հետ կուտելն ու յաղթելը իմ
պարտքը լինի:

Այս ասելուց ետ զբաղուեց թուշունների թա-
գաւորի հետ կուտելով: Մի երկու րոպէ շարու-
նակ ներքե ճիչ ու կռընչոց էր լսում: Այդ մի-
ջոցին Լոպպին մի անգամ խիստ բարձր ծուաց.
երևի արծիւը նրա մարմնի որևէ տեղը ճանկել
էր: Իբր բան չպատահած մէկ էլ տեսնես լոյս
ընկաւ վերև թփերի կշտին. որքան ուժ ունէր
դուրսը կախ եռանդով մագլցում էր ժայռի
կուրծքը դէպի վեր, ձախ ձեռում թրևում էր
կապկապած արծիւը, աջ ձեռով օգնում էր իրան
բարձրանալու բռնելով մէկ թուփից, մէկ ժայռից,
մէկ խոտից:

— Ահա եկայ, դուչեց Լոպպին կարմրած դէմքով ու արծիւը թագաւորագի ոտները առաջ դնելով. ես ստիպուած էի նրա հետ օրինաւոր պատերազմ մղել, մինչև վերջիվերջոյ յաղթեցի առանց ուշ դարձնելու նրա կեռ կտուցին. անիրաւը կուռս կծեց, բայց որ ճղմակ դրի կացին, խելօքացաւ: Այժմ արդէն իմ գերին է. եթէ իրաւունք կրտաք, հեաներդ մինչև քաղաք կըբերեմ:

— Շատ լաւ, բայց դեռ քու վէրքի մասին հոգանք: Տես, տես ինչ ամուր է կծել. ցաւ է տալիս, հը՞:

— Մի քիչ սոյո. բայց ոչ այնպէս խիստ ինչպէս խնամակալիցս կերած ծեծը, որ ամեն օր ընթրիքի հետ վայելում եմ: Իսկի էլ հոգ միք անիլ, թագաւորանդ տէր. փոքր ծակուել է կուռս, փոյթ չէ, շուտ կը ծածկուի: Ազուէսս սուէք ինձ, ճանապարհ ընկնենք:

— Այ տղայ, ազուէսն էլ ուզում ես դու տանել, չէ, այդ շատ կը լինի, սէրը սիրով պէտք է փոխարինել, դու արծիւն ես տանում, ես էլ ազուէսը կը տանեմ: Ամենից առաջ վէրքը կապել է հարկաւոր, արիւնը խիստ հոսում է: Թաշկինակ չունես:

— Ի՞նչ, հարցրեց Լոպպին:


— Մի թաշկինակ:

— Է՛, բան չունէք, ճրտեղից է ինձ թաշկինակը: Թողէք արիւնը հոսի, ինչքան ուզում է. վերջըն ինքն իրան կը կտրուի:

Թագաւորազը գլուխը շարժելով գրպանից հա-

նեց իւր սեպհական թաշկինակը չորս տակ ծալեց ու աղի արիւնթաթախ կուռը փաթաթեց: Լոպպին ապշել, զարմացել էր. փաթաթելը նոր էր սուտուել, նրա թուխ աչքերի մէջ սյսպրացին արտասուքներ: Այդ նկատելով թագաւորազը հարցրեց.

1001
459



— Հը՞ ինչո՞ւ ես լաց լինում, ցաւ է տալիս:

Հ.Ա.Խ.Զ. ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ր.Ա. Публичная Библиотека
7/31 1922
ՅՈՒՆԱՆԻ ՄԱՍԻՔԻ ՆԱ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՍ

— Այն, չէ, պատասխանեց Լոպպին, ձեր անշափ բարութիւնը սիրտս շարժեց, ինքս չիմացայ, ինչպէս ջուրը աչքերս վազեց: Ուշ միք դարձնիլ, սիրելի թագաւորազ, գնանք, եթէ ուրիշ անգամ էլ ձորից թռչուն հանելու կարիք լինի, Լոպպին պատրաստ է ձեզ համար, միամիտ կացէք:

— Զարմանալի տղայ է, տեղնուտեղը զգացմունք է, շնչաց թագաւորազը ինքն իրան, դիտելով Լոպպուն աճող կարեկցութեամբ: Ասա մի տեսնեմ, Լոպպի, սրտեղ ես անցկացնում ժամանակդ. միշտ անտառումն ես լինում:

— Հրամանք ես, վաղ առաւօտից մինչև իրիկու, բայց միայն ամառ ժամանակը:

— Երևի ձմեռը ուսանելու ետնից ես:

— Ո՛չ, ուսանել չէ. ձմեռ ժամանակ անտառը ձնում թաղուած է, աղատ ու հեշտ վազվզել չի կարելի, այդ միջոցին մնում եմ քաղաքում, սահնակ եմ խաղում կամ սառցի վրայ սլում:

— Այդպէս հա՛, ուրեմն երբ ես ուսանում:

— Ոչ մի ժամանակ: Ուզեմ էլ, ինչ միջոցով, դպրոց գնալ չեմ կարող, իմ խնամակալները ուսման վարձ վճարել չեն ուզում:

Թագաւորազը մնաց շուարած. հարց ու փորձ անելով իմացաւ ամենը, ինչ որ Լոպպին իւր մասին տեղեկացնել կարող էր. տեսաւ որ Լոպպին մի դատարկաշրջիկ արարած է. բայց մեղը այնքան իրանը չէր, որքան ուրիշներինը: Կեղևը փափուած էր, սակայն միջուկը դեռ անարատ էր ու

գերժ ապականութիւնից: Զրոյց անելով հասան պալատի դուռը: Լոպպին արժիւը տուեց թագաւորազին ու նրանից ազուէան ստացաւ: Հրատեշտ տալիս թագաւորազը Լոպպու ափում դրեց մի նոր, պսպղուն ոսկէ դրամ ու ասեց.

— Այս քեզ իբրև վարձատրութիւն քու արած ծառայութեան ու քու ստացած վէրքի փոխարէն: Բացի այդ ուզում եմ քեզ մի խրատ տալ, որ մտքումդ պահես: Իսկ աւելի շահաւէտ կըլինի, քան թէ այս ոսկեդրամը, որ անշուշտ ուտելիքի, քաղցրեղէնի համար մսխելու ես: Հասկացիր, Լոպպի, որ դու մի փուչ, շորթի, անառակ արարած ես և այդ միայն այն պատճառի, որ ժամանակի արժէքը չես ճանաչում: Ժամանակը ոսկի է, Լոպպի, այս է այն խրատը, որ քու գըլխի մէջ տպաւորել էի ուզում: Եթէ դու ժամանակդ զուր անցկացնես, ոնց որ մինչի հիմի ես արել, դու ոչնչացնում, քամուն ես տալիս այն բոլոր փողը, որ ապագայում վաստակելու ես: Օգուտ քաղիր ժամանակիցդ, Լոպպի, դու պարտաւոր ես ուսանել, շատ ուսանել, ամեն բան ուսանել, ինչ որ և է տեղ ուսանել կարող ես: Այն միջոցին ժամանակը, որ այժմ քեզ համար միայն մի բեռն է, կըփոխարկես մի դրամազլխի, որ օրի մի օրը քեզ մեծամեծ տոկոսներ կըբերի: Ինչո՞ւ կըբերի. — որովհետև ժամանակը ոսկի է դառնում արդար ու խելացի կերպով գործադրուած հանգամանքում: Հապա սոսա, Լոպպի,

ինչ մարդ դուրս կըգաս վերջը, եթէ այսպէս շարունակես. շատ շատ մի արբեցող, մի մուրացկան, մի գող ու մի սրիկայ արարած: Լսիր խրատիս և ուսիր, սովորիր. քու մէջ թագնուած գանձկայ, հանիր լոյս աշխարհ: Գու անխելք տղայ չես, Աստուած քեզ բարի սիրտ և ընդունակ գլուխ է տուել, դրանցից կարող ես մի սիրուն բան ստեղծել, եթէ միշտ մտածես, որ ժամանակը ոսկի է: Ուսանելն է այն բանալին, որ դու կարող ես քու մէջ թագնուածը լոյս աշխարհ հանել: Այս գլխից ասեմ քեզ, այդ բանը հեշտ չի, դժուարութիւններ ունի: Ի՞նչ փոյթ, թող ունենայ, դու լաւ ես իմանալու, որ ինչ ուսանում ես, քեզ համար է, մի որ նեղութեան մէջ հարկաւոր է լինելու: Այս բանը միտք պահիր, Լոպպին, ժամանակը ոսկի է, բանացրո՛ւ որ հարստանաս, սուսիր, ուսածդ չի կորչիլ, մի որ քեզ կամ ուրիշին պէտք կըգայ: Այժմ Աստուած քեզ հետ, եթէ խրատականջումդ կըպահես ու նրան կըհետեւես, լիայոյս եմ քեզանից կարգին, օրինաւոր մարդ դուրս կըգայ: Եթէ չէ՛ կըգառնաս թշուառականի մէկը: Վերջին անգամ կրկնում եմ, սուսիր, օգտուիր ժամանակից. ուրիշ անգամ մենք էլի իրար հետ կըխօսենք, երբ ասածիս ականջ դրած կըլինես. առայժմ, մնաս բարով, իմ փոքրիկ:

Կրկին ուրախագէ՛մ ողջունեց թագաւորազը ու շտապ հեռացաւ: Լոպպին մնաց չձուլածի պէս ետնից նայելիս ու չէր ուզում այդտեղից պոկ

դալ. անգամ վճռեց ներս մտնել, ետնից վազել: Նրա չար բաղդից, մի մաղձոտ ծառայ նկատեց Լոպպուն պատրուտած շորերով, վրայ վազեց թըթուած դէմքով ու սաստեց.—էյ դատարկաշըրջիկ, հեռացիր իսկոյն պալատի բակից, թէ չէ՛ մտրակի համը կըտեսնես հա՛:

Ուրիշ անգամ լինէր, Լոպպին գիտէր թէ ինչ պատշաճ պատասխան կըտար, բայց այսօր լռուել էր. անփայել խօսք չէր գալիս բերանը, սոսկ արհամարհական հայեացք դցեց սպասաւորի վրայ, ոսկէդրամը խնամքով դրեց գրպանը, թողեց պալատի շէնքը, գնաց տուն, գտած ալուէսի ձուտը կապ տուեց շլթայի վրայ ու նորից վազեց դէպի անտառը, մի հանգիստ շուաք տեղ, ուր ծառերի տակով, ծաղկների միջով առուակը քըքչալէ հասում էր, կանգ առաւ: Այդտեղ մամուռի վրայ սուս փուս պարանուեց: Ազուէս թէ թռչուն այսօր ապահով կարող էին նրա շուրջը թռչկոտալ, նա լուռ ու մունջ գլուխը ափերի մէջ առած խորասուզել էր մտածմունքների ծովում. այնտեղից ոչ սարեկի ուրախ ճուղիւնն էր կարողանում հանել և ոչ մոշահաւի քաղցր դայլայլիկն ու երգեցողութիւնը:

Բ.

Լոպպին անթիւ անգամ լսել էր իւր մասին խնամակալների ու հարևանների բերանից հետեւեալը, «Լոպպին դատարկաշըջիկ, անառակ տը-

զայ է»։ ոչ միանգամ նրան այդ խօսքերը չէին ազդել, լսածը մի տկանջով տուել էր, միևնույն դուրս եկել։ Բայց այսօր—զանգուշալի բացառութիւն—ազդեցին։ Ուրիշ անգամ օտարից թէ իւրաւորից յանդիմանութիւն, նախատինք լսելիս ծիծաղում էր ու անազով անցկացնում, բայց այսօր լսածի վրայ ոչ ծիծաղեց և ոչ անազաբան շինեց. սրտին առաւ շատ թունդ։ Խօր տխրութիւն եկաւ վրէն, թէպէտ թագաւորազը նրա հետ եղել էր շատ սիրալիր ու մինչև անգամ ոսկէ դրամ էր ընծայել։ Այս ինչպէս պատահեց։ Դրա պատճառը Լոպպին ինքն էլ չէր իմանում. ախուր էր, այն էլ այնպէս ախուր, վշտացած, սրտակոտոր, որի նման իւր ամբողջ կեանքում իսկի չէր եղած։

Լոպպին անհասկացող տղայ չէր. նա շատ լաւ էր ըմբռնել, թէ թագաւորազը ինչ էր ուզում իւր ընտիր խրատով ասել և այդ ըմբռնողութիւնն էր, որ նրա վրայ խօր, անջնջելի տպաւորութիւն էր թողել։

—Այն, այն, թագաւորազը իրաւունք ունի, մտմտում էր ինքն իրան—ես մի շորթի ու անառակ տղայ եմ. ոչ ուսանել եմ ուղում, և ոչ աշխատել—պարզ ասած՝ ժամանակից շահուել չեմ կամենում, ինչպէս հարկաւոր է։ Հաւատում եմ նրա ասածին՝ ժամանակը ոսկի է, սա այնպէս ճշմարիտ խօսք է, որ իսկի նմանը չկայ։ Արդեօք ասեց եմ բանացրել ժամանակս. երբ դրա վրայ մտածում եմ, քիչ է մնում ամօթից դետինը մտնեմ։

Լոպպին մի հայեացք դրեց իւր անցեալ կեանքի վրայ ու իւր ընթացքը անխնայ անաչառ կերպով քննադատեց. եղելութիւնը ոչ մազի չափ դեղեցկացրեց և ոչ պակսեցրեց, այլ նկատուութեան առաւ այն ամենը, ինչ որ իրան հետ պատահել էր։ Ամօթի կարմրուցը սխեց կամայ-կամայ թուշերից ու մինչև սիրտը վառելով դնաց։

—Բաս ինչ է, որ փուշ արարած չեմ, երբ եմ ժամանակիս արժէքն իմացել։—Ապա իւր գլխին խորհուրդ էր տալիս. —Լոպպի, տղամարդ կրլինես, եթէ այսօրուանից ձեռ վերցնես այդպէս լինելուց։ Եթէ գլխիդ մէջ մտնում է, որ ժամանակը ոսկի է, բաւական էր ցելքութիւնդ, սկսիր ուսանելու ետնից կենալ, ինչքան ուժ ու հնար ունես։ Թագաւորազը շեշտելով քեզ ասեց.—ինչ ուսանես, քեզ համար է։ Այդ խրատը տալիս ինձ անուանեց ռորի, սևաւակ։ Սուտ բան չի ասել։ Բայց նա ինձ վատնող ևս անուանեց. այս մէկը ճշմարիտ չէ։ Ի՞նչպէս կարող էի վատնող լինել, երբ մինչև օրս բան չեմ ունեցել վատնելու, եթէ չը հաշուեմ ի հարկէ պատուական ժամանակը— ժամանակի անագին գրամագրութիւնը, որ ոչ մի բանով փոխարինելու հնար չունեմ։ Վերջը տեսնե՛ք։ Պապկան ոսկէ դրամը յաւիտեան կը մնայ ծոցս. թագաւորազը կարծում էր թէ քաղցրեղէնի եմ տալու կամ մոխելու. իսկի չէ, սիրուն ոսկին պահելու եմ. մի տարի կանցնի թէ տաս, թագաւորազին ցոյց եմ տալու, որ զարմանայ։ Այդ տես-

նելիս էլ չի ասիլ ինձ.— Լոպպի, դու վատնող, շորթի ու անառակ արարած ես: Այդ ասելու հարկաւորութիւն չի լինիլ. ամեն ջանք գործ եմ գնելու, կաշուից դուրս գալու, որ նա իրաւունք չունենայ ասելու: Այո՛, այո՛, ցոյց եմ տալու, որ նրա բերանի խօսքը գետին գցողը չեմ: Ժամանակը ոսկի է, Լոպպի, ականջիդ օղ շինիր:— Գէ այժմ գնամ մօրաքրոջս իմ որոշումը յայտնելու:

Արևի ճառագայթները թեքուել էին, երբ Լոպպին մամուռէ անկողնից վերկացաւ. մտածմունքի ծովն ընկած չէր նկատել խեղճը, թէ անց է օրը մթնել:— Տուն հասնեմ թէչէ, տուր ու թակը գլխիս ու մէջքիս թափուելու են: Մօրաքրոջս մարդը ինչ կը համբերի, որ այսքան երկար անտառում թրև գամ: Եթէ նրան ասեմ, որ այսօր ոչ մի ցելքութիւն չեմ արել, Աստուածն սուսացած, ինձ չի հաւատալու, պոտի թխկացնիլ: Է՛հ, էլ հոգալ հարկաւոր չէ, այսօր ինչ ուզում է, թնղ գոյ գլխիս, անարդար հարուածները կսկիծ չեն պատճառում, մանաւանդ որ այսօր վերջինն են լինելու:

Համարձակ բայլերով ճանապարհ ընկաւ Լոպպին. պինդ մթնած էր, որ տուն հասաւ: Սենեակ մտնելուն պէս ժամացոյցին նայեց: Խնամակալը առանց մի հատ խօսք բերանից հանելու տեղից վեր կացաւ, պահարանի գլխից մտրակը վերցրեց ու տո՛ւր մի կրտաս Լոպպու մէջքին, կողբերքին, մէկ, երկու, տասերկու, համբարելով

թրխկացրեց, հարուածներից ոչ մինն էլ փուստ չանցկացաւ: Ուրիշ անգամներ Լոպպին դռում, ճվում, դէս ու դէն էր ընկնում, այսօր ատամները նիչած անշարժ կանգնած էր, ոնց որ մի պատ, ոչ ուն էր շարժում, ոչ աչքը ճպում. անվըրդով համբերում էր մտրակի շառաչիւնին: Մարդ ու կին մնացել էին շուարած, մէկ իրար էին նայում, մէկ Լոպպուն: Այսպէս զարմանք իրանց կեանքում չէին տեսել:

— Ա՛յ տղայ, գոչեց խնամակալը, այս ինչ է պատահել քեզ, որ այսօր աղաքար ես կարուել, ձայն ծպտուն չես հանում. չլինի մէջքիդ բարձ ես դրել, որ խփածը տակը չի անում, չի աղբում: Հանիր բաճկոնդ, տեսնեմ:

— Ո՛չ, ո՛չ, խնամակալ, խօսեց Լոպպին բաճկոնը ուսերից հեռացնելով, ոչ բարձ եմ դրել, ոչ ուրիշ բան, դիպած հարուածները այսօր էլ մղկրտացնում, դալում են, ոնց որ ուրիշ անգամներ. բայց եթէ այժմ չեմ բղաւում կամ ընդդիմանում, վասն զի սրանք վերջինն են, որ ես քու ձեռից վայելում եմ:

— Ո՛նց թէ վերջինը, այ դու, փո՛ւչ վիշացած, գոռաց մօրաքոյրը, ինչո՞ւ վերջինն են լինելու:

— Որովհետև վերջ է, պատասխանեց Լոպպին բոլորովին հանդարտ ու սառնասիրտ կերպով, բաճկոնը հագաւ ու խօսքը շարունակեց.— Ես այժմ խելքի եմ եկել, մօրաքոյր, ուզում եմ ու-

րիչ մարդ գառնալ: Հերիք էր, ինչ որ մարդիկ ինձ անառակ, փուշ պտուղ ասին:

— Հն, յիմար գլխիդ արանքուիլը, հէնց գնլու են քու կարծիքը հարցնեն. աշխարհումս իւրաքանչիւրին իւր արժանի անունով են կանչում:

— Բողորովին արդար է ասածդ, մօրաքոյր, ես լաւ գիտեմ թէ ինչ անպիտան արարած եմ եղել մինչև օրս, բայց այսօրուանից էլ չեմ. այսօր ճաշից ետը ես անչափ բան եմ ուտել:

— Ուտել, դո՛ւ. ահր ողորմած Աստուած, բացականչեց մօրաքոյրը աչքերը չուելով:

— Հն, հէնց ես, մօրաքոյր, ես ուտել եմ որ ժամանակը ոսկի է:

Մօրաքոյրը չկարաց իրան պահել, բարձրաձայն ծիծաղեց. — Լոպպի, քու օրումը դու այդպէս արդար չես խօսեցել: Ժամանակը եթէ ոսկի լինէր, դու աշխարհիս ամենահարուստը դառած կըլինէիր. ուրիշ այնպէս ոքմին չեմ ճանաչում, որ քու չափ դադարկաշրջիկ ու քու չափ աւելորդ ժամանակ ունեցած լինէր:

— Այն, մօրաքոյր, ասածդ ուղիղ է, բայց մինչև օրս գիտէի ոչ, որ ժամանակը ոսկի է, հիմի գիտեմ այդ, օրէս ետը ինայոզարար եմ վարուելու դրա հետ: Ուսանել եմ ուզում, ամեն բան ուսանել, ոչ մի անկարգութիւն, ստահակութիւն չանել, այլ ջանասէր, կարգին տղայ դառնալ, որ ինձանով ամենդ էլ դո՛՛հ ու բաւական մնաք: Մտրակը տեղը դիր, խնամակալ. մինչև

օրս քու տուած սուր ու թակին արժանի էի, այժմ ասում եմ, որ այսօր պրծաւ, վերջինն են. հաւատա, ուղիղ եմ ասում: Այսօրից դէնը մըտրակը էլ տեղից չի շարժուելու:

— Այս տղէն խօսում է, հէնց իմանաս սերտած դաս ասելիս, վրայ բերեց խնամակալը զարմանքից ապուշ կտրած, միայն ափսոս, որ սին դատարկ խօսքեր են:

— Ո՛չ, ո՛չ, խնամակալ, սրտինս է, որ բեզ ասում եմ, կատակի բան չըկայ, միամիտ եղիր: Մինչև օրս ժամանակս չեմ շահեցրել, այսօրուանից վրձուել եմ այնպէս աշխատասէր լինել, որ ինքդ զարմանաս: Ուզում եմ դպրոց գնալ, կարդալ, գրել սովորել, մօրաքոյր, ինչ կասես:

— Դպրոց գնալ ես ուզում, դո՛ւ, Լոպպի. այնպէս ձևով հարցրեց մօրաքոյրը, կարծես ականջի լսածին չէր հաւատում: Հիմի որ հաստատ կարելի է ասել, աշխարհի վերջը մօտեցել է: Այ՛ մարդ, Աստուած սիրես, մի լսի՛ր, Լոպպին կամենում է դպրոց գնալ, ուսանել:

— Այն, մօրաքոյր, կամենում եմ, կամենում, պատասխանեց Լոպպին. ինչ որ ուսանում եմ, ինձ մի օր պէտք է գալու, ուստի պարտաւոր եմ ջանասէր լինել:

— Բեզ պէտք կըզայ, թէ ուրիշի, ուսանելը լաւ բան է, գոչեց մօրաքոյրը, բայց դու սնն ասա, դրա համար փող ունի՛ս: Տխմար տղայ, չըլինի՛ մտածում ես, որ ուսման վնրձդ էլ ենք տալու:

փողոցում գտած փող ունենք: Ո՞վ գիտէ կարծում ես, թէ մեզ վրայ ծախս չես նստում—քեզ կերակրելը, հագցնելը թեթեւ բան ես համարում, հիմի էլ ուզում ես ուսման վարձ վճարենք, այդ էր պակաս:

Լոպպին մնացել էր տրտում, գլխակախ կանգնած. յոյսերը փշրուեցին, իսկի մտքով չէր անցկացրել, որ չնչին վճարի համար կըխափանեն դպրոց գնալը: Գէ, էլ ինչպէս ուսանէր, երբ ոչ մի հնար չունէր: Կսկիծից աչքերը գեանից չէր բարձրացնում. մտքի մէջ իւր բոլոր ծրագիրները ջուրն ընկած էր տեսնում: Խնամակալը նկատեց Լոպպու աչքում արտասուք պղզրդալիս, մի անսովոր կարեկցութիւն պատեց նրա սիրտը, որ անձար տղին այդպէս լքեալ վիճակում տեսաւ:

—Լսիր, Լոպպի, իմ կինը ճշմարիտ է ասում, մենք չենք կարող քեզ դպրոց դրկել. դու ինքդ տեսնում ես թէ ի՞նչ տնանկ վիճակի մէջ ենք, օրական հաց հազիւ ենք կարում ճարել, կողմնակի ծախսի համար մի հատ սե փող չունենք: Ես հաւատում եմ, որ դու կատակ չես անում, վճռել ես քեզ ուղղել, առաջուայ պէս անառակ, անպէտք արարած չմնալ: Դա շատ լաւ բան է, որ քու մէջ առաջ է եկել. առաւօտը ախտապետի հետ կը խօսեմ, որ իրաւունք տայ, գաս գոմում ծառայես. այնտեղ շատ բան կայ անելու, եթէ ջանասէր լինել—աշխատելը մտքումդ կայ: Հաստատ եմ ասում քեզ, Լոպպի, եթէ

կարգին մնաս, ձիանոց լաւ աչք բռնես, պարկեշտ լինելով քեզ կարգին պահես, անկասկած քեզանից մի բան դուրս կը դայ, սկզբում կըլինես ձի մանածող, վերջը կըդառնաս գոմի իսկական սպասաւոր, ինչպէս ես եմ: Այս գլխից ասեմ. սովորական ցելքութիւններդ այնտեղ կըլինելու չես. եթէ նկատել եմ մի թեթեւ անկարգութիւն, իսկոյն շան ծեծ կուտացնեմ ու առանց դէս ու դէնի գոմից դուրս կըվռնդեմ, նրանից ետը պրծուած է քու բանը, էլ տանս չէմքը չես տեսնիլ, գլուխ պտես առնիլ, կորչիլ: Ասածս ոչ հանաք է և ոչ սին ոպառնալիք, չէ, արդարն է որ յայտնում եմ, քու պատճառի իմ պաշտօնը թողնել չեմ կարող: Երբ քեզ հետս ձիանոց տանեմ, քու պատասխանատուն ես եմ դառնում: Առաջին անմիտ ցելքութեանդ հետ վերջացած է պաշտօնըդ գոմում: Միտք արա, եթէ յոյս ունես քեզ վրայ, որ կարող ես կարողին, ուշք վրէժ պահել, ջանասէր լինել, արի առաւօտը հետս, իսկ եթէ չէ, մնա այստեղ:

Թէպէտ Լոպպին աւելի սիրով դպրոց կգնար քան թէ գոմը, բայց տեսնելով որ հնար չըկայ պատասխանեց վճռական, պատուաւոր կերպով. —Ես ինձ վրայ յոյս ունեմ, խնամակալ, խոստանում եմ աշխատասէր, կարգապահ լինել. եթէ որևէ ցելքութեան մէջ ինձ նկատես, վղակոթիս տնւր, դուրս արա, քու դէմ ոչ ձայն-ձայտուն հանողն եմ, ոչ դժգոհողը:

— Լաւ, երբ այդպէս է, գործը գլուխ է եկած, տեսնենք խօսքիդ տէրն ես, թէ չէ: Դէ, այ կնիկ, աղին բան-ման տուր, ուտի: Արդարը հարցնելու լինենք, արժանն այն է, որ այսօր անհաց անկողին մտնի, ուշ է տուն եկել, բայց երբ տեսնում եմ, որ յարգելի պատճառ ունի, այս անգամ ներում եմ:

Մօրաքոյրը մի կտոր հաց, հետն էլ քիչ աղ սուեց Լոպպուն. այս ընթրիքը ձեռին բարձրացաւ Լոպպին ձեղնայարկ իւր կոշա ու գլխած անկողնում ուտելու և քնելու: Բայց նրա աչքին ինչ քուն կըգար. օրուայ դէպքերից սիրտն ու հոգին այնպէս էր յուզուած, որ չէր կարում երկար միջոց աչք փակել: Սրտովը շէր դոմ գնալը: Խեղճը տուն դառնալիս ինչ օգային ամբողջներ ասես՝ շինել էր, թէ հնց է դպրոց գնալու, գրքերի մէջ բոլոր եղածները ուսանելու, որոնք մինչև օրս նրա համար եօթ կնքով զմռած գաղտնիքներ են մնացել. ապագայում հնց էր թագաւորազին հանդիպելու ու ասելու.— մտիկ ինձ, Լոպպուն, նախկին դատարկաշրջիկ անպիտանին, տես ինչպիսի ուսումնական մարդ եմ դարձել: Ծնորհակալ եմ այս բոլորի համար քեզ, թագաւորազ տէր, ահա քեզ ընծայած ոսկին. ես այլևս վատնող, կիչացնող չեմ, այլ մի օրինաւոր, բարեկիրթ մարդ:

Այս ու սրա պէս բաներ շատ էր մտածել. ամառսում էր, որ ոչ մինը իրագործուելու չէր, կրթութեամբ մարդ դառնալու տեղ գոմի ծառայ էր

դառնալու, իւր մեծ գրամագլուխը— այսինքն ժամանակը անօգուտ ապարդիւն զուր կորչելու էր: Լոպպին մտածելով տեսաւ, որ ուրիշ գուռ չկայ, լաւ համարեց թէկուզ հասարակ, քիչ բան ուսանել, քան պարապ սարապ թրև գալ, թափառել: Աւելի լաւ է գոժում բանի կենամ, քան փողոցները չափչփեմ ու թռչունի նման անտառներում ցատկոտեմ:

Այս որոշումով հանդարտուեց նրա սիրտը. արած վճիռներն ու մտադրութիւններն ամբաստանուեցին.— թագաւորազն ասեց, ինձ հարկաւոր է ուսանել: Ուսումնել, ինչ լինում է լինի, ժամանակը պարապ չկորցնել, շահաւէտ գործադրել: Այդպէս էլ անելու եմ, ասածս ասած է. թէ չանեմ, թող ետնիցս Լոպպի չը կանչեն, շուն կանչեն: Ե՛հ, ո՞վ է իմաստունի պէս բռնից հօտ քաշել, որ իմանայ իւր ապագան. կարելի է վերջը գրքերի ու կարգալու կուշտն էլ եմ հասնում, ո՞վ գիտէ, Գլխաւորը համբերութիւն ունենալն է ու եռանդով այն բանին կպչելը, որ ամենամօտն է մեզ:

Այսպէս էր մտածում Լոպպին. այս մտքերով պաշարուած ընի գիրկը մտաւ վերջապէս, որ առաւօտը զարթի ու իբրև արքայական գոմի ծառայ իւր գործին գնայ:

Լ. Լ. 1115

9.

Լոպպին գոմը ոտք դնելով մի բան էր դառնել, փոփոխութիւնը մեծ չէր, դառնել էր գոմի

Ճառայ: Բայց դէ այդ էլ մի բան էր, աւելի լաւ, քան շորթու պէս մանգալը, անառակի պէս անպիտանութիւններ անելը: Այս բանը նա զգում էր ու երջանիկ էր. այս գիտալցութիւնն էր, որ համբերել տուեց անթիւ անախորժ ու խիստ դառբաների, որոնցով սկսուեց նրա ասպարէզը ու դեռ շատ ցաւ ու կրակների դէմ էր կռուելու ու յաղթելու: Յայտնի է, որ նոր կոչում ընդունողի ճամբէն փշերով լիքն է. խեղճ Լոպպին իւր ճամբի վրայ աւելի փշեր դտաւ, քան թէ ուրիշները: Այգրատութիւնը այն կողմը մնայ, հովանաւոր չունէր ու ամեն տեղ յայտնի էր իբրև մի կապ կտրած, անառակ տղայ: Գոմի բոլոր ծառայողները մեծ թէ փոքր, ձիավար, սպասաւոր, կառավար, ամենն էլ անգութ, անամօթ կերպով նրան հալածում, վշտացնում էին: Ինչ էլ անէին, Լոպպին պարտական էր տանել, համբերել. ամեն մի բոպէ դմբուզն ու հայհոյանքը գլխին պատրաստ էին: Խեղճը գիտէր ոչ, ինչ անի: Հերիք էր գոմում մի թերութիւն լինէր, պատիժը Լոպպուն էր դիպչում, էլ հարցնող չկար, արգեօք նա մեղ ունէր: Ով վեր էր կենում, նրա վրայ էր աչք խէթում, հերստում. դեռ սկզբից գոմի հասարակ տղէքն ու փոքր ծառաները, ետոյ հերթով իրար եղնից գալիս էին ձի հեծնողները, կառք բանացնողները, ձի վարժողները ու վերջապէս ամենի գլխաւոր-ախոռապեան ինքը իւր կողմից պակասը լրացնում էր շուտով, երկար մտրակով

մի քանի հետ տրաքացնելով: Ուղիղ ասած՝ շան կեանք էր, որ Լոպպին քաշում էր, սակայն նա կամքի ոյժը չկորցրեց, մնաց հաւատարիմ իւր որոշման, այն է համբերել ամեն նեղութեան: Գրմբուզն ու ուշունցը ընդունում էր ու հանդարտ, առանց ընդիմութեան տանում: Յանձն առած պարտականութիւնները ամենայն սրբութիւնով կատարում էր: Զուր մեղադրուած միջոցին իրան այնպէս խելացի պաշտպանում էր ու անվրդով մնում, որ ոչ միայն իւր անմեղութիւնն էր լոյս բերում, այլ հետզհետէ իւր մեծաւորների յարգանքը վաստակում էր: Այդ միջոցներով, ուղիղ է, դմբուղից ու ծեծից չէր ազատում, որ շատ անգամ իւր ցանկութեան հակառակ վայելում էր, բայց գոնէ այդ անգթութիւնները սրտին չէր առնում, երբ իւր խղճի մէջ համոզուած էր, որ հարուածները զուր տեղն է ստանում: Թեթև ցաւը հօ իսկի բանի տեղ չէր դնում, դրան շատ վաղուց էր ընտելացած:

Օր օրի վրայ նրա վիճակը լաւանում էր. երկար միջոց թշուառ, անմխիթար չմնաց. շրջապատող մարդիկ տեսնում էին, որ Լոպպին այլ ևս նախկին անպէտք, անառակը չէ, դառել է մի հանդարտ, ընտիր, ուսումնասածարաւ տղայ, էնդուր էլ հետը վարում էին մեղմ ու մարդավարի: Այս հանգամանքը Լոպպուն իրան նոր կրթով ու հողի էր տալիս, սկսում էր իրան վեր ուղղել, ոնց որ ծալուած վարդի թուփը փոթորկից

ետ ու կրկնապատկած ուժով գործի էր կենում։
 Նրա վատ բաղդից պարագմունքներն այնպէս
 չէին, որ ողջ օրը զբաղուած մնայ, մի քանի ժա-
 մում ամեն բան վերջացնում էր, միայն այնպէս
 հիանալի ու հեշտութեամբ, որ իւր խտտապա-
 հանջ խնամակալն անգամ բաւական էր նրանից,
 իսկ ախոռապետի շոյաին արդէն վաղուց մտա-
 ցել էր Լոպպու թիկունքը։

Լոպպին ինքը բաւական չէր իւր գործու-
 նէութիւնից. չէր կարում թագաւորազի ասած
 խօսքերը մտահան անել. — «ժամանակը ոսկի է,
 Լոպպի, ուսիր, ինչ որ կարող ես, մի օր պէտք
 կըգայ քեզ»։ Գիշեր ցերեկ այս խօսքերը ական-
 ջում ձայն էին տալիս ու նրան անհանգիստ անում,
 թէ ինչո՞ւ քիչ է աշխատում, քիչ բան է ուսա-
 նում։ Գործելու, աշխատելու ձգտումը նրա մէջ
 զարմանալի կերպով զարթել էր, մի ժամ պարապ
 անցկացնելով հէնց կարծում էր, որ իւր մեծ դրա-
 մագլխից մի կտոր անդարձ կորցրել է։

— Այսպէս շարունակել չի լինիլ, մտածում էր
 ինքն իրան գոմում ձիաների մօտ նստած միջո-
 ցին թագաւորազի խօսքերը վերուգիր անելով։
 Արի ձիավարժին խնդրեմ ինձ ձի ու կառք վա-
 րելը, բանացնելը սովորցնի, օգուտից զատ զլաս
 չըգայ, երևի մի օր պէտք կըգայ։ Իէ, Լոպպի,
 վստահ գործիր, ժամանակը թանկ է։

Ասեց, տեղից վերկացաւ ու ուղղակի ձի վար-
 ժողի մօտ գնաց, սա ամենից շատ քաղցր աչք

ունէր Լոպպու վրայ։ Հէնց որ ձիավարժը նրա
 խնդիրը լսեց, ծաղրելով ասեց.

— Ի՞նչ յիմար զատ ես եղել, այ տղայ, ես չի-
 նելու քիչ բան ունիմ, որ դու էլ բեռ ես դառ-
 նում. գնա՛, գնա՛, գլխէս հեռացիր, էլ ուրիշ ան-
 դամ այդպէս գլխացաւանք բանով մօտս կըգաս։

Լոպպին գլուխը կախ դցեց, տխուր հեռա-
 ցաւ, սակայն արիութիւնը չկորցրեց. — արի փոր-
 ձեմ երկրորդին ասեմ, կարելի է նա համաձայ-
 նում է։ Մօտեցաւ երկրորդ ձիավարժին։ Սա էլ
 յանգիմանելով յետ ամեց։ Գնաց երրորդի մօտ.
 ամենն էլ մերժելով մերժեցին։ Մնաց անձար
 կանգնած. այս վայրկենին մի լաւ խորհուրդը
 նրա համար ամեն ինչից թանկ էր։ Գիտէր ոչ,
 ո՞ւմ դիմի. ուզում էր անչափ բան սովորել, քիչն
 էլ չէր յաջողում։ Տխուր տրտում ման ու ման
 արեց ու ծածուկ լաց եղաւ դոմի այն տեղերում,
 ուր մարդահօտ չը կար։ Ոքմինի չէր ուզում լացը
 ցոյց տալ, հաւատացած էր, որ ամենն էլ կարելի-
 ցելու տեղ ծաղրելու են, տնազ անելու։

Ինչքան զգուշութիւն ու խնամք գործ դրեց
 որ ծածկի, բայց էլի նրա արտասուքն ու տխրու-
 թիւնը մի օր նկատող եղաւ։ Գրանով բացուեց
 Լոպպու բաղդի ծայրը, այդ տեսնողը ախոռապետն
 էր։ Աննկատելի կերպով մտաւ ախոռատունը,
 տեսաւ Լոպպուն անկիւնում ձիաների կշտին, կան-
 չեց իւր մօտ ու մնաց զարմացած, երբ աչքերը
 արտասուքով լիք տեսաւ.

— Հը՞ ինչ կայ, Լոպպի, ինչ է պատահել քեզ, չըլինի որևէ անմիտ ցեղքութիւն ես արել ու ծեծ կերել:

— Ա՛խ, ո՛չ, պարոն ախոռապետ, դըմին ինձ դէթ չի արել: Այս խօսքերն ասելիս աչքերը աւելի լցուեցին,

— Ի՛նչ բաս ինչո՞ւ ես լալիս:

— Ա՛խ, ինչպէս ասեմ պատճառը, խօսեց Լոպպին անվստահ, վնայ թէ բարկանաս,

Մի վայրկեան լռելուց ետ վստահացաւ ու այս խօսքերը բերանից հանեց.

— Ես շատ սրտով ուզում եմ բան ուսանել սէ հնար չունեմ: Սկսեց փուլ գալ, հեկեկալ:

Ախոռապետի մեղքն եկաւ.

— Ա՛յ դու, խելառ տղայ, ուրիշները ուրախ են, որ ուսանելու ցաւից ազատ են, իսկ դու ընդհակառակը, տարօրինակ դուրս: Ի՞նչ էիր ուզում ուսանել:

— Ձի հեծնել, կառք բանայնել, ձիան կրթել ու բուժել. ամեն բան, ինչ որ աչքս գոմում տեսնում է:

— Իժուար բան չի ուղածդ, ձիավարժներից մէկին դիմիր, ցոյց կըտայ ինչ որ հարկաւոր է:

— Ո՛ւր էր թէ այդպէս լինէր, խօսեց Լոպպին, երեք ձիավարժին էլ խնդրել եմ, երեքից էլ մերժում ստացել. հէնց այդ է որ ինձ ախրեցրել է:

— Է՛հ, սիրտդ մի կոտրիլ, հետս անի, տեսնեմ. Երանք ինչ իրաւունք ունին քեզ մերժելու, երբ

դու բունն ցանկութիւն ունես սովորելու: Ա՛րի, երբ երեքն էլ մերժել են, ես կը հրամայեմ որ նրանցից ամեն մինը մի ժամ քեզ հետ պարապի: Ծոյլ արարածները կէս օրից ետը անգործ ընկած են,

Լոպպին մի կողմից ուրախացել էր, միւս կողմից դողը ջանն առել. ուրախ էր որ սովորելու հնար էր ստանում, բայց սարսափը դալիս էր, որ ձիավարժների չարութիւնը պի բորբոքել, որոնք ուղէին չուղէին իրանց գլխաւորի պատուէրի համեմատ պարտաւոր էին նրան սովորցնիլ:

Երկիւղը զուր չէր: Հրամանը մերժել չկարացին, բայց նրանց թթուած ունքերից Լոպպին գուշակեց, թէ գլխին ինչ է գալու: Կարծես նրանց դէմքի վրայ կարգում էր հետևեալը. — ապասիր, լպտած տղայ, այս նախատինքը էժան չենք նստեցնիլ քեզ վրայ: Ո՞նց թէ համարձակուես մեղանից ախոռապետի մօտ գանգատել:

Լոպպին արածի վրայ փոշմանած դողում էր. այժմ աւելի սիրով կը փափագէր ոչ ձի հեծնելու դաս առնել և ոչ բան ուսանել, բայց հրամանը տուած էր, կերակուրն եփած, պատրաստ էր, պտէր ուտուիլ, վերջացուիլ: Սկսեց վարժութիւնը սկզբից Լոպպու կեանքը գոմում նախանձելի չէր, այժմ աւելի վատացաւ: Ձիավարժներն իրանց զայրոյթը հանում էին նրանից, այն էլ ո՞նց. վարժութեան միջոցին հարուածները կարկտի պէս թափուում էին խեղճ տղի գլխին,

մէջքին: Երեք օրից ետ նրա վրայ մի մատնաչափ տեղ չկար, որ շուտին կամ մտրակը դադած չլինէր. ողջ մարմինը լեղակի նման կապտել էր: Լոպպու տեղ ուրիշը լինէր, կը թողնէր վարժու-թիւնները կիսատ ու կասէր—ոչ ձի հեծնել եմ ուզում, ոչ այսքան ծեծ ուտել ու կը հեռա-նար. սակայն նա իւր ասածի վրայ մնաց հաս-տատ: Ուղիղ է, շուտու հարուածը վրայ դալիս, վեր էր թռչում, սարսուժ, դէս դէն օրօրում, բայց կրկին ատամները նիչում էր, ոչ մի կակիժ, ոչ մի տրտունջ չէր բերում բերանը: Պատահում էր սկզբում, ձին վեր էր գցում կամ պատուժ խփում, վասն զի ձի վարժողները դիտմամբ նը-րան գիժ ձիաներն էին տալիս. Լոպպին ոչ ուժ էր անում և ոչ դանդատում, այլ նորից սուս փուս նստում էր ու ամեն ճիգ թափում ցաւը ակնե-րև չանել: Նա համբերում էր դառան պէս ա-ռանց բողբոջի ու ընդդիմութեան:

Լոպպին ձի հեծնել-բանացները սովորեց: Այդ ասելը ի հարկէ հեշտ է, բայց թէ ինչքան դառ-նութիւններ է քաշել, թուելը դժուար է. ոչ մի սխալմունք չարած միջոցին հարուածները հեղե-ղի պէս թափվում էին վրէն: Աստուած չանէր թէ մի սխալ անէր, էլ պրծաւ, անողորմի պէս տուր ու թակը կրկնապատկում էին: Լոպպին ահ ու երկիւղից ուշքը հաւաքած էր պահում. էնդուր էլ դեռ մի ամիս չբաշած ոչ միայն բոլոր դժուա-րութիւններին էր յաղթել, այլ և իւր վարպետ-

ների տհաճութեան. թամբի մէջ ամուր նստում էր, կասես մեխոժ ու ամենահմուտ ձիավարի հետ մրցում էր ու գլուխ դուրս տանում:

—Այս տղէն քամու բերք է, խօսեց առաջին ձիավարժը, երբ ձի հեծնելը Լոպպին արդէն ու-տել վերջացրել էր. քիչ առաջ դայրայթս դալիս էր նրան մի բան ցոյց տալիս, այժմ ցնծում, ուրա-խանում եմ, որ նա այսպէս աջողակ ու ճար-պիկ է:

Գարձաւ Լոպպուն ասեց.—գիտես ինչ, քու դասընթացը խկապէս վերջացած է, բայց զար-մանալի քաղցր աստղ ունիս, ինձ շատ ես դուր գալիս, արի քեզ ուրիշ բան էլ սովորցնեմ, դու գիտես միայն կենդու ձի հեծնելը. եթէ ցանկու-թիւն ունիս՝ կըսովորցնեմ քեզ մի քանի ձի միա-սին վարելը, կառք բանացները:

—Ինչո՞ւ չէ, աւելի բան ուսանելու համար միշտ ցանկութիւն ունեմ, ասեց Լոպպին. ես այս րո-պէիս էլ պատրաստ եմ, ուզում էք, սկսե՛նք:

Սկսեցին: Էլ ազատ ժամ չունէր նա, միշտ անց էր կացնում վարժութեան կրկեսում: Ամիսների կարիք չկար, երկու շաբաթից ետ նրան յանձ-նում էին ամենափայրենի ու անսանձելի երկվար-ները: Գործին չէր խափանում փոքրահասակ լի-ները, այնպէս քաջասիրտ ու հմուտ պատրաս-տուած էր, որ գոմի ձիավարժի գործի կէսը հա-մարեա ինքը կատարելով դառել էր նրա աչքերոյսը: Ամենն էլ հաւանում էին Լոպպուն: Այս միջոցը

նրա բաղդաւոր օրերն էին, իւրաքանչիւր օր մի բան աւելացնում էր իւր սովորածի վրայ ու ժամանակը շահաւէտ դարձնելով իւր մէջ հրճում էր ու իւր վիճակով գոհանում: Մի երկու ամսից ետ չկար ուրիշ աւելի հմուտ ձիավարժ գոմի ծառայողներին մէջ, քան նախկին դատարկաշրջիկ ցեղք տղէն: Բայց նիւթական օգուտ չունէր, պաշտօնի մէջ առաջ չէին քաշում. շնայած իւր ճարպիկութեան Լոպպին մնում էր դարձեալ իբրև գոմի հասարակ տղայ, ոչ աւելի:

Սակայն նա դրա վրայ շատ չէր դարդ աւնում. նրա մխիթարութիւնն էր, որ շարունակ նոր շնորք էր սովորում ու եղածի վրայ աւելացնում: Մենակ ձի նստելու մէջ չէր հմուտ ու ճարպիկ. վեց կամ ութ ձիանի կառքը մենակ այնպէս էր վարում, ետ դարձնում, կեռ ու մեռ քշում, կրակոտ երիվարները թունդ արշաւելիս իսկոյն կանգնեցնում, որ ամենի բերանը մնում էր բաց: Թագաւորի յատուկ կառապանները նըրանից լաւ չէին կարող անել: Լոպպուն գոմում անուանում էին փոքրիկ հրաւժ, ձիանոց լեզուն այնպէս էր հասկանում ու նրանց հետ այնպէս վարպետօրէն վարւում, որ նրա խելքի վրայ մընում էին զարմացած: Շատ կարելի է մինչև կեանքի վերջն էլ Լոպպին գոմում մնար, եթէ մի դէպք մէջը չընկնէր: Թագաւորը որոշեց ճանապարհորդութիւն անել, վերցրեց բոլոր ձիաներն ու ծառաները իւր հետ ու դնաց. մի ամ-

բողջ տարի բացակայ էր լինելու քաղաքից: Լոպպու համար այդքան ժամանակ ոչ ձի վարել կար և ոչ կառք բանացնել: Ուրեմն ինչ էր անելու:

Լոպպու մէջ էլ առաջուայ փուչ պտուղը չըկար, ծուլութեան անունը լսելիս գլխի ցաւը բռնում էր. շնորք սովորել, ժամանակը շահաւէտ դարձնել, որ սպագայի համար դրամագլուխ դառնայ,—այս էր անհ նրա փափագը: Բայց սնց. չնչին ուժիկը որ իբր գոմի տղայ ստանում էր, պարտաւոր էր մօրաքրոջը տալ, իւր ձեռին չէր մնում: Գոյրոց գնալու վրայ ուրեմն խօսք չէր լինիլ, ինչքան էլ սրտով ուզե՞նար: Որ և է բան ուսանել կարող էր—բայց թէ ինչ—այդ էր հարկաւոր գտնել: Լոպպին նստեց, գլուխը տրաքացրեց դէս-դէն մտածելով, բան չըգտաւ. վերջը մի օր տեսաւ շնավարժ տղային մի վոհմակ որսի շների հետ գոմի առաջով անցնում է: Ձեռը ճակատին լսիեց և ինքն իրան խօսեց.—Լոպպի, արի որսի շներ վարժելը սովորիր, սա էլ շնորք է, դըժար բան չէ, մի օր պէտք կըգայ: Է՛հ, Գոյրի, բղաւեց տղի ետնից, սպասիր, բան եմ ասում:

Կանգնեց. սրանք առաջուց իրար ճանաչում էին: Սիրով լսեց Գոյրիբը Լոպպու որոշումը ու խրախուսեց.—ինչո՞ւ չէ, եթէ ցանկանում ես, կարող ես շների լակ տալուն, կերակրելուն ներկայ լինել ու ման ածելիս մասնակցել: Դա կախուած է արբունի գլխաւոր որսորդից. գնա՛ նրանից իրաւունք առ:

— Լ՛աւ, ասեց Լոպպին ու վագեց գլխաւոր որսորդի մօտ: Սա սկզբից թոյլտուութիւնը դժարացրեց, ապա յօժարուեց այն պայմանով միայն, որ փոխարէնը Լոպպին նրա ձին խնամէ ու կրթէ: Լոպպին յանձն առաւ: Հէնց այդ օրից ձիապահը դարձաւ առ ժամանակ շնապահ: Գոմի միւս տղէքը սկսան ծիծաղել, ծաղրի առարկայ շինել: Հէնց որ նրան շների հետ շրջելիս տեսան: Լոպպին ուշադրութիւն չդարձրեց.

— Ծիծաղեցէք ու ծաղրեցէք ինչքան սրտներդ կուզի, ես իմ կողմից ձեզ լսողը չեմ. ինչ սովորում եմ, ինձ համար եմ սովորում և ոչ ձեզ համար: Աւելի լաւ է ժամանակը մի բանով լցնել, քան ծոյլ ու պարապ մնալ: Ի՛նչ կը թողնեմ որ ժամանակը ձեռէս կորչի, նրանից ո՛սկի պտեմ. քաղիլ, ո՛սկի: Այսպէս խօսելով Լոպպին գործը առաջ էր տանում ու իրան յոյս տալով համբերում՝ ընկերների ծաղրին:

Ուրիշների պէս թեթեւ աչքով չէր նայում՝ ընտրած, սկսած գործի վրայ, թափանցելով ներս շինում էր իւր համար միս ու արիւն: Շնապահ դառնալիս էլ այդպէս. գոմի տղէքն իրանց զբաղմունքն աւարտելուն պէս պարապ քամի էին կուլ տալիս, նա որսկան տղաների կուշտն էր վազում, որ նայի թէ նրանք ինչպէս են շներին վարժում: Ուշի ուշով դիտում էր ամեն ինչ: Վերջը թոյլ էին տալիս, որ ամեն բանի մէջ նրանց օգնէ: Վեց շաբաթ էր միայն անցկացել. այդ միջոցին Լոպ-

պին աւելի լաւ դիտէր շուն վարժելու հանգերը. քան բոլոր շնավարժ տղէքը միասին: Նրա բացսրտութիւնը, տօկուն բնաւորութիւնը դուր էր եկել որսկան տղերանց. հարկաւոր բան հարցնելիս սիրով պատասխանում էին ու դնացած տեղերը միշտ հետները տանում էին:

Այդպէս մի օր որսի դնացած միջոցին անակնկալ հանդիպեց թագաւորազին, որ մեծ մասով ապրում էր Լոնդօն, Պարիժ, Վիէննա մեծամեծ քաղաքներում ու տարէնը հազիւ երկու շաբթով գալիս էր իւր հայրական մայրաքաղաքը: Իսկոյն ճանաչեց Լոպպու դուրեկան դէմքը, գլխով նշան արեց որ մօտենայ:

— Հը՛, դու այն դադարկաշրջիկը չե՞ս, որ մի ժամանակ արծիւը ձորից հանեցիր: Այո՛, պատկերդ չեմ մոռացել, հէնց նա ես: Այժմ ւստաեանեմ. խրատս մտքում պահել ու նրան ուշի ուշով հետևել ես թէ չէ:

— Հրամանք ես, թագաւորազ տէր, պատասխանեց Լոպպին վստահ ու համարձակ, ձեր խրատին հետևելով սովորել, ուսել եմ այնքան, որքան հնար ունէի:

— Օրինակ ինչ ես սովորել:

Լոպպին սկսեց թուել.— ձի հեծնել, կառք վարել, ձի պայտել, շներ վարժել...

— Ուրիշ ոչինչ: Է՛, Լոպպի, դեռ թափառաշրջիկի հոտ է փչում. ես այդ շունէի աչքի առաջ, երբ քեզ ասում էի թէ դու պարտաւոր ես ուսանել:

Գեղ աւելի սաղ են գալիս կարգալ, գրել, հաշուելը, քան ձի քշելն ու կառք բանացնելը, որոնք գլխաւորապէս անգործ մարդի արհեստ են, իսկ շուն վարժելը, տէր ողորմած Աստուած, կարծես սովորելու բանը հատել էր: Գա պարապ-սարապ մանգալու գեղեցիկ ձեն է:—Լաւ, այդ այն կողմը մնայ, ահա տեսնեմ, այժմ ինչո՞վ ես պարապում, գործիդ անունն ի՞նչ է:

—Իսկապէս ասած՝ ես ծառայում եմ գոմում, բայց որովհետեւ թագաւորը ճանապարհորդութեան է գնացել, ժամանակս զուր չկորցնելու համար դառել եմ շնավարժ:

Լոպպին այսպիսի ջանասիրութեան համար գովասանք էր սպասում թագաւորազից, հակառակը դուրս եկաւ:

—Գոմի ծառայ, շնավարժ տղայ, ի՞նչ կարեւոր բաներ են սրանք, դու պտէիր մի կարգին շնորք սովորել, Լոպպի:

—Այո, այո, թագաւորազ տէր, լաւ էք ասում, եթէ հնար ունենայի է:—Այս ասելիս արտասուքով աչքերը լցուեցին: Ես էլ ուզում էի գրել-կարգալ սովորել, հնար չունէի, խնամակալը ինձ տարաւ հետը գոմը: Այնտեղ ուսել եմ աչքովս ատեսած բոլոր շնորքները, ինչքան ոյժս պատում էր, իմ կարծիքով աւելի լաւ էր մի բան արած լինել, քան ձեռները ծալած նստել:

—Կարծիքդ վատ չէ, Լոպպի, ասեց թագաւորազը սիրալիր, բայց անկեղծ որ ասեմ, դեռ

ուղիղ ճամբէն չես եկել, քու մէջ աւելի նշանաւոր թագնուած բան կայ. ափսոս է, որ մշտական գոմի ծառայ կամ շնավարժ տղայ մնաս: Գու շարունակ նրա վրայ մտածիր, ինչ որ քեզ վաղուց ասել եմ.—ժամանակը ոսկի է, պարապ մի անցկացնել, կարգալ սովորիր, մի օր պէտք կը գայ: Եթէ այդ ուղիղ ճամբէն բռնես ու համբերութիւնով մինչև վերջը տանես, քեզանից անպատճառ օրինաւոր մարդ դուրս կը գայ: Ես չեմ արհամարհում ինչ որ ուսել ես, իրօք համոզելու համար, որ քեզնից բոլորովին անգոհ չեմ, կը պատուիրեմ իսկոյն, որ քեզ անգլիական ցեղից մի շնալակոտ տան. վերցրու ու ինչպէս գիտես կրթիր, տեսնենք, ինչ ես դուրս բերում:

—Դաւ, դիմեց թագաւորազը գլխաւոր սրսորդին, անգլիական ցեղի մի լակոտ կը տաս այս տղին: Ապա կրկին Լոպպուն դառնալով ասեց.—դու էլ ոչ մի ջանք չինայես, երբ տեսնեմ աշխատասէր ու հմուտ ես, այն ժամանակ ապահով կաց, ամեն ինչ ես կը հոգամ: Միայն դրահետ մի մոռանալ, որ ժամանակը ոսկի է, պարտաւոր ես միշտ ուսանել: Էլի եմ կրկնում, քեզանից շնորքով մարդ դուրս կը գայ: Դէ, Աստուած քեզ հետ, սիրելի: Այժմ գնում եմ Պարիժ, վերագառնալուն պէս հարցնելու եմ, թէ ինչ ես չինել:

Թագաւորազը հեռացաւ, Լոպպին մնաց մըտահոգ, գլխակախ. ինքն իրան ասում էր.—ախր

ինչո՞ւ թագաւորազը իմ արածով բաւական չմնաց, չէ որ նրա խրատին հետեւել ու այնքան դառնութիւններ եմ ծծել: Ուրիշ ինչ կարող էի, որ չեմ արել: Կարգալ գրելը լաւ բան է, երբ որ ձեռս չի հասնում, գլուխս ո՞ր քարով տամ:

Անչափ տրտում էր, թէ ինչո՞ւ թագաւորազի աչքում իւր կրած նեղութիւնները այնքան քիչ նշանակութիւն ունէին: Վերջը այդ տիրութիւնն էլ անցաւ, երբ յիշեց որ այժմ ընտիր ցեղից շնալակտ ունի, նրանով կարող է զբաղուել: Բայց թագաւորազը նրա մտքից չէր հեռանում.

— Հիտնալի մարդ է, ա՛խ, երանի՛ շուտ չը գընար. այնպէս սրտով ուզում էի քիչ երկար հետը խօսել, իւր ընծայած ոսկին էլ ցոյց տալ, որ իմանայ թէ ինչ տեսակ տղայ եմ: Նրա կարծիքով, ով կարգալ, գրել, հաշուել չի իմանում, նա բան չի շինում, նա մարդ չէ: Լա՛ւ, թո՛ղ նրա ասածը լինի, այդ էլ կանեմ. սպասիր դրա ժամանակը հասնի:

Այսպէս ինքն իրան սիրտ տուեց, խրախուսեց ու նոյն օրը գնաց որսորդից լակոտն ստացաւ. մի գեղեցիկ, աշխոյժ կենդանի էր: Լոպպին խնդումից ցնծալով, լակոտին դուրգուրելով տարաւ գոմը, բոյն շինեց, տեղաւորեց ու հետեւեալ օրուանից սկսեց կրթել: Շունը ուշիմ ու հասկացող ցեղից՝ լսում ու կատարում էր նրա պատուէրները ոնց որ մի աշակերտ: Անխոնջ առաջ տարաւ վարժութիւնը. աշխատանքը նրան թւում

էր իբր զուարճութիւն: Այժմ մտածում էր՝ ինչի՞ վրայ դորժ դնի ազատ ժամերը: Կարգալն ու գրելը նրա գլխից չէին դուրս գալիս, թագաւորազի պահանջն էլ գլխաւորապէս այս էր: Բայց ո՞նց սովորի, ահա՛ հարցը:

Քաջ Լոպպին այդ էլ գլուխ բերեց, ահա թէ ինչ զարմանալի ու հեշտ կերպով: Ախոռապետը մի տղայ ունէր, վեց ամիս էր դպրոց էր յաճախում: Մի օր Լոպպին տեսաւ նրան բակում քարետախաակ ձեռին եռանդով պարապելիս: Իսկոյն նրա գլխում այս միտքը ծնուեց, — չեմ կարո՞ղ այս փոքր տղից կարգալ սովորել: Ա՛րի փորձեմ, ասեց ինքն իրան: Ամաչ-մամաչը մի կողմը դրած ուղղակի դնաց կուշտը ու խօսեց.

— Լէ՛օպպի, այդ ի՛նչ ես անում:

Մանուկը նրան արդէն ճանաչում էր, ժըպտալով վրէ՛ն նայեց ու պատասխանեց.

— Լո՛պպի, չե՛ս տեսնում, որ դաս եմ սովորում:

— Հա՛, տեսնում եմ, բայց այդ ո՞նց ես սովորում, դժուար չէ՞:

— Հա՛, Լոպպի, հեշտ էլ չէ: Մի՛թէ դու չես կարում կարգալ, գրել:

— Ո՞ւր է թէ կարում եմ: Ա՛խ այնպէս կուղէի կարգալ, Լէ՛օպպի: Նշանց տաս տեսնեմ, ո՞նց էք անում, որ կարդում էք:

Մանուկի ինքնասիրութիւնը վառուեց. — ինչո՞ւ չէ, ցոյց կը տամ: Իսկոյն սկսեց քարեգրիչը

շարժելով տառերի անունները մի-մի արտասանել: Լոպպին տեղնուտեղը ականջ կտրուած լըսում էր ու նրա ասածները մի առ մի ուղղում տպաւորում: Առաջին դասին տառերի կէտը սովորեց: Ամեն օր այսպէս շարունակեց Լէօպոլտին աշակերտութիւն անել: Ամենի ծիծաղը պրծնում էր, երբ տեսնում էին մեծ աղէն փոքր մանուկի կշտին նստած գլխակախ լսում է. մի քանիսը տնազ էին անում, բայց Լոպպու փոյթը չէր, թէ ուրիշներն ինչ են ասում. նրա փափագն էր կարգալ, գրել սովորել, վերջացաւ՝ գնաց: Բան ու գործը շինել էր ուսանելը, ոչ մութ էր հարցնում, ոչ լոյս, մի քարետախտակի կտոր միշտ ծոցըն էր պահում, քարէգրիչը հանում, մի գլուխ խազմզում ու ջնջում էր: Մի ամիս չէր լրացել դեռ, մեր Լոպպին գրել կարգալում այնքան առաջ էր գնացել, ինչքան իւր վարժապետը: Դրանից ետ պատկերը փոխուեց, Լոպպին այժմ աշակերտութիւր թողած Լէօպոլդին էր օգնում, սովորցնում: Մանուկը չափազանց ուրախ էր, որ Լոպպու պէս դասընկեր ունի, որ ամեն անգամ դժուարութիւններից ազատում է:

Լոպպու ցնծութեան պէս թագաւորինը չէր լինիլ: Թո՛ղ հիմի թագաւորազը գար, տեսնէր թէ անց է կարգում, հաշուում: Բաղդաւորութիւնից ինքն իւր վրայ խնդում էր: Սկզբի դժուարութիւնները յաղթուած էին, արդէն ոտը դրել էր սանդուխի առաջին աստիճանների վրայ, որոնք տանում էին

գիտնականութեան գանձարանը: Առաջին անգամն էր, որ Լոպպին իրանից լիուլի դո՛հ էր ու սրտում հպարտ իւր արած յառաջադիմութիւնով:

Դ.

Այն օրից որ Լոպպին կարգալ էր սկսել, նըրան չէր կարելի տեսնել առանց գրքի, ձեռնի կամ ծոցում մինը կրում էր. թէ ո՞րտեղից էր գըրքերը ճարում, ոչ ոք չը գիտէր. միայն ճանկ լնկածը այնպէս եռանդով էր ուսումնասիրում, կասես ողջ աշխարքի վրկութիւնը դրա մէջն էր: Լոպպու հաղորդուելու ժամանակը հասել էր. կրօնի դասերին յաճախում էր, դասատուն պալատի քարոզիչն էր. այնտեղ անցկացրած ժամերը նրա համար մաքուր բաղդաւորութեան անսպառելի ու օրհնառատ աղբիւր էր: Քարոզչին շատ դուր էր գալիս գեղեցկադէմ պատանին, որ այնպէս հանգիստ, ուշադիր ականջ էր դնում իւր խօսքերին ու խրատներին: Սրտանց սիրելով առանձնապէս պարապում էր նրա հետ, երբեմն իւր տունն էլ էր կանչում, գրքեր տալիս, թուղթ, գրիչ ու զանազան իրեր ընծայում, խորհուրդներով առաջնորդում: Ազքատ տղային ամեն ճիւղի վերաբերութեամբ տեղեկութիւններ էր տալիս. Լոպպին իւր կողմից եռանդով պարապելու անխտնջ օրինակ էր, ըմբռնելու կողմից հօ գարմանալի: Մի տարուայ մէջ այնքան առաջ գնաց,

ինչքան դպրոցի ողջ դասընթաց յաճախած մի աշակերտ:

Կարգալ սկսելով անուշադիր չէր թողում իւր միւս պարագմունքները, Աստուած չանի: Նրա շունը, որին Տիրաս էր կանչում, այնպէս սիրուն էր ու քաջավարժ, որ հեշտ բան չէր նրա նմանը գտնել: Լոպպին կիսատ գործ չէր սիրում. այդ ասել ենք. ինչ անում էր ամբողջ, լիակատար, ոչ մարմնի ոյժ էր խնայում, ոչ հոգու:

Վերջապէս ճամբորդութիւնից վերադարձաւ թագաւորը, գոմը կրկին լցուեց, խլիւաց կայտառ, գեղեցկատես ձիաներով: Լոպպին էլի իւր պաշտօնն ընդունեց. ձի կրթելը, կառավարելը և սրանց նման պարագմունքները բան գցեց: Գործի շատութիւնից հանգիստ ու դադար չունէր, ամեն բանի մէջ ցոյց էր տալիս եռանդ, սէր: Վաղ առաւօտից ստի վրայ էր, ձիաներին խնամելը աւարտում էր թէ չէ, իսկոյն քաշում էր մի անկիւն ու գլքերի վրայ գլխակախ պարապում: Իրար եանից կարգով գալիս էին ձի կրթելը, կառք բանացնելը, շուն վարժելը, գիր կարդալը ևն: Չէր թողնում ոչ ժամ կորչի, ոչ բոպէ, մինչև որ գիշերը վրայ հասնելով վերջ էր դնում զբաղմունքին: Ամենայն իրիկու աղօթելիս գոհութիւնով յիշում էր թագաւորազին, որի խօսքերը իրան բերել էին ուղիղ ճամբի վրայ կանգնացրել. սրտով փափագում էր այն բոպէի մօտենալուն, երբ նա ներկայանալու էր թագաւորազին ու ա-

տելու. — այժմ, ձեր բարձրութիւն, քննեցէք ինձ ու տեսէք, արդեօք ձեր խօսքը հաւատարիմ պահել եմ սրտիս մէջ, ձեր խրատին ճշմարիտ եռանդով հետևել եմ, կամ արդեօք նախկին անառակ, անպիտան արարածն եմ, որին անտառում տեսաք:

Լոպպին աչք կթած երկար սպասեց թագաւորազին, որ տեսնի, բոլորը զուր: Թագաւորը չէր երևում: Նա ապրում էր մէկ Անդլիայում, մէկ Ֆրանսիայում, մէկ Իտալիայում. մտքումը չըկար ոչ հայրենի քաղաք վերադառնալը, ոչ Լոպպու վրայ մտածելը:

Լոպպին երկար զուր սպասելուց սկսել էր թագաւորազին վրայ զայրանալ, երբ ուրիշ դէպք պատահեց ու մեր Լոպպուն բոլորովին անակնկալ մի նոր բարերար ու պաշտպան հանդիպեցրեց: Թագաւորը մեծ հրաւերք ունէր. աշունքն էր. որսի այս սիրուն ժամանակ, ոչ միայն նա, այլև իւր բարձրաստիճան հիւրերը փափագում էին որսի գնալ: Հրաման տրուեց գլխաւոր որսորդին, անտառապահներին, շնապահ պատանիներին, որ որսի վերաբերեալ ամեն ինչ այս ինչ օրուայ այս ինչ ժամին պատրաստ ունենան:

Ամեն բան շտապ առաջ էր դնում: Թագաւորը կատակ չէր սիրում, երբ գործը որսին էր վերաբերում. ամենաչնչին նախապատրաստութիւնն էլ առաւօտանց արուած էր. մարդիկ, շներ կաղմ պատրաստ էին գոմի առաջ ու սպա-

սոււմ էին թագաւորի գալուն, որ վերջին անգամ՝ մտիկ անի ու շարժուելու հրաման տայ: Երկար չքաշեց, պալատի գլխաւոր դռնից թագաւորը դուրս եկաւ, սուր հայեացք դրեց մարդկանց, ձիաների, շների վրայ ու բաւական մնաց.

— Բայց ուր է իմ Պիգաս շունը, չի երեւում, յանկարծ հարցրեց թագաւորը գլխաւոր որսորդին, ինչո՞ւ նրան չես բերել, դու գիտես, որ ուրիշը հետա չեմ վերցնում. այսօր ցանկանում էի հիւրերիս ցոյց տալ, նրանք չեն հաւատում, որ իմ Պիգասը այնքան շնորհալի է:

Որսորդը դոյնը թռցրեց ու դողդոզոցն ընկաւ. շների հեծեալ պահապանները, շնավարժ պատանիքն ու որսկանները սարսեցին, դէմքերի վրայ նկատելի էր երկիւզ, մտահոգութիւն ու լըքումն:

— Ձեր մեծութիւն, սղորմած եղէք, կմկմաց գլխաւոր որսորդը անհաստատ ձայնով, Պիգասը չի կարող մասնակցել:

— Ձի կարող մասնակցել, ինչո՞ւ, հարցրեց թագաւորը ճակատը կնճռելով, չնւա այս վայրկենիս սքմին զրկիր և շունը բերել սուր:

— Գթայէք, թագաւոր տէր, կրկին կմկմաց գլխաւոր որսորդը դողալով, գունաթափուելով սնց որ գետնից հանած: Ձեր մեծութիւն, Պիգասը ա...ր...դ...է...ն...

— Հը՞, սոսա, ինչ է պատահել, հօ հիւանդ չէ, չնւա սոսա, տեսնեմ:

— Պիգասը շունը վաշել է, չկայ, սղորմած տէր, դժուարութեամբ արտասանեց որսորդը դողդոզալով:

Այս խօսքերից ետ մի քանի վայրկեան խոր լուռութիւն տիրեց: Դա ահալի նշան էր. թագաւորը խիստ զայրացկոտ մարդ էր— նրա ամենասիրելի Պիգաս շունը սատկել էր— սպառնալից թղպեր ժողովուեցին ճակատին, աչքերը սկսան վայլատակել, բերանից ելած խօսքերը որոտում էին ամպի գոռոցի նման:

— Ի՞նչ ես ասում, ո՞նց թէ Պիգասը շունը վաշել է, այդ անկարելի բան է. երէկ չէր որ առողջ ու զուարթ ման էր գալիս:

Գլխաւոր որսորդը դողդոզ պատասխանեց. — Ձեր մեծութիւն, Պիգասը շտապով մի ոսկոր էր կրել, մնացել էր որկոյում ցցուած, հնար եղածը դորձ գրինք, որ աղետարին կենդանին փրկենք, չեղաւ, խեղճը շունը պարզեց իմ կռների վրայ:

— Մի ոսկորի պատճառով կորչի Պիգասս, որոտաց թագաւորը կրակ կորած: Պիգասի առաջ ոսկորն ո՞վ էր դրել, մի՞թէ քեզ ասել եմ, որ նրան ոսկորով կերակրես:

— Գթացէք, թագաւոր տէր, աղաղակեց որսորդը ու փռուեց զայրացած տիրոջ ոտների առաջ, ես անմեղ եմ. ոչ ոք չգիտէ, թէ որտեղ է Պիգասը ոսկոր գտել, սքմին նրան չի տուել. ինքը պտի գտած լինիլ զբօսանքի միջոցին:

— Ուրեմն շնապահ պատանիքն են մեղաւոր.

անկնակած, գոչեց թագաւորը, այդ սրատանինե-
րին հարկաւոր է մտրակի տակ անողորմ կերպով
չորացնել, անխնայ ջարդել, որ ապագայում ուշ
ները վրէն պահեն: Ա՛խ, ափսոս իմ Պիգաս:
Արանից ետ ինչ խորհուրդ ունի որսի գնալը.
խափանուած է: Հիւրերիս ինչ ցոյց տամ, մնա-
ցած չները անչնորք բաներ են: Անիծուած լինի
ձեր անհոգութիւնը, որ Պիգասի գլուխը կերաք:
Գնու, գլխաւոր որսորդ, արդելանքի մէջ կը մնաս.
աչքիս առաջից հեռացիր: Ծները, ձիաները տա-
րէք իրանց տեղը. շնապահ պատանիքը մտրակով
լի ու լի ծեծ կուտեն—դրանով էլ ամեն ինչ
վերջացնում եմ. դէ, կնքէք, հեռացէք:

Թագաւորը դայրագնած շուռ տուեց երեսը
որ պալատը գնայ, Լոպպին մէկէն առաջն ընկաւ:
Եղելութիւնը հեռուից լսել, տեսել էր, գլխաւոր
որսորդի գլխին եկածի վրայ շատ ափսոսել, այժմ
համարձակ առաջ վազելով խօսեց ակնածու-
թեամբ:

—Գթացէք, թագաւոր տէր, ես կարող եմ
այս դէպքում ձեզ օգնութիւն հասնել, ձեր ցաւին
ճար անել: Հարկաւոր չի լինիլ, որ որսը խափանէք,
եթէ բարեհաճէք մի անգամ իմ Տիրասը փորձել:

—Ի՞նչ ես գլխիցդ դարդակ դարդակ դուրս
տալիս, տխմար տղայ, խօսեց թագաւորը չարա-
ցած, հեռացիր աչքէս, թէ չէ դու էլ մտրակ
կուտես շնապահ տղերանց նման:

—Այո՛, թագաւոր տէր, յօժար եմ, թողէք

ինձ մտրակի տակ դցեն, որքան կուզեն, միայն
թէ մի անգամ Տիրասս փորձեցէք: Եթէ որսի
տեղից վերադառնալով իմ շանից բաւական չը
լինէք, խոտանում եմ առանց ընդդիմութեան
մտրակի հարուածները ճաշակել: Բայց հաւատա-
ցէք, ձեր Պիգասը իմ Տիրասի կշտին երեխայ կը-
սազայ: Իմ կրթածը այնպէս շուն է, որ ուղիղ ձեր
հաւան կացած: Զուր էք կամենում, տէր, որսի
գնալը խափանել: Սիրտս ցաւում է, որ գլխաւոր
որսորդը բանտարկուելու է ու շնապահ տղէքն էլ
մտրակի դաղոցից բզաւելու, ճղաւելու են: Նրանք
խսկի մեկաւոր չեն, սղորմած տէր, մի թէ նրանք
պատասխանատու են, որ Պիգասը ոսկոր է կուլ
տուել: Այդ անմեղներին փրկելու համար ուղում
եմ այսօր իմ Տիրասը ձեզ բան տալ և անկաս-
կած եմ, որ դուք շատ գոհ էք մնալու: Ի՞նչ հա-
մեմատութիւն Պիգասի հետ: Ա՛յ թէ մի անգամ
տեսած լինէիք իմ Տիրասին: Կուզէք, սղորմած
տէր, դժուամն է, այս բոպէիս գնամ բերեմ:

—Այս պատանին խելքը թուցրած է երևում.
դարձաւ թագաւորը գլխաւոր որսորդին. ինչ է
դուրս տալիս իւր Տիրասի մասին: Ո՞վ է պատա-
նին ինքը:

—Գոմի տղաներից է, տէր, խօսեց որսորդը
շտապով, բայց խելքը թուցրած կամ ցնորուած
չէ, ամենեկին չէ. այլ մի շատ ճարպիկ, բարե-
սիրտ տղայ է: Ո՛ւր էր թէ ձեր մեծութիւնը
բարեհաճէր դրա շունը տեսնել, իսկապէս դեղե-

ցիկ կենդանի է... գուցէ...

— Այն, անկասկած, ամենալաւն է, հաւատա-
ցած եղէք, մէջ ընկներով Լոպպին խրեց նրանց
բերանի խօսքը: Միայն մի վայրկեան սպասէք,
գնամ Տիրասս բերեմ:

Կայծակի պէս տեղից պոկ եկաւ, թռաւ ու
խօսոյն վերագարձաւ շան հետ ու վստահ, հպարտ
կերպով ներկայացրեց թագաւորին: Թագաւորը
մնաց արմացած, ուղիղ որ շունը զարմանալի սի-
րուն էր, շարժումները վիպում էր, որ հմուտ ձեռի
տակ է կրթուել: Թագաւորի ճակատը պայծա-
ռացաւ, ցասկոտ բերանի ամեներին ժպիտ խա-
ղաց:

— Ճիշտ որ գեղեցիկ արարած է, եթէ սի-
րունութեան չափ և ճարպիկ լինի, այն ժամա-
նակ ճշմարիտ որ աննման կը լինի:

Այս խօսքի վրայ բոլոր պատժուածները ա-
զատ շունչ քաշեցին:

— Ո՞ւմ է պատկանում շունը, հարցրեց թա-
գաւորը Լոպպուն:

— Շնունը, ինձ, թագաւոր տէր, էլ ուրիշ
նմ է պատկանելու:

— Քեզ, հարցրեց թագաւորը Լոպպուն աչ-
քով չափելով. սրտեղից է ընկել այսպիսի շունը
քու ճանկը, դու երևի նրան գողացել ես, տղայ:

— Ի՞նչպէս թէ գողացել. Աստուած մի
արասցէ, ազգակեց Լոպպին սոսկումով, Ագել-
բերդ թագաւորագն է ինձ ընծայել:

— Ճշմարիտ է ասում, հարցրեց թագաւորը
գլխաւոր որսորդին:

— Այն, ձեր մեծութիւն, պատանին ինքն է
կրթել իմ աչքի առաջ:

— Ուրեմն դու այս շունը ճանաչում ես:

— Այն, ողորմած տէր:

— Ի՞նչ ես կարծում, Պիգասի հետ կը դա՞յ:

— Այն, թագաւոր տէր, սա գեռ աւելի լաւ
է կրթած:

— Այդ մասին երաշխաւորում ես:

— Այն, եթէ ճիշտ չը լինի, պաշտօնից ար-
ձակեցէք:

— Լաւ, կամենում եմ փորձել, որսը խա-
փանուած չէ, գնում ենք, բայց եթէ այս շունը
Պիգասի շնորքը չի ունեցել, նրա տեղը չի բռնել,
վա՞յն եկել է քեզ, աւելի խիստ եմ պատժելու:
Ի՞է, այժմ սրագ, սաստեց գլխաւոր որսորդին,
մեզ հարկաւոր է շտապել, հիւրերն այժմ սպա-
սում են:— Շնավարժ պատանիներին դառնալով
ասեց. ձեր լացն ու դողոցը երկինք է հասնելու,
եթէ այս շան թերութեան առթիւ ծաղրի ա-
ռարկայ դառնամ: Զիանը սուս, ժիր վաղէք:
Ա՛րի, Տիրաս, թէ Պիգասի կիսի չափ էլ շնորք
ունենաս, բաւական է:

Երկար չը քաշեց, որսորդները ձիաւորուեցին,
աչքը բարին տեսնի, թուան հեռու: Լոպպին
մնաց իւր տեղը. ոչ ոք առանձին ուշադրութիւն
չը դարձրեց. միայն շնապահ տղէքը մօտենալով

չնորհակալութիւն արին, որ իրանց մէջքը մարակի մղկիտից աղատեց, մի քանիսն էլ ուրախ էին, որ Լոպպին կարաց ժողովուած ցասումն ու փոթորիկը ցրել, անվնաս դարձնել. դրանով էլ վերջացաւ: Ոչ մի գովասանք, ոչ մի կողմնակի խրատոյս: Այդ անտարբերութիւնից նա վշտացողը չէր. ուրախ էր սրտում, որ գլխաւոր որսորդին օգնելու դէպք ունեցաւ, որ մինչ այդ ժամը քաղցր աչք էր ունեցել իւր վրէն: Այժմ շատ հետաքրքիր էր այն բանին, թէ իւր Տիրասը մնց է դժուար քննութեանը գիմանալու: — Չէ, եթէ իմ կրթածն է, քաջ դուրս կը դայ, ասում էր ինքն իրան Լոպպին:

Օրը սովորականի պէս գլորուեց, մթնադէմին հեռուից լսելի եղան փողերի ձայները ու խսկոյն իրար նմանից երևացին հեծեալ որսորդները: Լոպպին վազեց գոմի առաջ ու եկողների մէջ թագաւորին աչք ածեց: Նրա դէմքը այժմ ցընծութիւնից փայլում էր, ոչ աչքերում հերս էր մնացել և ոչ ճակատին տրամութիւն: Չիուց իջնելուն պէս հարցրեց.

— Ո՞ւր է այն տղէն, գոմի տղէն:

— Այս բոպէիս կանչեմ, շտապ պատասխանեց գլխաւոր որսորդը. Լոպպի, կանչեց բարձր:

— Այստեղ եմ, ինչ էք հրամայում, պատասխանեց պատանին ու դէպ թագաւորը առաջ վազեց:

— Ա՛յ այդ դնւ ես, խօսեց թագաւորը ողոր-

մածարար ժպտալով, հրաշալի շուն ես ունեցել, այ տղայ: Աննման կենդանի է, աւելի լաւ կըրթուած քան Պիդասը, պէտք է նա իմը դառնայ:

— Ի՛է, տեսնում էք, ողորմած տէր, խօսեց Լոպպին բաղդաւորուած, ես զուր տեղ չէի Տիրասիս դովում. փառք Աստծու, ասածս ուղիղ է դուրս եկել: Երբ այդքան հաւան էք, ուրիշ անդամ էլ ձեզ բան կըտամ. այդ կարող եմ, շան համար էլ օգտաւէտ է որսի մէջ վարժուելը:

Թագաւորը ունքերը վեր քաշեց և աչքերը չռեց Լոպպու վրէն.

— Ո՞նց թէ բան տալ. լսում չեմ որ քեզ ասում եմ, շունը իմը պտի դառնալ:

— Այն, լսեցի, ողորմած տէր, խօսեց Լոպպին ուրախադէմ գլուխն օրօրելով, այդ անկարելի բան էք ասում, ես իրաւունք չունիմ շունն որմինի նուիրել, իմ ձեռի տակ պտի մնալ:

— Ո՞վ է նուիրելու մասին խօսում, ուզում եմ շունը քեզանից դնել, տխմար տղայ:

— Դուք ուզում էք, բայց ես վաճառելու իրաւունք չունեմ: Չէ, սիրելի թագաւոր տէր, խօսեց Լոպպին անկեղծօրէն, դա անկարելի է: Ամենից առաջ Ադելբերգ թագաւորազը պտի նրան տեսնիլ, ինձ ընծայողը նա է: Բայց ինչպէս ասել եմ, կարող եմ ձեզ բան տալ որսի համար, ինչքան կամենաք:

— Այս ինչ խելառի մէկն է այս տղէն, խօսեց թագաւորը ծիծաղով, գոմի տղէն ուզում է

ինձ, իւր թագաւորին ողորմութիւն անել, երբեմնապէս շունը բան տալով. այս շատ ազի բան է: Է՛, կարճ կտրենք, այժմ ժամանակ չունեմ, առաւօտը վաղ կըգաս ինձ ձօտ պալատ, կըխօսենք: Է՛յ, ձայն տուեց գլխաւոր որսորդին. դո՛հ եմ քեզանից, որսը յաջող անցաւ: Տիրասը կըվերցնենս, միայն զգոյշ կաց, Պիգասի խաղը նրա գլուխը չըբերես:—Քիչ ցածր... ձայնով վրայ բերեց. սոսա այդ պատանուն, վաղը տակից գըլխից աւել չըխօսի: Դէ, Աստուած ձեզ հետ:

Այս խօսքերից ետ թագաւորը գնաց դէպի պալատ. Լոպպին քիչ վշտացած ու շուարած դարձաւ գլխաւոր որսորդին ասեց:

—Ամեն բանի կը յօժարեմ, ողորմած թագաւորը ինչ հրամայի, սրտովը կըգնամ—միայն թէ չասի՝ շունդ վաճառի: Այ մի պայմանով նրան ձեռից թողողը չեմ: Չեզ եմ հարցնում, ինչ կասի ինձ Ադելբերգ թագաւորազը, որ նրա ընծայած բանը վաճառեմ:

—Ի՞նչ ես խելքից դուրս բաներ ասում, այ տղայ, ո՞վ գիտէ, երբ է գալու թագաւորազը: Թէ կուզի հէնց այսօր գայ, ինչ ես կարծում, կընդիմանայ, թէ ինչո՞ւ շունը իւր հօրն ես տուել: Մի փոքր քեզ ու քեզ միտք արա, թէ ինչ ես ասում. հօ չե՞ս մտապել, որ թագաւորը Ադելբերգ թագաւորազի հայրն է: Ուզո՞ւմ ես, որ շունը ուժով ձեռիցդ խլեն: Խելքի արի, Լոպպի, ինչպէս թագաւորն ասեց, գնա պալատ, վերցրու

փողը, ինչքան որ տալիս է ու վերջացաւ: Լաւ գիտեմ, որ սրտով կպած ես շանդ, բաժանուելը դժուար է: Գարգ մի անիլ, նոր լակոս կըտամ, կըթելու ժամանակ ունես, վերցրու նորից պատրաստիր ու ներկայացրու: Սրա գէժ ինչ ասելիք ունես:

—Երբ այդպէս է, յօժար եմ, ընդունում եմ, ասեց Լոպպին ու գլխաւոր որսորդի ձեռը սեղմեց թօթուելով:

Էդօր գնաց պալատ: Թագաւորը նկատելուն պէս սրտաբաց գոչեց.

—Հ՛ը, դու բարի ես եկել, իմ գամի ողորմած տղայ, հիմի ինչ է միտքդ, վճուել ես արդէն շունն ինձ տա՛լ, թէ չէ:

—Այո, թագաւորն ապրած կենայ, վճում տուած է, արդէն գլխաւոր որսորդի ձօտ է:

—Լա՛ւ, իմ սիրելի, խօսեց թագաւորն ու արկղից մի բուռ ոսկի հանելով մեկնեց.

—Ահա՛ առ, այս քու շան գինը, այսքանը բուսական է, չէ՛:

Փայլուն ոսկիների վրայ Լոպպին աչքերը չօւելով մտիկ արեց ու ետոյ պելացած թագաւորի երեսն ի վեր նայեց: Իսկի մտքով կանցկացնէր, որ շան փոխարէն այսքան ոսկի է ստանալու: Բայց խեղճ աղէն իւր գլխում ուրիշ ծրագիր ունէր, որի իրագործումը աւելի սրտով կուզէր, քան դրամ վերցնելը: Շփոթուածի պէս մնացել էր կանգնած, գիտէր ոչ ինչպէս սրօշել:

Նրա անշարժ գիրքից թագաւորը ուրիշ կասկածի եկաւ.

— Հը ի՞նչ կայ, ուզում ես սրանից աւելի փող ունենալ: Մի՞թէ այդքան աչքածակ ես եղել, տղայ:

— Ոչ, սչ, սղորմած տէր, պատասխանեց Լոպպին ձեռները տրտրելով, տուած փողը շատ էլ է, բայց ներեցէք, իմ փափագը ուրիշ է, ես կամենում եմ այլ բան խնդրել:

— Ի՞նչ է ուզում սիրտդ, համարձակ ասա, լսեմ:

— Իմ փափագն այս է. հրաման տաք, որ ինձ դպրոցում ընդունեն: Ողորմած տէր, սրտով ուզում եմ շատ բան ուսանել, ուսման վճարը թանկ է. իմ խնամակալները չեն կարում վճարել. եթէ շնորհ անել էք ուզում, բարեհաճէք թոյլ տալ, որ դպրոց դնամ:

— Ել ուրիշ ոչինչ, բոլորն այս է, ինչ որ դու ուզում էիր, հարցրեց թագաւորը:

— Այո, ասեց Լոպպին համեստութեամբ:

— Լաւ, խնդրուածդ խելօք ու հաճելի բան է, ուզում ես ձրի ուսանել, կրկարգադրեմ իսկոյն. այս փողն էլ վրէն ընծայ, գիր ծոցդ ու կանչիր իմ սենեկապանին այստեղ, նրա միջոցով ամեն բան կը հոգացուի, դէ գնաս բարով:

Լոպպին ցնծումից դողացող ձեռներով փայլուն սակիքը ժողովեց ու շտապեց սենեկապանին կանչելու: Չրի դպրոց գնալու հրամանը պատ-

րաստուեց, թագաւորի ստորագրութիւնը վրէն յանձնուեց իրան: Խոր գլուխ տալով դուրս թուապալատից ու բերկրուած սրտով վազեց տուն: Այդ րոպէին Լոպպիից աւելի բաղբաւոր դժուար թէ աշխարքում գտնուէր. ցնծումից գիտէր ոչ թռչկոտանջ, պար դայ թէ խնդ կանչի: Քիչ էր մնում ամեն մի պատահողի վրով փաթաթուի, կրծքին սեղմի: Իսկ մօրաքոյրը հօ այդ ցնծուն վիճակում տեսնելով ուղիղ երկիւղ էր կրում, չըլինի թէ աղէն ցնորուել է:

Երբ Լոպպին ճվալով վազեց մօրաքոյրը վզովն ընկաւ, սա բարձրաձայն հարցրեց.

— Այ տղայ, ի՞նչ է պատահել քեզ, խելքդ հօ չե՞ս կորցրել: Ի՞նչ ես գտել, որ այդպէս ուրախ ես:

— Մօրաքոյր ջան, գտել ու բերել եմ քեզ համար փող, ինձ համար գանձ, ազազակեց Լոպպին երջանիկ: Բ՛հը՛ մօրաքոյր, սա 10 պսպղան սակի, դրանք քեզ լինեն. ես էլ առաւօտուանից գնում եմ ուսումնարան, էլ իրաւունք չունես ընդդիմանալու:

Մօրաքոյրը կարծում էր թէ երազ է, երբ Լոպպին այնպէս խօսում էր ու սակիքը նրա գոգն ամում:

— Այ տղայ, մի սոսա տեսնեմ, այս սրտեղից է քեզ այսքան փողը:

— Թագաւորից, մօրաքոյր, թագաւորից, առանց փող վճարելու գնալու եմ դպրոց ուսանե-

լու, այս բոլորը իմ որսի շան շնորքով: Բնա, հիմե
կնց ու զարմացիր, ամենդ էլ ինձ անազ էիք
անում, քամի կուլ տուող կանչում, երբ ես շնա-
պահ տղերանց հետ շրջում էի. այս տեսնելուց
ետը ինչ ես ասում, հըր: Տեսնում ես, մօրաքոյր,
զուր չէի ասում թէ ժամանակը ոսկի է: Եթէ ես
ժամանակս օգտաւէտ դարձնելու տեղ ուրիշների
պէս պարապ-սարապ ման գայի, այս օրհնու-
թիւնը ոնց ասին կըթափուէր: Թագաւորապը
իրաւունք ունէր, Աստուծոն հազար փառք, որ
նրան ինձ հանդիպեցրեց ու իմ աչքերը բացանել
տուեց:— Ժամանակը ոսկի է, մօրքոյր ջան, հէնց
այսօրուանից աշխատելու եմ ոսկի դարձնել: Մա-
զաչափ չեմ կասկածում, որ ժամանակը ոսկի է,
մինչև մահ մեռնելս այս մտայնողը չեմ:

Մօրաքոյրը նրա ասածը հալած իւզի տեղ
չընդունելու համար գլուխը օրօրում էր. բայց
10 նախշուն ոսկիքը այնքան գուլթ դեցեցին նրա
սիրտը, որ դպրոց գնալու դէմ առարկութիւն
չարեց: Իւր մարդն էլ համաձայնեց, միայն այն
պայմանով, որ Լոպպին դոմի ծառայութիւնները
աչքութող չանի: Այսպէս Լոպպին հասաւ վերջա-
պէս այն բանին, ինչ որ երկար ժամանակ իւր
սրտի փափագն էր եղել: Գնալու էր դպրոց, որ
ուսանի, որ իւր թանկագին ժամանակը ոսկի
դարձնի: Այդ մտածելով ուրախութիւնից քիչ էր
մնում խելքը թոցնի: Բայց չէ, նա միայն բազ-
դաւսր մտքերի մէջ լող էր տալիս:

Ե.

Ի

Մի առ ժամանակ Լոպպու գործը չափից
դուրս լաւ էր. կանոնաւոր կերպով յաճախում էր
դպրոց, առանց քաշուելու կամ ամաչելու նստում
էր ամենացածր տեղը մանր երեխանց մէջ, որոն-
ցից գլխով բարձր էր: Այնպէս շանասիրութիւնով
էր ուսանում, որ նրա վրէն ուսուցիչներն էլ էին
արմացած մնացել, ինչ թէ դասընկերները: Մանր
տղէքը սկզբում նրա վրայ ծիծաղում, մեծ պա-
տանուն անազ էին անում, որ ընթերցարանը ձեռին
ու քարէտախտակը առաջին նստում էր, ինչպէս
մի հսկայ գաճաճների մէջ, բայց շուտով պատ-
կառանք զգացին Լոպպու առաջ. տեսան որ ի-
րանց չարացները բանի տեղ չի դնում, սկսան
նրան սրտանց սիրել: Լոպպու յառաջագիւմելու
քայլերը ուրիշ էին. փոքրների մէջ երկար չըմը-
նաց. թեւաւորուածի պէս իրար ետնից թողնում
էր ստորին դասարանները: Հասաւ իւր հասակա-
կիցներին. շուտով նրանց էլ թողեց, անցկացաւ
ու վերջը պատկերն այնպէս փոխուեց, որ Լոպ-
պին ամենամեծը համարուելու փոխարէն իւր դա-
սարանում ամենափոքրն էր: Մի քառորդ ժամ
զուր չէր կորցնում. արեւը ծագելիս, թէ մայր
մտնելիս նրան գործի վրայ էր գտնում. շատ ան-
գամ գիշերուայ կէսն անց պոկ չէր գալիս գրքե-
րից, եթէ ցերեկով իրափանառիթ էր լինում: Ու-
սում առնելու հետ հարկադրուած էր դոմի գոր-

ծերն էլ կատարել, այդ բանը խոտութիւնով պահանջում էր իւր խնամակալը:

Ուղիղ է, ուսման վարձ չէր վճարում Լոպպին, բայց ուրիշ կարիքներ կային հոգալու: Նրան գրքեր էին պէտք, անհրաժեշտ հագուստեղէն. դրանք ամենն էլ փող արժէին. մի կերպ պտէին ճարուիլ: Խնամակալները նրա համար ոչինչ չէին առնում, ինչ պտէր՝ անիլ Լոպպին. գրքերը աչքաթող անելու բաներ չէին, հագնելիքը նմանապէս, բորիկ ոտներով, գոմի քաթանէ կեղտոտ բաճկոնը ուսերին ինչպէս մի շնապահ տղայ, չէր կարելի միշտ դպրոց գնալ: Լոպպին այժմ փոշմանում էր, թէ ինչո՞ւ թագաւորից ստացած 10 ոսկին տուեց մօրաքրոջը, չէր կարում նրանից մի սև փող առնել. նեղութեան մէջ տապալուում էր: Գրքերը կարող էր մի կերպ դասընկերներից ուղել ու կառավարուել, բայց հագուստ ճարելու համար ո՞ւմ դիմէր, գլուխը ո՞ր քարով տար: Գոմի հնացած բաճկոնը ուժ չունէր, մաշն էր ընկել. բոլոր տղէքը դասարանում հագուած էին մաքուր, վայելուչ. չալ եզան պէս ջոկնուողը միայն Լոպպին էր: Այս հանգամանքը նրա սիրտը տակն ու վրայ էր անում. իւր կեղտոտ ու անկարգ հագուստից ինքն էլ էր ամաչում. ոչ ոտները ծածկելու կոշիկ ունէր, ոչ գլխին դնելու գտակ: Միշտ այն էր մտածում, թէ ինչ անի, որ կարենայ այդ պակասութիւններից գոնէ ամենաանհրաժեշտը հոգալ: Վերջապէս մի մեջոց գտաւ: Այդ միջոցը

նրանից օրական խլում էր երկու ժամ, դրա փոխարէն գիշերից էր պոկելու, որ դաս սովորի: Գնաց ձի վարժողների մօտ ու առաջարկեց. — ո՞վ կուզի, որ նրա ծառայութիւնն անեմ ամենաչնչին դնով: Մէկը ընդունեց առաջարկը ու պայմանը գըլուխ եկաւ: Լոպպին կրկին սկսեց ձիավարի պաշտօնը կատարել: Ուղիղ է, ամեն մի ժամի համար շատ փոքր վճար էր ստանում, սակայն այդ սև փողերը տնտեսելով կարողացաւ երկու ամսու վերջը մի ձեռք նոր հագուստ գնել գալրոցի համար: Այս բանը մի յաղթանակ էր նրա համար. նոր կոշիկները, գլխարկը, բաճկոնը լցրել էին նրա սիրտը բերկրանքով — կարծես թագաւորութիւն ընծայ ստացած, չէր կարում իւր ներսի ցնծութիւնը զսպել. դասարան մտաւ, ընկերները զարդարուն հագուստի մէջ Լոպպուն չճանաչեցին, ապա գլխի ընկներով իրանց հիացմունքը, ուրախութիւնը հարա հուրոցով արտայայտեցին: Այդ օրը Լոպպու համար տօնի պէս էր. ցածր ու կամաց կրկնեց նշանաւոր խօսքերը, որ նրա սրտում անջնջելի տպուած կային. — Ժամանակը ոսկի է, ուսածը կորած չի, կամ ինձ պէտք կըգայ կամ ուրիշին: Կրկին ուխտ արեց, որ իւրաքանչիւր վայրկեան ժամանակ արդիւնաւոր գործադրի:

Ամեն օր կարելի էր նրան ձիու վրայ տեսնել. համ ձի կրթողի պաշտօնն էր կատարում, համ կառապանի, համ գոմի սպասաւորի տեղ բռնում. դրանք աւելի քնով էին զբաղւում քան գործ կա-

տարեւոյ: Ստացած մանր փողերը իրար էր գցում, որ ամենակարևոր ծախսերը հողալու գումար ունենայ: Վերջերը լինում էր շարունակ գոմում, զանազան յանձնարարութիւններ էր կատարում: Օր օրի վրայ ձեռ բերեց ձի սանձելում, կառք բանացնելում այնպիսի ճարպիկութիւն, որ իրան մրցակից չունէր. այս հմտութիւնն էր, որ մի սիրուն օր նրան պէտք եկաւ, նրա բազրի սիւնը անկեց: Ահա թէ անց:— Թագաւորի ախոռապետը նոր ձիան էր գնել ու նրանց հետ մի արաբական մատաղ նժոյգ, աննման գեղեցկութեան ու անսովոր կրակի տէր: Քուռակը յանձնուեց առաջին ձիավարին, որ ամեն հող տանի, կարգին մանգալը, արշաւելը սովորցնի, նստկան ձի դարձնի: Թագաւորի մտադրութիւնն էր՝ այն իւր գործածելու համար պահել: Ձիավարժը խոստացաւ ձեռքից եկածը անել: Քուռակը թամբած, սանձը բերանին բերին կրկէս. վարժութիւնն սկսուեց ու 10 րոպէ չքաշած մեր ձիավարին շարդուած, կոտրատուած անդամներով տարան իւր տուն: Անսանձելի անասունը մէջքից վէր զցելով խփեց պատի ճակատով ու ազին ցից փախաւ: Երբ այդ եղելութեան մասին ախոռապետին տեղեկացրին, ասեց.— մարդը շնորք չունի, քուռակը տուէք միւս ձիավարին:

Այսպէս արին հետեւեալ օրը ու վայրենի քուռակը երկրորդ ձիավարին էլ շարտեց, զցեց առաջի վրայ ու մի քանի քայլի ուտացնելով կուռը

կոտրեց: Նրան էլ բազմաքաղած տարան տուն:

Երրորդ ձիավարժը պտէր խնդիրը լուծիլ, կատաղի կենդանուն սանձիլ: Սակայն նա էլ նոյն պատուին արժանացաւ ինչ որ իւր նախորդները, թամբից վէր զցեց ու քաշ տուեց, երեսմերեսը պլոկուեց. ծունկը, գափերը քերուեցին, ամենաքիչը մի շաբաթ կաղի էր տալու:

Ախոռապետը ճակատը խոժուեց, երբ նոր ձիավարութիւնները լսեց.

— Մարդիկն իրանք են մեղաւոր իրանց դժբաղդութեան համար, անզգոյշ, շնորքից խռոված արարածներ են. պէտք է ձիավար սպասաւորներին կանչել:

Եկան սպասաւորները:

— Ձեզանից ո՞վ է վստահ իւր վրայ, որ արաբական քուռակը նստի, ման գալ սովորցնի, հարցրեց ախոռապետը:

— Ե՛ս, ասեց մի հողի:

— Ե՛ս էլ, ասեց երկրորդ հողին, միւսները ձայն ծպտուն չհանելով ետ քաշուեցին:

— Լսւ, ձին բերէք դէսը, այս անգամ ես ներկայ եմ լինելու վարժութեանը:

Նժոյգը բռնած կրկին բերին կրկէս. առաջին սպասաւորը թռաւ թամբի վրայ: Դեռ, ով գիտէ, նստել չէր, մէկ էլ տեսաւ իրան ներքև գետնի վրայ փռուած, իսկ քուռակը խրխնջալով, քաշը թափ տալով չափ էր ընկնում կրկէսի այս ու այն կողմը:

—Սա իստակ դազան է եղել, հառաչեց խայտառակուած սպասաւորը, իրան հաղիւ վեր քաշելով ու կողքից բռնած հեռանալով, հիմի եթէ հարիւր թալեր էլ տան, նրա մէջքին նըստողը չեմ:

—Գլխիդ դու մի տալ, վրայ բերեց ախոռապետը շարացած, չի կարելի ուրանալ, որ ձին քիչ վայրենի է, բայց շնորհալի ձիավարը կարող է նրան հեշտ սանձահարել, դրա մէջ կասկած չունեմ: Ի՞նչ մտքի ես դու, Գոտֆրիդ, ուզում ես փորձել, թէ չէ:

—Փորձելը փորձելու եմ, ողորմած տէր, պատասխանեց երկրորդ սպասաւորը տարակուսական դէմքով, բայց թէ ո՞նց կը վերջանայ, այդ Աստուած գիտէ, շատ ձիան եմ հեծել, այսպիսի կապկոտոր գազան դեռ չէ: Փորձեմ, ինչ կը լինի, կը լինի:

—Սրանով կաց, Գոտֆրիդ, ասեց ախոռապետը. եթէ քեզ աջողուի քուռակին կտորել, առանձին վարձատրութիւն ես ստանալու, միայն վատահուժիւն ունեցիր: Ամօթ էլ է, եթէ թագաւորի գոմուը մէկը չը լինէր այսպիսի ձիուն սանձահարող:

Արարական քուռակը կրկին բռնուել էր. երկու ծառայ սանձից աջ ու ձախ ամուր պահում էին. հանդարտ չէր կանգնում, ծառս էր լինում ամենի կերպով, աւազը սմբակներով շպրտում, քամուն էր տալիս ու խոշոռ աչքերից հրեղէն

խրձեր թափում: Արագ մտեցաւ սպասաւորը ու խիզախաբար իւր գործն սկսեց. թամբի վրայ ամուր տեղաւորուելուց ետը ծառաներին ձայն տուեց, որ սանձը թողնեն: Ինչ որ շնորք ու ճարպիկութիւն ունէր, հանդէս բերեց: Մի քանի րոպէ մնաց թամբի վրայ ուշ չը դարձնելով ձիու կատաղի թռչքներին: Արդէն ապահով էր, որ խաղը տարել է, մէկ էլ յանկարծ արաք քուռակը ետի ոտները բարձրացրեց, մոմի պէս օդի մէջ ձգուեց ու ձիաւորի հետ քամակի վրայ թրըխկաց: Ո՞վ այդպէս բան կը մտածէր: Փռուալէ ու խրխնջալէ ձին վեր թռաւ տեղից, խեղճ ձիավարին թողելով գետնի վրայ ուշաթափուած:

—Սա իսկական դեռ է եղել, ունքերը կիտելով գոռաց ախոռապետը, ուզում է մեզ խայտառակի. դէ, սպասիր, փուչ անասուն, աչքդ հանելու եմ ու ինքս հեծնելու, այժմ կտանանս: Սանձակոթով այնքան գլխիդ հասցնեմ, որ խելքի դաս ու իմ մարդկանց գետնով խփելը մոռանաս: Բռնեցէք դէսը բերէք, որոտալով հրաման տուեց:

Փուռակը անկարող էր անթիւ սպասաւորների, ծառաների ձեռից դուրս սլքուել. խըրտնած դէս դէն ցատքոտելուց ետ բռնուեց ու բերուեց ախոռապետի առաջ: Սա հերսոտած հեծաւ, ասպանդակները թունդ քաշելով կողքերը մղկրտացրեց, դրա հետ էլ մտրակի խիստ հարուածներ արաքացրեց փորի տակին ու սանձը ձեռ հաւաքած ամուր պահեց: Ազնուարիւն ձին

այդ կոշտ ու կոպիտ վարմունքով առաւել կատաղեց, կողքի վրայ փըրթ մի ամենհի ոստիւն արեց, մի քանի ծառաների ոտնատակեց, իրար գլխով տուեց, մեր ախոռապետին տաշեղի պէս մէջքից դէն շարքեաց, թափն անելով ծլունդ եղաւ կրկէսի պատնէշի գլխով, թռաւ միւս կողմը ու չափ ընկաւ իւր կաճքին ազատ ու արձակ:

Ախոռապետի կատաղութեանը չափ չկար: Ուղիղ է, ոչ ոտն էր կտրուել, ոչ կուռը, բայց կերած սպաստից գնաւ էր մահի դռան մօտեցել: Իւր ստորագրեալների աչքի առաջ թափքի միջից թրխկալէ գետին ընկնելը, իբրև մեծահաւան ախոռապետ մի ձիուց պարտութիւն կրելը, այնքան անտանելի ամօթ բան էր, որ քիչ էր մնում հերոսից արաքսի:

— Գազանը բացի փորձանքներ բերելը ուրիշ բանի պէտք չի, դայրագնած խօսեց նա, փոշուժ թաթախուած հագուստը թափ տալով: Ուրիշ ճար ու ելք չը կայ, նրան հարկաւոր է սպանել: Է. յ. ծառաներ, հրաման արեց իւր մարդկանց, վազէք ստորճանակս բերէք: Երբ ճակատի մէջտեղը մի գնդակ բաց կը թողեժ, նրա քաջքոտ գլուխը խելօք կենալը կը հասկանայ:

Չայրացած մեծաւորը լուրջ էր ասում: Ստորճանակը բերին: Բաւական միջոց կալ հա կալ անելուց ետ կրակ կտրած արաբական քուռակին ճանկ գցած բերին: Ահագին բազմութիւն վազելով հետաքրքիր դալիս էր ետնից. վայրենի

քուռակը սանձարձակ, ագին ցից արչաւելով, բուրբ փողոց աւտրներին ստի էր կանգնացրել:

— Բերէք գազանին այստեղ ինձ մօտ, ազադակում էր ախոռապետը, հարկաւոր է դրա հետ հաշիւը վերջացնել, որ մարդկանցս գլխին փորձանքներ չը բերի:

Սպասուորներից մինը սիրտ արեց, համեստութեամբ հարցրեց.

— Բայց թագաւորն ինչ կասի, եթէ ձին սպանէք:

— Այդ իմ գործն է, դրա պատասխանատուն ես եմ, խօսեց ախոռապետը դողողաբար: Եթէ ձեր մէջ կայ մէկը, որ նզովուած անասունին կտորել կարող է, թող առաջ գայ:

Ամենն էլ լռուեցին, որմին սիրտ չարեց բազդը փորձել, ամենասրտատները գլուխնին շարժելով ետ ետ էին դնում:

— Ուրեմն ոչ ով չը կայ, հարցրեց վերջին անգամ ախոռապետը: Այդ լաւ դիտէի, դէ, մօտ բերէք ձին:

Ծառաները հնազանդուեցին: Ախոռապետը ստորճանակը ձեռին հանել էր վերի ոտը ու փողի բերանը դէժ արել ազնուարիւն անասունի ճակատին, մնում էր մի վայրկեան, որ ոտը քաշի ու ամեն ինչ կարճ վերջացնի—պատահմամբ Լոպպին դպրոցից գալով գրգռելը կոնատակին այնտեղ լոյս ընկաւ.

— Ահա Լոպպին, ինչ լաւ ժամանակ եկաւ,

գոչեց գոմի ծառան, եթէ արաբական քուռակը սանձահարելու հնար կայ, սրա ձեռով կըլինի:

Ախոռապետը այդ լսելով իսկոյն ատր ճանակը վէր թողեց: Հանաք բան չէր մի ձի սպանել, որ հազար ոսկի փող աժի. դիակէր թագաւորի խնայող բնաւորութիւնը, զուր տեղը հազարներ լուսամուտից դէն դցող չէր:

— Լոպպին, ա՛ն, փառք Աստու, աղատ շունչ քաշելով խօսեց Խսոռապետը, բոլորովին մտէս ընկել էր ճարպիկ Լոպպին: Մօտ եկ, տղաս, կառող էս արաբ ձին հեծնել:

— Ինչո՞ւ չէ, վրայ բերեց եղելութիւններին անտեղեակ Լոպպին, ի՛նչ դժուար բան է սր:

— Շատ դժուար է, Լոպպի, զգո՛յն կաց, լըսելի եղաւ մի ձայն բաղմութեան միջից, բոլոր ձիավարժները, սպասաւորներն ու Խսոռապետը փորձել են ու չեն կարացել սանձահարել:

Լոպպին լսեց այդ խօսքերը և ուշ չդարձնելով ուսերը շարժեց.

— Ուզում եմ բաղդս փորձել, պարոն Խսոռապետ:

— Շատ լա՛ւ, քո՛յ տղայ, ասպանդակիր, մըտրակիր որքան կուզես:

— Ո՛չ, ո՛չ, տէ՛ր, թող միայն մէկը գրքերս վերցնի պահի. ես ցանկանում եմ նոր բաձկոնս հանել, որ չը կեղտոտուի, եթէ բան է թամբից ներքև գլորուեմ. մի վայրկեան համբերէ՛ք, իսկոյն գնամ գոմից բրդէ շապիկս բերեմ:

Մի հարուստ անգլիացի որ անցքին ներկայ էր եղել, շընչաց.

— Տէ՛ր, մեղայ քեզ, Աստուած, ի՛նչ խիղախ պատանի է, սպասեմ, տեսեմ ի՛նչ վերջ է ունենում:

Լոպպին շուտ վերադարձաւ հագուստը փոխած ու աներկիւզ մօտեցաւ վայրենի ձիուն: Սա դեռ աչքերը ոլորում էր, առջևի սմբակներով գետինը ծեծում: Լոպպին քաղցրութեամբ շոյշոյեց նրա գեղեցիկ գլուխը, վիզը տափտափեց ձեռով, տփրջո՞ ու այլ հանգստացնող խօսքեր արտասանեց ու ձեռքսելով աչքերին բաւական հանդարտեցրեց:

— Կեցցէ, գործը լաւ է տանում խելօք պատանին, շընչաց կրկին անգլիացին, խստութիւնով այդպէս ձիուց չի կարելի ոչինչ շահել, սպասեմ, տեսեմ: Այո՛, լաւ է սկսել, շատ լաւ: Տէ՛ր ողորմած Աստուած, այս ինչ քաջասիրտ պատանի է:

Լոպպին աչքով անելով սանձ բռնող սպասաւորներին հեռացրեց, ինքը արագ ու թեթեւ վեր թռաւ ու թամբի մէջ նստեց: Վայրագ, գեղեցկաաես արարածը քիչ հանդարտուած էր Լոպպու անուշ վարուեցողութիւնով, հէնց որ զգաց նրա ծանրութիւնը իւր մէջքի վրայ, միտ բերեց իւր հետ պատահած կոշտ վարմունքները և իւր բոլոր անսանձ վայրենութիւնը: Մի ահարկու թռիչք արաւ, թափահարեց, ետի ոտները

վրայ ծառս եղաւ, փռուացրեց: Ջանք էր անում սոսկալի մոլեգնութեամբ իւր հեծեալից աղատուել: Լոպպու միտքն այլ էր. սանձը ձեռին հանգիստ ու պինդ նստած էր թամբի մէջ կասես վրէն բսած. փոխանակ խփել-ջարդելու կամ տաքացած անասնի փափուկ կողերը ոտի ծայրերով հարհրելու, տրտրելու, մեզմ փայփայում էր նրա վրէն ու ծոծրակը ու թողում էր, որ սրտի ուղածի չափ թռչկոտայ: Երբ ձին ետի ոտների վրայ բարձրացած հէնց այն է մէջքի վրայ պարան էր ընկնելու, Լոպպին շտապով թեքուեց դէպ առաջ ու թաշկինակով նրա աչքերը կալեց: Ջին իսկոյն իրան ուղղեց ու չորս ոտի վրայ կանգնեց: Ճշմարիտ է, փոսնզը անցաւ, բայց դա դեռ խաղի վերջը չէր, ամենի փռուցով այժեամի պէս ծլունգ եղաւ, մէջքը աղեղի պէս կորացնելով, կատաղի ոստիւնի միջոցին ոտները փորի տակ ծալեց, կուշ ամեց, յուսարով այս հանգով գոնէ հեծեալին իրանից դէն գցել, սակայն աւելի փրփրում կատաղում էր, որ սանձարձակութիւնները նպատակին չէին հասցնում: Լոպպին թամբի մէջ նըստած ժպտում էր: Վերջը արաբ քուռակը գլուխը թափթափ անելով սանձը ատամի տակ գցեց ու քամի առածի պէս փախս առաւ: Լոպպին թողեց իւր կամքին, ոչ կապն էր քաշում և ոչ կանգնեցնելու ջանք անում.— չափ ընկիր, որքան ուզում ես, վերջը դու ես յոգնելու, ասում էր ինքն իրան: Այդպէս էլ եղաւ: Երբ որ ձին նկատեց, որ

ոչ իւր քափ ու քրտինքում մտնելն է օգնում, ոչ հերսոտելը, ոչ խրանած կապլոտոր փախչելը, կամաց կամաց չափաւորեց իւր վաղքի թափը ու վերջապէս ենթարկեց իրան Լոպպու սանձին. յաղթուած արաբ քուռակը ճանաչեց իւր հեծեալին իբրև իւր տիրոջ ու հրամայողի: Ջին չափ դցած Լոպպին գնաց ցնձագէմ դէպի գոմի կողմը, ետոյ ապուշ դառած հանգիստականների առաջով արշաւեց ներքև, վերև, կամաց, սինդ-սինդ, ճոխտլափակ, սնց որ սիրտն ուզում էր: Ազնուարիւն ձին պարում էր նրա տակին, սնց որ մի խաղատիկին:

Վերջը Լոպպին իջնելով ուրախ տափտափեց ձիու պարանոցը ու ասեց ախոռապետին.

— Օրէս ետը փոսնզ չը կայ, սա այժմ այնքան մեղմացել է, որ Գոտֆրիդն էլ կարող է հեծնել:

— Այն, այն, սիրելի Լոպպի, շատ ուրախ եմ որ այսպէս հեշտ սանձահարուեց: Եթէ երբեմն քուռակի վրայ աչք ունենայիր, աւելի պարտաւորած կը լինէիր ինձ: Ահա ստացիր առ այժմ քու քաշած նեղութեան վարձը:

Մի պսպղան հաստ թալեր դրեց Լոպպու ափի մէջ. սա ցնձուն երեսով գրպանը դրեց արծաթը, այն ինչ անգլիացին ամենը լսած ու նըշմարած լինելով գլուխը թափահարեց.

— Այս նորփուածին մտիկ, միայն մի թալեր է տալիս խեղճ պատանուն, որ ոչ միայն կեանքը

փորձանքի մէջ դրեց, վայրենի անասունի հետ պատերազմեց, այլ և թագաւորի գեղեցիկ ձին կրկին իրան ընծայեց: Այն անխիղճ ճիւղէն ա չըսանձահարէր, ձին գնդակահար էիր անելու, հազար ոսկին ջուրը գցելու: Այս բոլորի փոխարէն իբր վարձատրութիւն միտոյն մի ուղորմելի թալեր ես տալիս: Աստուած նորովի քեզ:

Անգլիացին վերջին խօսքերը բարձրաձայն արտասանեց ու ձեռի ոսկեգլուխ փայտով Լոպպու ուսին կամաց դիպաւ: Սա շուռ եկաւ ու կանգնեց գէմ առ գէմ:

— Պարոն, անգլիերէն խօսել դիտէք:

Լոպպին գլուխն օրօրեց:

— Ափսո՛ս, ասեց անգլիացին: Համբերէք, երկու ձի ունեմ, չէիք կամենալ նրանց լծի վարժել, դրա համար ձեզ լաւ կը վարձատրեմ:

— Ինչո՞ւ չէ, մեծ սիրով, պատասխանեց Լոպպին:

— Երբ այդպէս է, եկէք հետս, գնանք իմ ընակարանը:

Լոպպին հետեւեց անգլիացուն, ընդունեց երկու հրաշալի ձի ու կրթել սկսեց: Յանձնարարութիւնը կատարելով ստացաւ Լորդ Բրիջվատերից տուտ վարձատրութիւն:

— Շատ դո՛հ եմ, ձիանը լաւ են վարժած, ամեն մէկի համար տալիս եմ քսան ոսկի, բաւական էք դրանով, թէ ոչ:

Ազնիւ Լորդը հարցնում էր, արդեօք Լոպպին

բաւական է ստացածով: Էլ ասելու տեղ կ'որ. խնդութիւնից թուաց նրան, թէ երկինքն ու երկիրը գլխին պտոյտ են դալիս, երբ այնքան փոքր առաջը դարձած տեսաւ:



— Կեցցէ թագաւորազը, ասեց ինքն իրան, նրա ասածը ուղիղ է, միշտ ուղիղ, ժամանակը

ուսկի է, ուսած սովորած բանը չի կորչում, պէտք է գալիս: Կարծատե ձիավարութեան շնորհով այնքան փող ստացայ, որ երկու տարի հոգս չեմ ունենալ:

Անգլիացին Լոպպու մտմտոցը ընդհատելով ասեց.— ափսոս, որ անգլիերէն խօսել չըգիտէք. իմ մօտ ծառայութեան կընդունէի, ամեն տարի շատ փող կըտայի: Յաւում եմ, շատ եմ ցաւում: Եկող շաքաթ ուղեւորում եմ, մնա՛ք բարով:

Այնպէս շշմուած էր Լոպպին իւր բազդաւորութիւնով, որ հազիւ կարայ բերանից շնորհակալութեան երկու խօսք հանել: Լորդի խօսքերը նրա վրայ խոր տպաւորութիւն էին արել. նրան «գնա՛ք բարով» ասելուց ետք, նրա խօսքերը շարունակ կրկնում էր. «ափսոս, որ անգլիերէն չգիտէք, շատ ափսոս»:— Այն, ի հարկէ ափսոս, ասում էր ինքն իրան Լոպպին, եթէ անգլիերէն իմանայի, լորդ Բրէյվատերի մօտ ծառայութեան կըմտնէի, լաւ ուճիկ կստանայի, աշխարք կըտեսնէի, բան կըսովորէի: Այժմ այդ բոլորը կորած է:

Քիչ լռելուց ետ ինքն իրան խրախուսեց.— այ մարդ, փող հօ ունես, ուսուցիչ վարձիր, անգլիերէն սովորիր:— Համբերիր, Լորդ, Լոպպին այդ էլ կանի, ուրիշ անգամ երբ գաս մեր աշխարքը, զարմանալու ես: Խօսքս խօսք է, ես մարդ չեմ լինիլ, թէ անգլիերէնի հետ ֆրանսերէն էլ չը սովորեմ: Լորդի տուած փողը գրա համար բաւական է: Թագաւորազի ականջը

կանչի. հաւատացնում էր որ սովորածը կորած չի, գնամ ու սկսեմ, վճիռս վճիռ է:

Լոպպին շատ էր բարեսիրտ, դրամից կրկին մաս հանեց իւր խնամակալներին, երկու երրորդը պահեց իւր ծոցում ուսուցիչներին վճարելու համար: Սովորում էր անգլիերէն ու ֆրանսերէն զարմանալի եռանդով, ոչ մի ազատ ժամ չէր կորցնում. բացի քնից կտրելը, ինչ որ դպրոցի աշխատանքից ժամանակ էր աւելանում, գործ էր ածում օտար լեզուների վարժութեան վրայ: Կարևոր փողը կար, վճռեց ձի վարժելն ու կառք վարելը թողնել, որ ժամանակը զուր կտոր կտոր չանի, ուստի գոմ գնալը դադար տուեց: Հետզհետէ նկատում էր, որ այն էլ իրան տեղը չի: Խնամակալը յանդիմանում արանջում էր, բայց Լոպպուն ստիպել չէր կարող. սա իւր դրամի միջոցով անկախ էր դարձել, մօրաքրոջ տանը ստացած ամեն բանի համար կանխիկ վճարում էր: Այդ հանգամանքը նրա աչքը աւելի բաց արեց, նա հասկացաւ, որ ոչ միայն ժամանակը ոսկի է, այլ և ոյժ է: Եկել էր այն եզրակացութեան, որ անկախ ու ինքնակամ մարդ դառնալու համար հարկաւոր է աշխատել և ուսանել: Ամեն տեղ, դըպրոցում թէ տանը աշխատում և ուսանում էր: Դարձաւ իւր ուսուցիչների աչք աշակերտը. անգլիերէն ու ֆրանսերէն խօսում էր՝ ոնց որ իւր մայրենի լեզուն: Այդպէս յափշտակուած ուսման մէջ առաջ գնալով մէկ օր յանկարծ նկատեց, որ բոլոր փողը

մտխուրէլ, մնացել է թագաւորազի ընծայած ոսկին, որը փայփայելով պահում էր: Ձաշհուրը սիրտը պատեց, բայց որովհետեւ նա արդէն նեղ օրերի ընտելացած էր, առանց արիութիւնը կորցնելու սուս փուս նստեց իւր սենեակի անկիւնում, վիճակը ծանր ու բարակ վերուդիր արեց, թէ ինչ անի, ինչ չանի, որ այսպէս ջանասիրութեամբ գործադրած ժամանակը կրկին ոսկի դարձնի:

2.

Լոպպին միտք էր անում, չէր իմանում, ինչ բանից սկսի. մտաւոր զարգացումն այնքան էր. որ կարող էր համալսարան մտնել, այդ բանն էր նրա սրտի փափագը, ամենից շատ դրա վրայ կանգ առաւ. բայց միջոցը, անիծուած միջոցը չկար. սրտեղից նա ուսուցչապետներին փող տար, հարկաւոր գրքերը գնէր, իւր ապրուստը հոգար երեք չորս տարի շարունակ: Սրանք դժուար հարցեր էին, Լոպպու վիճակ ունեցողը հեշտ չէր կարող վճռել, լուծել: Խնամակալները նրան օգնելու, ձեռ բռնելու հնար չունէին. Լոպպին պարզ տեսնում էր, որ ուղղակի ծանր բեռն է նրանց վրայ. հարկադրուած է վճարել կերակրի, բնակարանի համար. եթէ չը վճարի, այլ ևս նրանց մօտ մնալու երեսատեղ չունի: Կարճ՝ նրանց վրայ յոյս դնել չէր կարող, հազիւ քարին քացի տալով խեղճերը ապրում էին: Լոպպին այլ ևս երեխայ չէր, երիտասարդ առողջ մարդ էր, սա-

զում չէր նրան ուրիշի վզին բեռ դառնալ, այնքան ուժեղ էր, որ կարող էր ամեն ինչ իւր գլխի համար հոգալ: Նրա միտքն էլ այդ էր, բայց մնաց, ինչ կերպով. ահա հարցը:

Լոպպին մտածում էր դէս, մտածում էր դէն, ելք չէր գտնում.— Ի՞նչ անեմ, էլի դոմ վերադառնամ փող վաստակելու, հարցնում էր ինքն իրան:— Չէ, էլ ինչ կը սաղայ սիրուն գիտելիքներով լեցուն գլխիս, որ գնամ դոմի կոպիտ տղաների հետ կեանք վարեմ, ձիան թիւ մարեմ, նրանց տակը քերեմ, չէ, ինձ հարկաւոր է գիտութեան, ուսման շաւիղներում մանգալ, նրանց հիւթն ու ճաշակը վայելել: Ա՛րի թագաւորազին նամակ գրեմ, նպաստ խնդրեմ, յիշեց նա յանկարծ: Այս խիստ լաւ միտք է, բայց ինչպէս իմանամ թէ այժմ սրտեղ է ապրում: Հէնց ասենք— այդ մի կերպ տեղեկացայ, ինչ շահ, ինչ օգուտ, այսքան ժամանակ թագաւորազի յիշողութեան մէջ մնացած կը լինեմ: Նրա գործը հատել է ինձնով հետաքրքրուի, որ շատ տարի առաջ իբրև անպիտան տղայ հանդիպել եմ: Չէ, դրանից շահ չկայ:

Մի փայրկեան Լոպպու ուշը ընկաւ թագաւորի վրայ.— նա հօ ամենեւին ինձ չի ճանաչիլ, որսի շան դէպքը անկասկած վաղուց մոռացած կը նի. ինչ իրաւունք ունեմ նրանից շնորհ սպասելու, քանի որ շունը չեմ ընծայել, այլ վաճառել եմ: Չէ, թագաւորից էլ յոյսդ կտրի, Լոպպի, խօսեց ինքն իրան ու մնաց ձեռները կցած, մըտ-

քի ծովն ընկած:—Ի՞նչ անեմ, ինչից սկսեմ, ոչ ովի ուղորմութիւն չեմ ուզում, ինքս ինձ օգնել եմ՝ ուզում, գլխակախ փնթփնթում էր նա ու ճակատը շփում: Անթիւ անգամ վհատութեան քրտինքը ճակատից դէն սրբեց, որ ծծուկ ծծուկ բղխում էր: Բայց չէ, կամաց կամաց կռները թուլացան, արիութիւնը ընկճուեց. յոյսերը ջարդ ու փշուր տեսներով տխրագին հառաչեց— ամբ, իմ թագաւորն ա, վերջը տեսնում եմ, որ դու էլ ճշմարիտ խօսք չես հանել բերանիցդ, ժամանակը ոսկի չէ: Իմ հասակի մարդկանցից ո՞վ է ինձնից շատ ուսել, գիշեր-ցերեկ աշխատել. գլուխս լցրել եմ՝ ամեն անգամ գիտելիքներով, ուսուցիչներս հաւատացնում էին, որ ես իրանց ամենալաւ աշակերտն եմ: Ի՞նչ շահ այդ ամենից, նշանակութիւն ունեն իմ ջանասիրութիւնն ու ուսումը, երբ դրանցով մի կտոր հաց չեմ կարողանում վաստակել: Ամենախելացի բանն այն կրկնի, որ կրկին գնամ ձի ու շուն վարժեմ, օրական մի քանի սև փող դատեմ, դոնէ առ ժամանակ սովամահ լինելուց ազատ կրկնեմ:

Իրաւ էր ասում խեղճ Լոպպին. ամենալաւ ելքը դա էր: Խնամակալը իրիկունը տուն եկաւ թէ չէ, սկսեց այսպէս ցամաք խօսել.— Լոպպի, բաւական է, ուրբանքեղ ձրի խնամեցինք. դու կատարելահասակ ես, կարող ես քու կերած հացը ինքդ վաստակել, ուրիշները պարտական չեն իրանց բերանից խլել, քեզ սալ:

Լոպպու վրայ խիստ աղղեց. ամօթից հաղումաչ եղաւ, գլուխը կախ յայանեց իւր յօժարութիւնը, միայն խնդրեց որ ութ օր ժամանակ տան իրան, մինչև կարենայ իւր համար գործ գտնել, կացարան ճարել: Խնդրած ժամանակամիջոցը տուին այն պայմանով, որ լրանալուն պէս անյապաղ փաստփուսէն քաշի, հեռանայ: Խոստացաւ Լոպպին:

Սև դառաւ այդ ութ օրը Լոպպու գլխին, գոթիքի կրակի պէս դաղեց, խեղճին խորովեց: Պատճառը մօրաքոյրն էր, որ շատախօս պառաւի պէս առաւօտ, իրիկու տնազի նիւթ էր շինում, մաստակի պէս ծամում նրան ջուկ, թագաւորազին ջուկ:

— Հը՞, անդէտ, ասում էիր՝ ժամանակը ոսկի է, ոնց չէ... հապա ո՞ր է ոսկին, ո՞րտեղ ես թաղել, որ չի երևում, հա՛ հա՛ հա... Չէ, Լոպպի, քու բոլոր ուսումովդ դու կրկին այն յիմարագըլուխն ես, ինչպէս առաջ: Ո՞ր ձին գլխիդ քացի տուեց, որ անխելքացար, գոմում ծառայելը թողիր, դոնէ այսօր մի հացի կտոր կունենայիր, ստիպուած չէիր լինիլ թուրք կուլ տալով շնչասպառ տանջուել, չարչարուել: Ո՞րտեղից ո՞րտեղ թագաւորազը քեզ հանդիպեց, քեզ պէս ախմար տղի գլխին մեծ մեծ բաներ փչեց: Խելառ տղէն նրա ասածները հալած իւղի տեղ ընդունելով հաւատաց ու իւր բաղբին ստով խփելով փողն էլ, վաստակն էլ ջուրը թափեց: Գնա՛ հեռացիր,

աչքս քեզ չըտեսնի, քու բոլոր ուսումնականութիւնդ տար մածուն շինիր, գլուխդ քսիր: Ժամանակը սոսկի է, չէ՛ չէ՛ մի անմաստ: Հը՛, արծաթ լինի, չես ուզի՛լ, հա՛ հա՛ հա՛: Զգոյ՛ջ քնիր, վեր չը թռչես: Յիմարի սարքած ստեր: Եթէ Ժամանակը սոսկի է, ո՛ւր են քու մեծ հարստութիւնները, չի կարելի՛ հարցնել: Ամեն օր բղաւում էիր— ուսո՛ւմ, ուսո՛ւմ, ոնց տեսնում եմ, վերջը դու քու ուսումնականութիւնովդ ու օտար լեզուներ բլբլացնելովդ գնալու ես ճամբի համար քար կտորելու: Խելառ գլխիդ վա՛ղ տամ...

Ամեն Աստծու առաւօտ դոմի սպասաւորի կինը բան ու գործ էր շինել այսպէս խօսելը: Լոպպին իրան պաշտպանելու տեղ լուում էր, ամեն նախատինք կուլ տալիս: Ի՛նչ անէր, իւր ունեցած գանձերը գին չէին բռնում, օրը վատ տեղ էր մթնել: Սակայն այսպէս երկար տրորուած չը մնաց, տղամարդական արիւնը նորից խաղաց, յուզուեց, ինքն իւր գլխին ասեց.— այ՛ մարդ, աշխարքիս վրայ այսքան մարդիկ մնց են անում, որ առանց սովամահ լինելու ապրում են: Գեռ քեզ համար մի պաշտօն կայ, ուրիշ ոչինչ չըլինի, կարող ես դոմի սպասաւոր դառնալ կամ ձիավարժի մօտ ծառայութեան մտնել. ինչո՞ւ ես ձեռներդ կցել, սրտակոտոր նստել, վիճակդ այնքան էլ անդարմանելի չէ: Մի մարդ, որ իւր ուժերը պատածի չափ ուսել է, երեք լեզուով խօսում է, միթէ՛ չի կարող մի պաշտօն գտնել:

հարկաւոր է սրան նրան դիմել, փնտռել: Զե՛մ կարող դաս աւանդել, չե՛մ կարող վաճառականի մօտ գրագիր լինել կամ սրա պէս մի պարպմունք ճարել: Զուր ես յուսահատուում, Լոպպի. վերկաց, աջ ու ձախ մտիկ արա, ասած է՝ ով ման դայ, կըգտնի, վեր տեղէդ:

Ասեց ու կատարեց, ընկաւ փողոցները երկար ու մէկ չափչըփեց, ներքե վազեց, վերև վազեց, տնից ասուն շրջեց, ոչ կիրակոս թողեց, ոչ Մարկոս, ամենին էլ դիմեց, թախանձեց, որ իրան մի պաշտօն տան, վաստակ անի, և ի՛նչ էք կարծում— ամենն էլ աղանձուեցին, մերժեցին: Մէկըն ասում էր՝ շատ ես երիտասարդ, երկրորդն առարկում էր՝ դքսինի կարիք չունեմ, երրորդն իսկի խեղճի դնչին մտիկ չէր անում, առանց խօսքը լսելու իւր բանին էր գնում: Կարճ՝ ինչ գլուխներդ ցաւացնեմ, բոլորի դռները մնացին Լոպպու առաջը փակ. ութ օրից եօթն արդէն անցել էր, Լոպպին ոչ օթևան էր գտել, ոչ պաշտօն: Ամենասրտոտ մարդն էլ կըվհասուէր, եթէ այս վերջին օրն էլ բոլորուէր, ասելու էին՝ դէ՛հ, դուրս տանից: Խեղճ երիտասարդը մնալու էր փողոցում, չէր կարող տրտունջ անել խնամակալների դէմ, որոնք վճռել էին յամառ տղային պատժել, զգալ տալ, թէ ինչո՞ւ դոմի գործը թողած խելքը, միտքը կարգալուն է տուել: Լոպպին էլ կշռեց, տեսաւ որ միակ ելքը ձիաների մօտ գնալն է: Ուրիշ ոչ մի յոյսի դուռը չկար:

հարկաւոր էր գրքերը դէն թողել, դոմում աղատ
 րոպէ չեն տալ, որ դրանցով զբաղուէր: Էլ ինչ
 զբաղուի, երբ զուր աշխատանք է, փորձով տեսաւ,
 որ ուսումնականութիւնը, գրքերի հետ բարեկա-
 մութիւն անելը նրա կիսի չափ օգտակար չեն, որ-
 քան ձիավարելու համար մարմնական ճարպիկու-
 թիւնը:

Այս մտածողութիւնը կտարեց, նուաասա-
 ցրեց խեղճ Լոպպուն. սիրտը դառաւ սնց որ
 փշուր փշուր եղած ապակի, ողջ մարմնով փը-
 խրուել էր, քիչ էր մնում նստի ու գլուխը լաց
 լինի, թէ ինչո՞ւ այդքան կուլ էր գնացել գրքերին:
 Վիշաք մարդկանցից ծածկելու համար գդակը
 վերցրեց ու շտապով քաղաքից դուրս գալով
 իրան տուեց լեռները, անտառի խորքը, ուր
 միայն ազատ կրճքով շունչ քաշեց: Այնտեղ ոչ
 ոք չկար իրան տնազ անող, ծաղրի առարկայ
 չինող, կարող էր լալ ուղածի չափ, ներսի վիշաք
 քամու բերան տալ առանց մէկի բորբոքելու կամ
 կծու նկատողութեան առիթ տալու: Մի մեծ
 կաղնի ծառ ընտրեց, տակը պարկեց, երեսը
 մամուռի մէջ թաղեց ու այնքան լաց եղաւ, որ
 սրտի փուքը հանեց: Կուրճքը թեթեւացաւ, վէր
 նստեց, նոր ուժ եկաւ վրէն, թարմացաւ: Այժմ
 երբ աւելի հանդարտ սկսեց ապագայի վրայ
 խորհել, գոմի սպասաւորի վիճակը այնքան էլ
 նրան սարսափելի չերևաց:

— Ինչո՞ւ եմ ես այսպէս սրտնեղում. ամօթ

չէ ինձ համար, միթէ ձիուն սպասաւորողը մարդ
 չէ, նա պատուաւոր կերպով չէ իւր հացի կտորը
 ձեռ բերում: Միթէ իրաւունք ունիմ թագաւո-
 րազի դէմ տրտնջալու, թէ ինչո՞ւ ասում էր՝
 ժամանակը ոսկի է: Սովորած ուսումն ու դի-
 տութիւնը հօ բեռը չեն դարձել ինձ ճնշում,
 թո՛ղ մնան, երևի մի օր պէտք կը դան, ինչո՞ւ
 եմ համբերութիւնս կորցնում, այսօր շահ չեն
 տալիս, վաղը կը տան. մի օրում հօ չի շինուել
 Հռոմ քաղաքը: Ամենից խելացին այն կը լինի,
 վաղը գնամ գոմի ձիավարժի մօտ, խնդրեմ որ
 ինձ ձիու սպասաւոր ընդունի, նրանից ետ
 Աստուած աջողած է:

Այդպէս մտածելով Լոպպին ինքն իրան յոյս
 ու եռանդ ներշնչեց, որ ինչ էլ լինի, կեանքի
 անխուսափելի չարիքի դէմ մարտնչի, անվեհեր
 մնայ: Յանկարծ նրա միտը մի բան ընկաւ.
 յայտնի է որ խեղդուողը ծեղին էլ ձեռ է մեկ-
 նում, թագաւորազի տուած ոսկին դեռ մօտն
 էր. անվստահ կերպով ինքն իրան ասեց.—ար-
 դեօք նպատակայարմար չի լինիլ այս ճգնաժամին
 պէտք ածեմ, գնամ պաշտօններ հողացող գրա-
 սենեակը, վճարեմ, որ ինձ համար մի տեղ ճա-
 րեն:—Բայց այդ միտքը շուտով մի կողմը թո-
 ղեց, չէր ուղում ոսկու կտորից բաժանուել, որ
 երկար տարիք խնամքով պահել էր իբր իւր
 խնայողութեան ապացոյց.—չէ, չեմ մտխելու, օրի
 մի օրը թագաւորազը երևի կը պատահի, ես

ապացուցանելու եւ նրան, որ դրամի հետ էլ
այնպէս խնայողաբար վարուել գիտեմ, ինչպէս
ժամանակի: Վճիռս վճիռ է, գնամ ձիանոց:

Արցունքի վերջին կաթիլները երեսից սրբեց,
տեղից վերկացաւ ու քայլերն ուղղեց դէպի բա-
ղաք, գոմի ծառայի ստոր պաշտօնն ընդունելու,
բայց կասես ոտներից արճիճ կապած, չէին ըն-
թանում, հեշտութիւնով չէին փոխուում: Սիրտը
ծանր էր, անտանելի ծանր, ճանապարհը ակա-
մայ կռապատ տուեց ու հասաւ անտառի հե-
ռաւոր անկիւնը, ուր մի ուղղաձիգ սորան, գո-
գաւոր շաւիղ բարձր սարից ձորն էր իջնում:
Ներքե սորանը մի կեռման էր տալիս խոյս տա-
լու համար անդունդից, որ 80-100 ոտնաչափ
խոր էր ու յատակը ապառաժուա: Գլխավէրը
շատ ցիցապարան ու ահալի էր, անտառի մի-
ջից փայտ կրողները, որոնց անցնելու տեղը այդ
սորանն էր, մեծ զգուշութիւն էին գործ դնելու
անդունդի մօտից անվրաս անցնելու համար:
Ուղիղ է, վտանգաւոր տեղերում պատնէշներ էին
չինած, բայց բարձրից մեծ թափով դժուար
կառքին դժուար թէ դիմանային. կամ ընդհա-
րուելիս պատնէշը ջարդ ու փուրդ էր լինելու ու
սրնթաց կառքին աղատութիւն տալու, որ ներքե
անդունդը գլորուի, կամ եթէ դիմանար էլ, այն
ժամանակ ամեն մի կառք հազար փշուր էր
դառնալու, դէս դէն ցրուելու. էլ նստողներին
համար բան չեմ ասում:

Լոպպին անտառամասի այդ ամենավատ ու
վտանգաւոր տեղի վրայ մի քանի բոպէ աչք
ածելով ինքն իւր մէջ դիտողութիւններ էր ա-
նում, երբ յանկարծ հեռուից խուլ գողըռոց,
ակների դրոբուելու ձայն լսեց, որ անսովոր ա-
րագութիւնով մօտենում էր իւր հետ բերելով
օգնութիւն կանչող մարդկային աղաղակներ:
Լոպպու մարմինը սարսըռեց. ծառերի խիտ սա-
ղարթը արգելում էին բան նշմարել, բայց պարզ
լսում էր, որ մի կառք ուղղաձիգ սարալանջից
ներքե էր վազում, անասելի արագութիւնով
մօտենում վտանգաւոր տեղին. օգնութիւն կան-
չող աղաղակը աւելի որոշ էր հասնում Լոպպու-
ականջին, ուր ակների հօրնդիւնն ու սմբակների
սրտփը արդէն խառնըւում էին իրար: Ահա ճամ-
բի կեռմանից դուրս թռչելով երեսաց կառքը,
կայծակի պէս շտապ թռչող երկու ձի, ոտները
գետնից կտրած, քարի, փայտի ու չղարձներով
սրարշաւ գալիս են ուղղակի դէպի անդունդը:
Եթէ երկու բոպէ էլ այդպէս շարունակուի,
կառքը, ձիանը, կառապանը, նստողները—ամենը
սոսկալի խորտակումով վախճան են ստանալու:
Մի վճռական գործողութիւն է հարկաւոր, որ
այդ քամբաղդութեան առաջն առնուի:

Լոպպին վճռեց ձեռից եկածը չինայել: Զիա-
ներին տաքացած թափով արշաւելիս կանգնեց-
նել չէր կարող, անհնար էր:—Պէտք է օգնել,
անել ինչ որ կարելի է, գոչեց Լոպպին ու ա-

աւանց վայրկեան յապաղելու Աստու անունը տա-
լով կեանքը փորձանքի մէջ գցեց: Կառքը փոշի
բարձրացրած գալիս էր, ձիանը քամի առածի
պէս փրփրած թռչում էին. սանձերը սարսափա-
հար կառապանի ձեռից ընկած գեանին քաշ էին
գալիս. ինքը մեռելի դոյն ընդունած, կառքի
գլխին նստած, յուսահատ ճիչերով ձեռները կո-
տրրտում էր: Բաց կառքի ներսը մի տղամարդ-
ու մի կինարմատ էին, առաջինը կառապանի հետ
օգնութիւն էր բղաւում, երկրորդը՝ ջահել աղ-
ջիկ, կէս ուշաթափ ետ էր մեկնուել բարձի վրայ
ու գունատ մարմարի պէս յառած աչքերով լու-
պէ առ ըստ սպասում էր զարհուրելի վտանգի
գիրկն ընկնելու:

Եթէ օգնութիւն գալու էր, հիմի էր պէտք:
Ազնուասիրտ Լոպպին ահ մահ մոռացած վրայ
թռաւ մօտի ծառից մի ձողու չափ ճիւղ ձգեց,
պոկեց ու վազեց դէպի վեր կատաղի ձիաների
գիմաց, բարձրաձայն «է՛յ, տըպը՛ւ, հո՛շ» գո-
ռալով ճամբի մէջ տեղ սիւնի պէս կանգնեց ու
ձեռի տերեւածածկ ձողին օդում ճոճեց: Կրակ
կտրած կենդանիքը ոչ ձայն էին լսում, ոչ մարդ-
տեսնում, կուրացած մոլեգնութեամբ գլորում
էին առաջ: Մի ըստ է՛ս ու խեղճ Լոպպին սրմ-
բակների տակ կխճորուելու էր ու ալկների տակ
տափակուելու, եթէ մի կողմի վրայ փախուստ
չտար: Բայց նա չփախաւ, մնաց կաղնու նման
ամուր կանգնած ու երկրորդ անգամ բղաւեց,

հէ՛յ հէ՛յ, տըպը՛ւ... էլի զուր, փոթորիկ պէս
վրխում էին ձիանը. մի վայրկեանից ետը Լոպ-
պու բանը պրծուած էր, ձիաների շունչը նրան
հասնելու վրայ էր: Ոտների տակ տրտուելուց
առաջ ուղեց կռան ուժը փորձել. իսկոյն և եթ-
ձեռի ձողին օդում ճոճելով կռնատոր վրայ բե-
րեց յոխորտացող անասունների գլխներին: Կայ-
ծակնահար եղածի պէս ձիանը ետ ետ դառան,
մի ըստ է կառքը մնաց հանդարտ կանգնած, ա-
պա գնդակի պէս սլացան խրտնած ձիանը կողքի
վրայ ու ճամբէն թողած անտառի ներսը քաշ
տուին կառքը, առ ժամանակ ուշ չդարձնելով
ոչ թփի և ոչ ծառուտի վրայ: Հեշտ չէր նոյն
թափով առաջ դնալը, ուստի դողալով ու վըռ-
ռացնելով կանգ առան մի շարք կալնի ու թեղի
ծառերի առաջ: Սփարթնած ներքև թռաւ կա-
ռապանը ու սանձերը ճանկեց, Լոպպին էլ իւր
կողմից մօտ վազեց, դռնակը բանալով օգնեց, որ
ալևոր պարոնը ու կէս ուշագնայ ջահել կինար-
մատը կառքից իջնեն.

—Ոչ սրանից մեծ նեղ դրութիւն կըլինէր և
ոչ սրանից մեծ օգնութիւն, խօսեց ալևորը խոր
շունչ առնելով: Մահուան երկիւղից փոքր թե-
թեւացած գիմեց իւր ուղեկցուհուն.

—Հը՞ ինչպէս ես, նազելի դատրիկս, հօ-
ջըսս չեղաւ քեզ:

—Իսկի էլ չէ, սիրելի հայր, միայն սոսկալի
վտանգը յիշելով սարսափս գալիս է: Տէր ամե-

Նակալ Աստուած, ինչ կըլինէր մեր վերջը, եթէ անվեհեր երիտասարդը չպատահէր: Արիւնը երակներու մաս առչում է, որ մեր զարհուրելի դըրութիւնը միաս է ընկնում:

— Այն, երիտասարդ պարոն, դարձաւ ծերը Լոպպուն, մեր կեանքը դուք փրկեցիք, այդ մոռանալ անկարելի է, ո՞վ էք դուք: Ես նախագահ Տոտն եմ, եթէ որեւէ կերպ ձեզ օգտակար լինել կարող եմ, մեծ սիրով կըկատարեմ, շնտ ասէք խնդրեմ, ո՞վ էք, ինչ մարդ էք:

Լոպպին միառմի պատմեց, թէ ո՞ւմ որդին է ու ինչ հանգամանքների մէջ է մնուել, մեծացել. անգամ չծածկեց թէ այժմ ինչ տխուր աւթով եկել էր անտառը: Նրա սրտաբաց, անխարդախ շարժումները շատ դուր եկաւ նախագահին:

— Շատ բարի, գոհ եմ տեսնելով որ մի ծառայութիւն կարող եմ ձեզ անել, այսինքն՝ դուք այս րոպէիս ոչ ապրուստի միջոց ունիք և ոչ յուսատեղ ու ցանկանում էք առաջ գնալ, այնպէս չէ:


— Այն, հրամանք ես, տէր նախագահ:

— Կարգալ, գրել, հաշուել կարողանում էք, այնպէս չէ: Երևի լաւ ձեռք էլ ունէք:

— Այն, կարող եմ պարզ և ուղիղ գրել, տէր նախագահ:

— Այդ բաւական է, ուրիշ ինչ էք հասկանում, երևի կարողանում էք ձեր միտքը գրաւոր արտայայտել:

— Ես կարծում եմ, ասեց Լոպպին ժպտալով, թէպէտ չեմ պարծենալ, որ ընտիր ոճաբաններից եմ, միայն անգլիերէն ու ֆրանսերէն ուսանելիս որոշ վարժութիւն եմ ձեռ բերել շարագրելու մէջ:



—Ի՞նչպէս, դուք անգլիներէն ու ֆրանսերէն էլ էք հասկանո՞ւմ: Երևի լաւ խօսում էք:

—Այսքան վստահ կարող եմ ասել, որ ուսուցիչներս ինձնից դո՛հ էին, պատասխանեց Լոպպին:

—Տէր ողորմած Ա՛ստուած, գոմի ծառան սփ, այսքան լեզուներ իմանալնսփ, գոչեց նախագահը արմացած: Սեցիլի, փորձիր, փոքր ինչ սրա հետ խօսիր:

Նախագահի դուստրը հարցումներ արեց նրան զանազան առարկաների վրայ անգլիներէն ու ֆրանսերէն: Լոպպին այնպէս վարժ ու անսխալ պատասխաններ տուեց, որ օրիորդը չը կարաց իւր զարմանքը ծածկել:

—Նա ինձնից լաւ է խօսում, հայր, զարմանալի բան է, ես մանկութիւնից եմ սկսել ուսանելը, իսկ նա իւր պատմելով միայն մի տարի—Ի՞նչ աշխատասէրը պտի եղած լինիլ:

—Կասկած չկայ, որ ես աշխատասէր էի ու պարտաւոր էի այդպէս լինիլ. բա՛ջ յայտնի է որ ժամանակը ոսկի է ու ինչ սովորում եմ, ինձ համար է, կոբած տեղ չի:

Նախագահը ապշելով՝ Լոպպու ոտին, գլխին նայեց ու ասեց.— շատ հիանալի, երբ դուք ժամանակի արժէքը այդպէս հասկացել էք, ապագայում ես վայելուչ գործ կածէք. իմ դիւանատանը մի գրագրի ազատ տեղ կայ, ես առաջարկում եմ ձեզ, ու՞ծիկը մի նշանաւոր բան չէ, տարեկան միայն 300 թալեր, բայց մի անգամ

պաշտօնի մտնելով դժուար չի ձեզ առաջ դնալ. երբ աշխատասէր ու հմուտ լինէք, կարող էք մինչև դադանի ատենագալլի աստիճանին հասնել: Միամիտ եղէք, ինչ որ կարևոր է այդ մասին, ես կը հոգամ: Բացի այդ՝ դիւանատանս մատենագարանը բաց կըլինի ձեր առաջ. եթէ եռանդով այնտեղի գրքերը ուսումնասիրէք, գործնականապէս էլ պարապէք, կարող էք շատ աւելի ուսանել քան թէ համալսարանում: Մտածեցէք, եթէ այդ պաշտօնը ձեռնտու է, կարող էք վաղն և եթ ընդունել:

Լոպպին չըզիտէր ուրախութիւնից լաց լինի թէ ցնձայ, այսպէս բաղդ, որ նրան անակնկալ հանդիպելով կասես երկնքից դողն ընկաւ, ոչ կարող էր յուսալ, ոչ մտքովն անցկացնել: Առաջին՝ ունենալու էր տարէնը 300 թալեր ու՞ծիկ, երկրորդ՝ առաջադիմելու յո՛շտ և երրորդ՝ մի մեծ մատենագարան ձեռի տակ— այս բոլորից ետ քիչ էր մընում՝ ընկնէր նախագահի ստները ու ձեռները համբուրէր: Յնժուժից խենթացածի պէս բացականչեց.

—Ա՛խ, Աստուած ձեզ կեանք տայ, տէր նախագահ, այս ի՞նչ բաղդաւորութիւն է, որ ինձ անու՞մ էք, կմկմաց նա մերթ կարմրելով՝ մերթ դեղնելով, էլ նոր մտածելու ի՞նչ կայ, անպատմելի ուրախութիւնով ընդունում եմ պաշտօնը ու խօսք չեմ գտնում ձեզ սրտիս ուղածի չափ դոհունակութիւնս արտայայտելու: Աստուած

է վկայ, ինձ նման բազդաւոր մարդ չի լինելու
աշխարհի վրայ:

— Հանդարտ, հանդարտ, ասեց նախագահը,
քու արած ծառայութեան դէմ իմը ոչինչ է,
աւելորդ խօսքեր մսխելու կարիք չունես, ես եմ
երախտապարտ: Յովհաննէս, դարձաւ ծառային,
այժմ մտա, ձիանը, կառքը ի՞նչ դրութեան մէջ են:

— Դարձեալ ամեն ինչ կարգին է, սղորմած
տէր:

Յանդիմանութիւն լսելուց երկիւղ հրելով
ներողութեան պոչից բռնեց. — ներեցէք, աղաչում
եմ, որ այս քամբաղդութիւնը պատահեց, ճշ-
մարտին հաւատացէք, ես դրանում մեղ չունեմ:

— Ինձ լաւ յայտնի է, Յովհաննէս, խօսեց
բարեսիրտ նախագահը, մեզնից մօտիկ հրացան
տրաքեց, ձիանը խրտնեցին, սանձերը ձեռիցդ
լայելով փախա առան: Արդարն ասած, դու աւե-
ղի մօտեցար մահուան դռան քան թէ մենք:
Եթէ որեւէ մեղ դրա մէջ ունիս, այդքան պա-
տիժն էլ հերիք է: Դէ, եթէ ձիանը հանդար-
տուած են, դնանք:

— Հանդարտ ոնց որ դառներ, տէր իմ, խեղճ
անասուններն էլ բաւական ահ կերան, նստեցէք
ապահով, էլ երկիւղ չկայ:

Լոպպուն էլ երաշխաւորեց, որ ձիաներից
փտանդ չը կայ. կառք նստեց նախագահը իւր
դասրի հետ: Ամենայն սիրով հետները կը վերցնէին

Լոպպուն, բայց տեղ չկար: Բարեկամաբար իրա-
ւից հրաժեշտ առնելով բաժանուեցին.

— Ուրեմն փաղը դիւանատանը կը պատա-
հենք, աչքի լոյս, ձայն տուեց նախագահը Լոպպուն:
չը մտաննաք, գործը վերջացած է, ցտեսութիւն:

Կառքը սլացաւ հեռու, Լոպպին մնաց ետ-
նից նայելիս, կարծես երազում. սիրտը ուրախու-
թիւնից ցնծում էր, աչքերը, երեսը փայլում էին
ներքին երջանկութիւնից: Իրան թափահարեց
սիրտը տեղն ընկածի պէս, անտառին ես իւր
բազդաւորութիւնից բաժին տալու համար ցըն-
ծալից աղքատներ արձակեց դէպի դալարա-
գարթ կատարները ու յուզուած սրտով, աչքերը
դէպ երկինք ուղղելով, ազօթեց, գոհութիւն մա-
տուցեց Բարձրեալին, որ իրան այս անասելի
բազդաւորութիւնը շնորհեց. — ինչ փոքրօգի արա-
րած էիր դու, Լոպպի, ասեց ինքն իւր գլխին,
չես ամաչում, որ ապագայիդ վրայ յուսահատել
էիր: Ա՛խ, կեցցէ թագաւորազը, նրա խօսքը
կրկին ճշմարտուեց. ժամանակը ոսկի է: Տես-
նում ես, անհամբեր Լոպպի, եթէ ուսում չը
սիրէիր, ժամերը զուր կորցրած լինէիր, գիտու-
թեան պաշար չը ժողովէիր, ինչպէս Աստուած
քեզ այս տեսակ բազդի կարժանացներ: Այն, ժա-
մանակը ոսկի է: Տեսնեմ, էլի մօրաքոյրս կը հա-
մարձակուի ինձ ծաղրել, «ժամանակը ոսկի է»
ասացուածը անազաբան շինել, ատամի տակ սա-
ղուցի պէս ծամել:

Այսպէս ինքն իրան խօսելով, թոնթորալով քաղաք մտաւ, քայլերը շտապ փոխելով, աչքերը կրակոտ դէս դէն նայելով, թուշերը կարմրած պսպղալով, սիրտը ուրախութիւնից հրդեհուած տուն պրծնելով:

— Հը՛, ինչ է պատահել քեզ, Լոպպի, հարցրեց մօրաքոյրը, հէնց որ Լոպպին փոքր սենեակը մտաւ, այնպէս փայլում ես, կարծես գլխիդ լոյս է վեր եկել երկնքից:

— Այո՛, մօրաքոյր, մի աստղ, բազմի աստղ է ծագել ինձ համար: Մի լսիր թէ անտառում ինչ է անց կացել գլխովս:

Եւ Լոպպին պատմեց մանրամաս թէ ինչ տխուր վիճակում էր, յանկարծ ինչ բազդ լոյս ընկաւ: Մօրաքոյրը բոլորը լսեց ուշի ուշով. Երբեմն զարմանքի, երբեմն սարսափի ու ուրախութեան ճիչեր էր արձակում: Ողջ իրիկուն մնաց լուռ ու մունջ. ոչ միայն Լոպպու սիրելի ասացուածը ծաղրի նիւթ չը շինեց, այլ ամօթից բերան էլ չը բերեց: Անկողին մտած ինքն իրան փթնփրնթում էր:

— Տեսնում էք այս պէժ ու կրակ աղին, էլի՛ր վերջը ըզորդ դուրս եկաւ իւր թագաւորազի հետ: Սրանից ետը ո՞վ չի հաւատալ, որ ժամանակը սակի է, ի հարկէ սակի է: Յիմարը ես եմ եղեր:

Այս խոստովանութիւնով քուն մտաւ կինգերայն աիկինը. առաւօտը վաղ վաղ զարթելով իւր հոգեւորդի քարտուղարի համար յատկապէս սուրճ

եփեց և ուրախ երեսով մատուցեց նրան մի փառասոր բաժակ իբր նախածաշիկ: Այս հանգի պատիւ Լոպպին իւր մօրաքոյրից դեռ չէր վայելել: — Այո՛, ասեց նա, ճշմարիտ, ժամանակը ոսկի է, իսկ սակին ոյժ է, այսօրուայ սուրճը անշուշտ ուժի հետեւանք է:

Է.

Վաղ առաւօտ Լոպպին կանգնած էր նախագահի դիւանատանը, ուր դեռ մարդ չը կար: Ձէր իմանում, թէ ինչ է անելու, նստեց հանդարտ մի աթոռի վրայ ու սպասեց: Ձեռները կցած, բոլորովին պարապ չը լինելու համար վերցրեց գրասեղանից մի կապուկ փետուր ու մի գրչահատ, զբաղուեց հանգիստ ուրախ նրանց կտրտելով ու պատրաստեց սիրուն գրչածայրեր: Գրագիրներն սկսան իրար ետնից դալ, ամեն մինը նայում էր Լոպպու վրայ զարմանքով ու չէր իմանում ինչ ասի, ինչպէս վարուի: Ճշմարիտ է, նա իւր համար սուս փուս նստած էր, ոչ ոքի մտքով չէր անցնում նրան դիւանատնից դուրս անել, բայց թէ ինչո՞ւ էր եկել, այնտեղ նստել — այս բանին էին նրանք հետաքրքիր:

Լոպպու շատ փոյթը չէր, թէ ինչ աչք ունքով են գրագիրները իւր վրայ նայում. նա եկել էր իւր պաշտօնն ընդունելու, բայց երբ ամենից վերջը ատենադպիրը ներս մտաւ ու նրան նըստած տեսաւ, չկարաց անխօս համբերել:

— Ի՞նչ էք կամենում, դարձաւ Լոպպուն թթու երեսով:

— Եկել եմ պաշտօնս սկսեմ, պատասխանեց Լոպպին քաղաքավարի ու սառն:

— Ի՞նչ պաշտօն, ի՞նչ բան, խելառ հօ չէք, ո՞վ է ձեզ պաշտօն տուել:

— Պարօն նախագահ Րօտը.

— Պարօն նախագահ Րօտը. չէ չէ մի սոսա — մեր ամենօրրօմած տէրը, թագաւորն ինքը: Դէ շուտ այս բոպէիս դուրս գնացէք, գոռաց ատե նադպիրը, թէ չէ դիւանատան ծառաներին հրա մայում եմ, որ դուրս վռնդեն:

Լոպպին տեղից ամենեկին ժամ չեկաւ. — ի՞նչ հարկ կայ դուր բարկանարու, եթէ ինձ չէք հաւատում, հարցրէք իրան նախագահին:

— Չայներդ, որոտաց դիւանապետը. էյ տղէրք, եկէք վռնդեցէք յանդուզն արարածին այստեղից:

Այդ միջոցին դռան զանգակը ծլնդաց.

— Նախագահ ինքն է, խօսքը շփոթուած շարունակեց դիւանապետը, այս պատմութիւնը քիչ ճշմարտութիւն է պարունակում, համբերեցէք մինչև վերադառնամ:

Շտապ հեռացաւ, երկար չը քաշած ետ դարձաւ դիւանապետը բոլորովին փոխուած ու ուրախ դէմքով ասեց Լոպպուն.

— Ձեր ասածը միանգամայն ճշմարիտ է, պարօն նախագահը հարկաւոր տեղեկութիւնները

տուել ու առանձնապէս ինձ է յանձնել ձեր մասին հոգալը. ահաւասիկ մի ազատ գրասեղան, նստէք խնդրեմ ու արտագրէք այս արձանագրութիւնը:

Այդ կարճ պատուէրից ետ երեսը շուռ տուեց դիւանապետը. սկզբում Լոպպին մնաց շուարած, ապա ուշքն իրան հաւաքեց: Ծոյլ անգործ նստելը նրա սովորոյթը չէր, ժամանակը ոսկի է, փնթփնթաց քթի տակ ու գրասեղանին մօտենալով տաք տաք գործի կացաւ, թուղթ, թանաք, գրիչ առատօրէն կար, երկու ժամից ետ արձանագրութիւնը մաքուր արտագրած ներկայացրեց դիւանապետին: Սա հիացած ու խիստ գոհ դէմքով թերթեց գրածը ու վերջն ասեց, — ինչպէս գեղեցիկ ու արագ գրել աւարտել էք, երևում է որ դուք պիտանի ոյժ էք. եթէ այդպէս շարունակէք սնց որ սկսել էք, լաւ ապագայ կունենաք, այժմ գրեցէք ահա այս:

Լոպպին գովասանքներից խնդումերես դարձած գնաց իւր գրասեղանի մօտ երկրորդ յանձնարարութիւնը կատարելու:

Ժամ է ժամ, օրէ ցօր գրաւեց իւր գլխաւորի յարգանքը, քիչ միջոցից ետ դիւանապետը կարեօր գործեր էր յանձնում նրան ու ամեն անգամ շնորհակալութիւն ու գոհութիւն յայտնում:

Լոպպին այնպէս շուտ բնտերացաւ գործին, որ հեշտով ամենից շատ գործ էր կատարում ու

ամենից շատ ազատ ժամանակ ունենում: Ընկերները մի ժամ աշխատելուց ետ մի ժամ էլ զրուցի էին նստում: Ճաշերից ետ Լոպպին դիւանատանը գործ չունէր, հէնց որ տեղը տաքացած տեսաւ, յիշեց մատենադարանի մասին նախադահի արած խոստումը, գրքերից օգտուելու համար գնաց դիւանապետի միջոցով տեղեկութիւն իմանալու: Սա հարցրեց.

— Ի՞նչ էք ուզում անել մատենադարանում, ինչ էք վնդուում այնտեղ:

— Գրքեր, ուրիշ սչինչ, պատասխանեց Լոպպին:

— Ի՞նչ բովանդակութեան գրքեր են ձեր ուղածը. այնտեղ քաղաքական իրաւունքի, քաղաքական տնտեսութեան ու օրէնքի վերաբերեալ բաներեն, որոնցից դուք հասկացողութիւն չունէք:

— Հէնց այդ պատճառով եմ կամենում:

— Լաւ, մնց է, բացադրէք մի տեսնեմ:

— Եթէ ես այդ հասկանայի, գրքերի էլ կարիք չէի ունենալ: Դուք ճիշտ ասիք, որ ես չեմ հասկանում, ուստի կամենում եմ ուսանել:

— Ուսանել, դուք մի հասարակ գրագիր, ինչ հարկաւոր են ձեզ այդպէս բարձր բաները, օգուտ չեն տալ:

— Ինչ ուսանում եմ, ինձ համար եմ ուսանում, աւելորդ բեռ չի դառնալ, ասեց Լոպպին

կամակորութեամբ: Դիւանապետը աչքերը աւելի չաւելով խօսեց:

— Ախր ասէք, թէ Աստուած կը սիրէք, ինչներով է պէտք, ինչ օգուտ ունէք դրանցից՝ թէկուզ բոլոր գրքերը բերան սերտած լինէք, օգուտ չունի: Դուք ձեր կեանքում ուսանող դառնալ չէք կարող, ինչքան էլ պաշտօնով բարձրանաք կամ դիւանապետ էք դառնալու կամ գաղտնի գործերի ատենադպիր, աւելի չէ. այդ էլ կարող էիք լինել, եթէ ձեզ օգնող ազգական կամ առաջ քաշող բարեկամ ունենայիք:

— Վնաս չունի իմ սովորածը ինձ կը մնայ, ես աւելորդ ժամանակ ունեմ:

— Աւելորդ ժամանակ ունէք, գնացէք զբօսնելու, ուրախ կեանք անցկացնելու:

— Այդ կատարեալ գաղարկապօրտութիւն կը լինէր, պարոն դիւանապետ, ժամանակը սակի է, ինչո՞ւ մարդս պտի իւր դրամագլուխը դէն շարտել:

— Ուղիղ ասած՝ դուք ամենատարօրինակ արարածն էք, որ ես կեանքումս տեսել եմ: Մարդիս կամքը իւր երկնային արքայութիւնն է: Իհարկէ լաւագոյն է ժամանակը օգտակար գործադրել, քան թէ յիմարութիւններով զբաղուել: Երբ ցանկանում էք, ահա մատենադարանի բանալիքը, կարգացէք ու ուսումնասիրեցէք ինչքան որ կամենում էք, իմ կողմից արգելք չկայ:

Լոպպին այդ օրից սօրը մատենադարան դը-

րեց և շարունակեց անխափան ամեն օր. իւր ազատ ժամերը անց էր կացնում այնտեղ, անխոնջ կարգում, ուսանում էր: Սկզբում ի հարկէ այդ գրքերը նրա համար անհասկանալի էին, բայց կամաց կամաց պարզուեցին: Ինչ տեղ դէմ էր առնում, հարցնում էր գիւանապետին. եթէ սա չէր հասկանում, դիմում էր դադանի գործերի ատենագրին, որի աչքում օր օրի վրայ մտնում էր ու սիրելի դառնում, Հետզհետէ այնքան բան ուսաւ, որ իւր դարմանքն էլ էր գալիս, թէ անց կարաց այդքան գիտութիւն ձեռ բերել: Ամեն օրուայ գանդառն այն էր, որ ինքը լատիներէն չգիտէ: Առանց այդ դժուար էր գիտութեան մէջ առաջ գնալ. մտքում դրեց այդ դժուարութիւնիցն էլ ազատուել, այսինքն լատիներէն սովորել: Ուսուցչին վճարելու համար փող ունէր, սկսեց ատարեալ — երիտասարդ մարդը քերականութիւնը թեի տակ ուսուցչի մօտ գնալ, գալ: Ուսաւ անխոնջ, գիշերը ցերեկ դարձնելով, ցերեկը գիշեր, մինչև որ մի օր տեսաւ՝ Կիկերոնը այնպէս է կտրուում հասկանում ինչպէս այբբեն: Աշխատանքի դէմ սարը չի դիմանալ, այդ լաւ էր իմանում Լոպպին, ուստի ուսանելը նրան ոչ թէ տաժանալից աշխատանք էր թւում, այլ զուարճութիւն: Ինչ սկսում էր, տղամարդի պէս մինչև վերջը տանում էր ու ցնծում արածի վրայ, անց որ զօրապետը երկար դժուարութիւններով տարած յաղթանակի: Այսքան մտաւոր աշխա-

տանքների մէջ նրա առողջութիւնը մնում էր անփաստ, գիտէր ուսանելու մէջ չափ, սահման պահպանել, հանգստութեան համար ժամեր տնտեսել: Կիւրակին նրա հանգստի օրն էր, գրքերին ձեռ չէր տալիս. դնում էր եկեղեցի ժամերգութեան ու նրանցից ետ շտապում դաշտ զբօսնելու. իսկ ճաշերից ետ մինչև մութ անց էր կացնում անտառներում. դրանք այժմ էլ նրան սիրելի էին մնացել, ուր վաղ ժամանակ թափառում էր իբր դատարկաշրջիկ տղայ: Չմբան ցրտերին կամ անձրևային եղանակին իւր սիրելի զբօսանքները չէր խափանում. տարերքների հետ պատերազմելը նրա զուարճութիւնն էր, եղանակների փոփոխութիւնները նրա վրայ ազդեցութիւն չունէին:

Աննկատելի կերպով Լոպպին դարձել էր հմուտ իրաւագէտ ու քաղաքատնտես, պետութեան պակասութիւնները նա աւելի լաւ էր ըմբռնում, քան որ և է բարձր խորհրդական: Բայց ինչ կանես, որ այս ամենը նրան շատ քիչ շահ էր բերում, ոչ ով նրա վրայ ուշ չէր դարձնում. մինչև անգամ նախագահը աչքաթող էր արել նրան: Լոպպին սկզբից էր և մնաց երկար ժամանակ ստորագրեալ դրագիր, միայն այն գանազանութեամբ, որ նրան արտագրելու թղթեր չէին տալիս, այլ ինքնուրոյն աշխատեցնում ու յաճախ նրան ամենախճճուած ու ամենադժուար գործերի լուսաբանութիւնը յանձնարարում: Նրա համեստութիւնն էր մեղաւոր, որ պաշտօնով չէր բարձ-

բանում. Տիշտ է, նա չունէր բարեխօսող ազգականներ ու պաշտպաններ, բայց դրա համար մենակ նախագահը բաւական էր, եթէ Լոպպին նրան դիմէր: Ինքը չէր անում, այլ սպասում էր, որ ուրիշները իւր ջանասիրութիւնն ու գիտութիւնը գնահատեն ու նրա համեմատ առաջ քաշեն: Ծեր դիւանապետի մտքով անց էր կենում այդ բանը, սակայն զգուշանում էր Լոպպուն գլխի գցելու. անխելք կը լինէր, եթէ այդ անէր. Լոպպին մեծամեծ ծառայութիւններ էր մատուցանում, դիւանատանը առաջին աշխատաւորն էր, ամեն բանի խելքը հանում, ամեն հանգամանքում ձերուների մեծաւորին խորհրդով օգնում, մի խօսքով նրան ձեռների տեղ էլ էր ծառայում, գլխի տեղ էլ. ի հարկէ նրան ձեռնտու էր, որ Լոպպին մնար ստորին պաշտօնում չնչին ռոճկով: Նա էլ մնացել էր. պատճառ՝ ոչ նախանձոտ էր, ոչ փառասէր: Մնունդ, հաղուստ, պարապմունք՝ այս ամենն ունէր, էլ ինչ էր հարկաւոր: Նա յուսով էր, որ մի օր հանգամանքը ուրիշ տեսակ կը դառնայ ու իրան կօզնի պաշտօնով բարձրանալու:

Բազդը բանեց, այս հանգամանքը լոյս ընկաւ: Ծերունի նախագահը վախճանուեց, նրա տեղ նորն եկաւ ու եկած օրից նոր հոգի, նոր կեանք մայրեց դիւանատան մէջ: Սկզբում սա էլ ուշ չէր դարձնում Լոպպու վրայ. գրագրի արհեստն է բոլոր տարին արտագրել, պատճէններ պատրաստել, դրանով ուն կարող է դարձացնել: Սա-

կայն կարճ միջոցից ետ նախագահի ձեռն ընկաւ մի մեծակշիւ գրաւոր աշխատութիւն, որն այնպէս խելացի, պարզ ու հիմնաւոր էր շարագրած, որ նրան հետաքրքիր դարձրեց հարց ու փորձ անել, շարադրողին ճանաչել:

— Իմ խորհրդականներից ով է այս աշխատութիւնը գրել, հարցրեց ձերունի դիւանապետին:

— Եթէ գրողին էք հարցնում, նախասենեակում նստող գրագիրն է, որին Լոպպի են կանչում, բայց թէ ազգն ի՞նչ է, ինքս չգիտեմ:

— Ես չեմ հարցնում, ով է արտագրել, դուք ինձ ասեցէք, ով է գրողը, խօսեց նախագահը խտտաբէմ, գիտէք:

— Գիտեմ այն, գրագիր Լոպպին է, ես ձեզ հաստատ ասում եմ:

— Բայց այդ անկարելի է, ինչ որ ասում էք:

— Իսկի էլ չէ, տէր նախագահ, այդ մարդը շնորհալի որմին է, վաղուց է որ նա այլեւ չի արտագրում, այլ խիստ կարեւոր աշխատանքներ է կատարում, անկասկած խելացի գլուխ ունի:

Այն, այդ ցոյց է տալիս նրա գրած շարագրութիւնը, որից աւելի հիմնաւոր զրութիւն գժուար է երեակայել: Այդ մարդին կանչեցէք այստեղ:

Լոպպուն իմաց արին, զարմացքն երեսին ներս եկաւ շիմանալով թէ նախագահն իրանից ինչ է ուզելու: — Գուք դիւանատանը գրագիր էք, հարց տուեց նրան:

Այն, տէր նախագահ, պատասխանեց Լոպպին, խոնարհ գլուխ տալով:

— Դուք էք այս շարագրութիւնը գրել. — թերթերով ցոյց տուեց գրութիւնը. շարագրել եւ ասում եւ ոչ արտագրել:

— Հրամանք ես, տէր նախագահ, ես եւ շարագրել:

— Հապա այս ինչպէս է պատահել, այս շրնորքը ունենալով մինչ օրս սոսկ գրագիր էք մընացել դիւանատանը:

Լոպպին ուտերը թոթուեց. — ուսանող չեմ եղած, որ համալսարանի երես տեսնէի, օգնող ազգակիաններ չեմ ունեցել, ինքս ինձ առաջ քաշել չէի կարող, ուստի մնացել եմ գրագիր:

— Ի՞նչպէս, միթէ դուք համալսարանում չէք եղած. հապա որտեղից է ձեր այս լայնածաւալ ուսումնականութիւնը:

— Այդ ուսումնականութիւնը ձեռ եմ բերել ահա այս միջոցով, սկսեց Լոպպին պատմել իւր կեանքի գլխաւոր դէպքերը: Նախագահը մնաց ապուշ կարուած:

— Լաւ էր, որ այս ամենն իմացայ, ես մանրամաս տեղեկութիւններ կը ժողովեմ ձեր մասին, թէ հետեւանքն ինչ կըլինի, իմանաք ինձանից:

Լոպպին խոր գլուխ տալով իւր տեղը դնաց. նրա գիտնականութիւնը, համեստութիւնը, պարզ շարժուածքը խիտ հաճելի տպաւորութիւն էին արել նախագահի վրայ, որ ինքն իրան շըշընջաց.

«ժարդը պիտանի որմին է, հարկաւոր է նրան արժանաւոր պաշտօն տալ»:

Հարց փորձ անելով Լոպպու բոլոր ասածները ստոյգ գտաւ. նրա շարագրած ուրիշ մի քանի գրութիւններ էլ կարգաց, աւելի ու աւելի դարձացաւ ողորմելի, աննշան գրագրի ընդարձակ ու հիմնաւոր գիտութեան վրայ: Հետեւեալ օրը Լոպպին ստացաւ մի կնքած ծրար, կոտրեց ու մէջը կարգաց, որ ինքը նշանակուած է դիւանատանը գաղտնի գործերի ատենագրի տարէնը հազար թաւեր ռոճիկով: Մատը ճակատին դնելով ուրախ բացականչեց.

— Կեցցէ թագաւորազը, նրա խօսքը էլի ճըշմարտուեց, օր օրի վրայ աւելի եմ համոզուում, որ արդարն ժամանակը ոսկի է:

Ը.

Այսպէս ուրեմն խօսքը կատարուել էր, Լոպպին տարէնը հազար թաւերանոց ռոճիկ տիրացել. այժմ առաջուայ աշխատութեան կէտն էլ չունէր. իւր վիճակից գոհ էր, բայց աւելի գոհ ու բաղդաւոր էին նրա խնամակալները, մանաւանդ մօրաքոյրը երջանկութեան վերին ծայրումն էր, ամեն կողմով լլվլում էր, հազար թաւերի մի մասը չէ որ նրա գոգնոցի գրպանն էր թափուում: Լոպպին դեռ գրագիր ժամանակ չէր մոռացած, իւր երախտագիտութեան տուրքը վճարում էր մօրաքոյրը, որ այժմ ամեն մի խօսքի

գլխի նրան անուանում էր՝ սիրելի Լուսալի, սրտի սիրեկան սրգի, աչքի դուրեկան, քաջասիրտ, բարեսիրտ և այլն և այլն: Կինդերլայն տիկինը անուշ սքանչացման մէջ լուղում էր ու զովելով երկինք էր հանում ոչ թէ մենակ իւր պատուարժան հոգեւորութուն, այլ և տէր թագաւորազին, որ նրան սիրուն խրատ է տուել: Բերան բերել, ծաղրել նրա ասած խօսքերը կամ խրատը, Աստուած չանի, չէր համարձակուում, մեծ պատուականքով էր վերաբերում գէպի գազանի գործերի ատենադպիրը, որի վրայ «ժամանակը ոսկի է» խօսքերը իրանց խոյ ճշմարտութիւնը աշկարայ ցոյց էին տուել:

Լուսալին սնց որ ազբատ, անօգնական միջոցին, այժմ բազգաւորութեան ժամանակ էլ նոյնն էր մնացել. բազդ ասած բանին շատ էլ չէր հաւատում, մանաւանդ որ միանգամից, յանկարծ էր եկել, վախենում էր որ ետեւը թագնուած բան լինի: Նա նոյն համեստ ու չափաւոր Լուսալին էր մնացել, առանց ուշ դարձնելու իւր բարձր պաշտօնին ու ոռձկին:

Մի որ Լուսալին նախագահից պատուէր ընդունեց մի ջրանցքի շինութեան նախագիծ քննելու, որ երկու նաւարկելի գետեր պտէր իրար միացնիլ. շտապողական գործ չէր, կարող էր կէս տարի ուշանալ, բայց Լուսալին շուզեց ձեռնաթող անել, նոյն իրիկուն թղթերը առաջ քաշեց նայելու: Խնամքով ու բարեխղճութիւնով առաջ

էր տանում քննութիւնը, երբ մի տեղ կանգնեց ու կանգնած մնաց: Թուաբանական հաշիւներ էին, խելքը չէր հասնում, սուրիչ գիտութիւնների մէջ հմուտ էր, տուն էր. իսկ մատեմատիկայից միայն այսքան գիտէր—երկու զուգահեռական գծերը մինչև աշխարքի վերջն էլ շարունակուեն՝ իրար չեն դիպչիլ: Այսքանով բան չէր դառնալ: Մտածում էր թէ ինչ անէր: Նրա տեղ սուրիչը լինէր, մի մատեմատիկոսի կը յանձնէր, կասէր— խնդրեմ այս ու այս քննեցէք ու հետեւանքն ինձ հաղորդեցէք, բայց Լուսալին այդպէս անելու փոխարէն ասեց ինքն իրան. «Ես ժամանակ ունեմ, կէս տարուայ մէջ շատ բան կարելի է ուսանել, արի այս ճիւղն էլ սովորեմ»:

Անյապաղ գնաց մի մատեմատիկոսի մօտ ու պարապեց: Կէս տարին չըլրացած այնքան ուսել էր, որ ստանձնած պատուէրն ինքն աւարտեց ու գովասանքի արժանացաւ: Բայց նա իւր սրտում աւելի այն պատճառով էր ուրախ, որ իւր ժամանակը գրամաղլուխը մի բանով ևս ճոխացրեց: Այսպէս օրէցօր Լուսալու վիճակը դառնում էր ամենի նախանձի առարկայ. նախագահը գէպի նա միշտ բարեհաճ էր: Լուսալին իւր եկամտից առատ բաժին էր հանում իւր խնամակալներին, Ընդհանրապէս նա խնայող, տնտեսող բնաւորութիւն ունէր, միակ շոյալութիւնը՝ որ իրան թոյլ էր տալիս, նստելու ձի պահելն էր. այդ անում էր երկու պատճառով: Մէկ որ՝ այդ նրան մեծ

զուարճութիւն էր պատճառում, երկրորդ՝ հեծ-
 նելով նախկին ճարպիկութիւնը պահպանում էր.
 չէ՛ որ նա ամենահմուտ ձիափարն էր ողջ մայրա-
 քաղաքում: Իրանք էլ որ չըլինէին, հեծնելը նրա
 առողջութեան նպաստաւոր էր: Ծանր զբաղմունք-
 քից զինի մի զբօսանք անելը ուրախ, գնացկան
 ձիու վրայ, ամենահաճելի հանգստութիւնն էր
 նրա համար:

Ամեն ինչ կարգով ու համով ընթանում էր,
 մինչև որ նախագահը մի օր նրա մօտ եկաւ ու
 հետևեալն ասեց. «սիրելի գաղտնի ատենագալիք,
 խնդրեմ այսօր իրիկու ինձ մօտ շնորհ բերէք մի
 բաժակ թէյ լամելու: Առանց քաշուելու եկէք,
 մենք լինելու ենք մենակ մեզ ու մեզ»:

Լոպպին մնաց զարմանքից սառած. նախա-
 գահը մինչ օրս շատ քաղցր ու քաղաքավարի էր
 եղած, բայց այսպիսի պատիւ ստանալ, իսկի չէր
 սպասած: Հրաւերն անխօս ընդունել էր ու ճիշտ
 եօթ ժամին նրա նախասենեակում կանգնած էր:
 Ծառան ներս հրաւիրեց, նախագահը խիստ սըր-
 տանց նրան բարի գալուստ մաղթեց, ծառային
 դուրս զրկեց, դռները ետևից փակեց ու մնաց
 Լոպպու հետ բոլորովին մենակ: Լոպպին շուա-
 րեց, ըռութ-մռութը փոխեց. — Ըհը, այժմ լոյս
 է ընկնելու իմ արագ բարձրանալու գաղտնիքը,
 օնց որ օձը ծաղիկների տակից: Աչքդ բնց պա-
 հի, Լոպպի, առանց նպատակի չէ նախագահի

խորհրդաւոր վարմունքը ու անհուն բարեկամու-
 թիւնը:

Լոպպու կասկածը անհիմն չէր, նախագահի
 ծրագիրն էր նախարար դառնալ, թագաւորից
 ետ առաջին մարդը լինել պետութեան մէջ: Այս
 ծրագիրը իրագործելու համար Լոպպու աջակ-
 ցութիւնը կարևոր էր. ներկայ նախարարին պէտք
 էր գլուխը, գլուխ գլուխ գալու բան չէր, մի քիչ
 խարդախել, ուրանալ, արձանագրութիւններ ան-
 յայտացնել են բաւական էր այդ գործը կա-
 տար ածելու համար: Նախագահը մանրամաս
 բացադրեց Լոպպու ողջ անելիքը — ծրագիրը
 հիանալի էր ու հեշտ իրագործելի, եթէ Լոպպին
 իբրև գաղտնի գործերի ատենագալիք՝ նրա հետ
 ձեռ ձեռի տուած գնար: Բայց Լոպպին իւր
 սրտի ու կաշուի համար մրսում էր, ուսերը թո-
 թուեց ու պարզասրտութեամբ թախանձեց, «խնա-
 յեցէք, տէր նախագահ, ինձ այդպիսի գործի մէջ
 մի խառնիր»:

Նախագահը մտադրածից այդպէս հեշտա-
 հողի ետ քաշուող չէր, Լոպպին նրան անհրաժեշտ
 էր, շողոքորթելով ասեց, — լսէք, իմ սիրելի բա-
 րեկամ, հօ գիտէք, ինչքան իմ ձեզ գնահատում:
 Ես առաջինն էի, որ ձեր արժանիքը ճանաչելով
 այժմեան պաշտօնին բարձրացրի: Հէնց որ նա-
 խարար դառնամ, աւելի շատ կօզնեմ ձեզ, կա-
 րող եմ խորհրդական դարձնել ձեզ, դրա համար

բաւական է, որ մի հատիկ խօսք ասեմ թագաւորի մօտ:

—Ներեցէք, պարօն նախագահ, խօսեց Լոպպին ալինաձութեամբ, դուք անշափ բարի էք եղել. ես արժան չեմ շնորքների, այժմ ունեցած պաշտօնով բոլորովին դո՛հ եմ, խորհրդական լինելու ձգտում չունեմ:

Նախագահը կարծում էր թէ Լոպպուն առաջարկած պաշտօնը շատ էլ իւղալի չէ, նոր հրապուրիչ միջոցի գիմեց.

—Ձեր չը յօժարուելու պատճառը արդարացի եմ գտնում, աչքի լոյս, ես ձեր արժանիքը իսկապէս չեմ հասկացել. դուք ձեր ունեցած գիտութիւնով բոլոր խորհրդականներից բարձր էք, ես խոստանում եմ ձեզ դարձնել նախագահ իմ տեղը. ահաւասիկ իմ ձեռք, հետն էլ իմ պատուաւոր խօսքը:

Լոպպին կրկին ուսերը բարձրացրեց. այդ հրապուրիչ խոստումն էլ չը կարաց նրան գայթակղեցնել.—պարօն նախագահ, ինդրում եմ չմտանալ, որ ես համալսարանում չեմ եղած, հետեւապէս նախագահի պաշտօնին յարմար չեմ:

—Յիմարի ասած խօսք է դա, սիրելի բարեկամ, համալսարանում լինելը նշանակութիւն չունի, գլխաւորն այն է, թէ ո՞վ լինչ գիտէ, ինչ է սովորել ու սովորածը ինչպէս է գործադրում:

—Ձէ որ ամբողջ աշխարհը դրա վրայ կը զայրանայ:

—Մեզ ոչինչ չի կարող անել աշխարքի ձայնը, երբ մենք ոյժ ունենանք նրան ճնշելու: Պէ՛, համաձայնեցէք ասածիս, վերջացնենք, պարօն գազանի ատենագալիւր, մի ամսից ետ՝ ես նախարար կը լինեմ, դուք նախագահ:

Լոպպու սիրտը չէր զօրում մեկնած ձեռն ընդունել.—ներողութիւն պարօն նախագահ, աւելի սիրով կուղէի այժմեան պաշտօնի մէջ մնալ:

Նախագահը զայրացաւ խիստ.—չեմ հասկանում, ինչո՞ւ էք ծոծուացնում, այժմեան իմ պաշտօնը նախարարից ետ առաջինն է երկրի մէջ, դուք հօ չէք կարող ինձնից պահանջել, որ ես ձեզ նախարար դարձնեմ:

—Աստուած չանի, ընդհակառակ ես կուղէի այնպէս մնալ, ինչպէս որ կամ:

—Բայց, մարդ Աստու, դուք նախագահ էք դառնալու, միթէ չէք հասկանում, սրանից ետ էլ մութ տեղ կո՞յ ասածիս մէջ, դուցէ խօսքիս չէք հաւատում, կուղէք այս բոպէիս դրաւոր պայման ստորագրեմ, ձեզ տամ:

—Դուք չէք ինձ հասկանում, պարօն նախագահ, խօսեց Լոպպին սառնարիւն, իմ տասածը շատ պարզ է, ես գերագասում եմ մի պատուաւոր մարդ մնալ քան թէ ստոր միջոցով նախագահ կամ այլ բաներ դառնալ:

Այս խօսքի վրայ հէնց իմանաս նախագահը կայծակնահար եղաւ. նախ սփարթնեց, ապա մի մոյգ կարմրուց եկաւ Լըեսը բռնեց ու բարկու-

թեան զարկերակը ճակատի վրայ ճիպտի պէս կանգնեց: Լոպպիից այն տեսաւ, ինչ որ իսկի մտքովը չէր անցկացրել: Գլուխը կորցրած, շըրթունքները կծոտելով խօսում էր նախագահն ինքն իրան, — չնչին խարդախութեան, նենգամտութեան մասնակցելու համար այնպէս մեծ վարձատրութիւն խոստանամ, այն էլ չուզենայ, Իւր մեծամեծ ծրագիրները, իւր փառասիրութիւնը, կիրքը նրան խաղաղ կուրացրել էին. կարծում էր թէ Լոպպուն էլ ձեռի տակ կը դցի, հաշիւը սխալ դուրս եկաւ, այս հարուածը շատ խիստ ազդեց, որովհետև միանգամայն անսպասելի էր:

— Պարոն, խօսեց նախագահը զայրութից ու հերսից դողալով, դուք բոլորովին մոռանում էք թէ ո՞վ է ձեզ բարձրացրել:

— Ամենին չէ, ձեզ եմ պարտական այժմեան իմ պաշտօնով, երբէք էլ մոռանալու չեմ:

— Բայց չէ՞ որ բարձրացնողը կարող է նոյնպէս ներքև գլորել: Եթէ դուք դարձեալ կուշացնէք, իմացէք որ վաղը պաշտօն չունէք, արձակուած էք: Տխմար միք լինիլ, բարեկամ, մի կողմ թողէք ձեր ծիծաղելի խղճահարութիւնը, ձեռից բաց միք թողիլ այսպէս հանգամանքը, ձեր կեանքում էլ չէք տեսնելու:

— Գինը, որով այդ պաշտօնը ձեռ եմ բերելու, շատ թանկ է թւում, պարոն նախագահ, խօսեց Լոպպին լրջագէմ. իմ խիղճը աւելի արժէքան որ և է արտաքին փայլ ու շուք, որ միայն

ներքին ամօթանք պտի բերել: Աղաչում եմ ձեզ, պարոն նախագահ, ինձ խնայեցէք:

Նախագահը վերջապէս նկատեց, որ Լոպպին իրաւախօհութեան, ազնւութեան ունիլը ամուր բռնել, բաց չի թողնում, սրտում հիասթափութեան կատաղութիւնը բորբոքուեց անզուսպ կերպով, կուրծքը ծեծելով դուռաց.

— Դուք ինձ վնչ էք տուել: Ողորմելու պէս կուրացել — առաջարկս ու խնդիրս մերժում էք. դրանով ձեր բողբոջ ինքներդ կխճորում ու միևնոյն ժամանակ ինձ մահացու վէրք էք տալիս: Դուք մի ապերախտ մարդ էք, ուրիշ ոչինչ, այդպիսով հետ չարժէ երբէք դործ ունենալ: Ես արձակում եմ ձեզ դիւանատնից, այսօրուանից այլ ևս դադանի ատենագույլի չէք:

— Փոյթ չէ, ընդունում եմ արձակումս, ասեց Լոպպին պարկեշտ ու խոնարհ գլուխ աւալով: Նախագահը չը լռեց, շարունակեց.

— Բայց լսեցէք, դուք երևի մտածում էք ինձ վնասել, վասն զի ձեզ ծրագիրներս անկեղծօրէն յայտնել եմ: Իսկի էլ չը սխալուէք, մեր զրոյցը առանց վկաների է եղել, հարկաւոր դէպքում կարող եմ ուրանալ ու ձեզ իբրև ստախօսի, զրպարտողի, պատիւ արատաւորողի բանդ նստացնել: Այս բանը լաւ աչքի առաջ ունեցէք. այժմ դուռն առաջներդ է, համեցէք:

Ձարմանալի պաղարիւնութեամբ վերցրեց Լոպպին գլխարկը ու շարժուեց: Դռան մօտեցել

էր. նախագահը դարձեալ առաջ գալով կանգնեցրեց.

— Պարոն, մտածեցէք ձեր արածի վրայ. այս շէմքը անցնելուց ետ թողում էք այստեղ կամ ամենաջերմ բարեկամ կամ մշտնջենական անհաշտ թշնամի: Ընտրեցէք նրանցից մէկը, իբր զօրեղ բարեկամ կարող եմ ձեզ շատ օգնել, բարձրացնել, նմանապէս իբր հզօր թշնամի անասելի կերպով հալածել: Ձեր պաշտօնն ու վիճակը առ միշտ կործանուած է. էլ յոյս չունենաք պետական ծառայութիւն մտնել, ռոճիկ ստանալ. այդ բանը մտքներիցդ հանեցէք, յաւիտեան մոռացողը չեմ, ինչ որ մեր մէջ անց է կացել: Ուստի նորից եմ առաջարկում, ընտրեցէք:

— Ես ընտրել եմ, պարոն նախագահ, պատասխանեց Լոպպին քաղաքավարի, ցուրտ կերպով, կարիքի ժամանակ կարող եմ օրական հացս փայտ կտրտելով էլ վաստակել. այդ տեսակ հացը ինձ աւելի համեղ կերևայ քան մի նախագահի սեղանի խորտիկները, որոնք իմ պատուի գնով էի առնելու:

Նախագահը քթի տակ կծու նզովք կարդալով դուռը բաց արեց: Լոպպին քաղաքավարի դուրս տալով հեռացաւ, իբր մէջները ոչինչ չը պատահած: Իւր սենեակը հասնելով լուսթիւնը խզեց. — սիրտս վաղուց վկայում էր, թէ բանն այսպէս է վերջանալու. զգում էի որ բանի մէջ մի ծածկուած եւ կայ: Է՛հ. այժմ մնա՞ք բարով, գաղտնի

ատենադպիր, հազար թալեր ռոճիկ ու թամբած ձի, ես կրկին մնում եմ Լոպպին, հին Լոպպին, խեղճ Լոպպին, բայց Աստծու օգնութեամբ աշխատելու եմ միշտ և հանապազ պատուաւոր Լոպպին մնալ: Մեծապէս շնորհակալ եմ քեզանից, պարոն նախագահ, այս դէպքի համար. ես չեմ թողիլ երբէք, որ ինձ խարդախ, նենգամիտ շինեն, աւելի շուտով մուրացկան կը դառնամ, եթէ մի օր ապրուստի ուրիշ հնար չը լինի:

Վերջը իրան մխիթարելու համար վրայ բերեց. — Է՛հ, սով գիտէ, նախագահը ինքն իրան մտածի ու ինձ դարձեալ պաշտօնից մէջ թողնի:

Այդ վերջին յոյսը սրտում մտաւ անկողին, բայց հետեւեալ առաւօտ քնատեղից նոր վերկացած, այդ յոյսն էլ օդը ցնցուեց: Մի թուղթ եկաւ նախագահի ստորագրութեամբ, ուր կարճ ասուած էր. «Լոպպին արձակուած է պաշտօնից առանց կենսաթոշակի, էլ ոչ այս, ոչ այն»:

— Այդ ևս ընդունում եմ, շշմուշաց Լոպպին ինքն իրան, աւելի լաւ է այսպէս անպաշտօն լինել, քան թէ խաբեբայ խօսքը ճակատիս ասուէր: Է՛հ, այժմ մտիկ անենք թէ ի՞նչ ենք անելու:

Հանգամանքները նուրբ կշռելուց ետ որոշեց ունեցած առարկաներից աւելորդները վաճառել, դրանց հետ նոյնպէս՝ հեծնելու ձին: Պաշտօնից արձակուելու մասին հաղորդեց իւր խնամակալներին, որոնք անչափ վրդովուեցին անակնկալ պաշտօնանկ լինելու առթով: Լոպպին

ոչ մի բացատրութիւն չէր տալիս: Վաճառած իրերից 300 թալեր գոյացաւ, որոնցով նա նոր ասպարէզ էր ընտրելու: Դէս ու դէն շատ միտք արեց. հաստատ համոզուած էր, որ ինքը հայրենի երկրում մնալ անկարող էր. նախագահը աւելի սիրով կը մեռնէր, քան թէ այդ թոյլ կը տար: Լոպպին ինքն էլ մտադիր չէր մնալ, շրջապատող մարդիկ նայում էին նրա վրայ կասկածոտ աչքով, չը կարենալով որևէ կերպ բացատրել նրա յանկարծակի պաշտօնանկ լինելը: Ուղէր, չուղէր, հեռանալու էր, բայց թէ ո՞ւր, այդ չը գիտէր: Յանկարծ միտն ընկաւ Լորդ Բրիչվատերը. — բանս աջող կը գայ, եթէ լորդը այժմ էլ այնպէս մտածելիս լինի վրէս, ինչպէս առաջ, երբ անգլիերէն չը գիտէի. ես նրան կը ծառայեմ իբրև ուղեկից ու ապագաս ապահովուած է. դէ, սրի դնամ Անգլիա:

Ասած ու կատարած, Լոպպին որոշումը ձեռք բերել չէր սիրում, ձեռի փողը տնտեսելու համար մինչև Համբուրգ ոտով դնաց, այնտեղ նըստեց մի առևտրական նաւ, անցաւ Անգլիայի հողը, մտաւ Լոնդօն, տեղեկութիւն հարցրեց Լորդ Բրիչվատերի մասին, որին ողջ աշխարհը ճանաչում էր. ամենն էլ հաւատացնում էին, որ Լորդը կամ Չինաստան է լինելու կամ Հընդկաստան:

Այս նրա համար մեծ հարուած էր, ոչ այնտեղ գնալու փող ունէր, ոչ այնտեղ: Ո՞նց անի,

կրկին Գերմանիա դառնալ չէր կարող, վճռեց Լոնդօն մնալ: Գործ ճարել այդտեղ էլ կարելի էր, անգլիերէնի մէջ վարժուելու աւելի հնար կունենար: Վերնայարկերից մէկում փոքր սենեակ վարձեց, Լոնդօնի արուարձանում սկսեց ինայողաբար ապրել, ուտելիքը սոսկ հաց էր ու խմելիքը միայն սին շուր: Առաջին օրերը գործ դրեց հսկայ քաղաքը աչքի անցնելով, ապա գործ գտնելու համար մի փողոցից միւսը վազեց. ամեն տեղ իւր ծառայութիւնն էր առաջարկում իբր գրագիր, իբր ձիապահ, իբր սպասաւոր, ամեն տեղ էլ երեսի վրայ ետ էին տալիս. Լոպպին համբերութիւնը չէր կորցնում, սակայն ծոցի գրամը նուազում էր, քսակը հետզհետէ բարտկում էր ու վերջապէս հոգին աւանդեց: Սասարտափելի բան է, մանաւանդ օտար աշխարհում, ու: ոչ ազգական կայ, ոչ բարեկամ. մուրալ չէր ուղղում Լոպպին, թաղաւորազի տուած սկուռց դատ ուրիշ փողի կտոր չունէր: Այլ եւք չէր մնում. կամ պտէր սովամահ լինիլ կամ որևէ նաւ գնալ: Հաւատացած էր, որ նաւաստու տեղ կը գտնէր այնտեղ, բայց դա էլ շան կեանք է: Սենեակի տիրոջն իմաց տուեց, եղած չեղած իրերը հաւաքեց կոնատակը, քայլերն ուղղեց նաւահանգիստ որևէ նաւի վրայ ծառայութիւն գտնելու, այդպէսով կեանքը գոնէ պահպանած կը լինէր, մնացածն էլ վերջը Սատուած կողորմէր: Նաւաստիների կողմութեան մասին լսել էր, նախա-

զգում էր թէ ինչեր էր կրելու նրանց ձեռից: Սրտակոտոր գնում էր փողոցաւորների խօսխօսոցի, զբառացի միջով, յանկարծ անկիւնի վրայ մի մեծ յայտարարութիւն աչքովն ընկաւ, գոյնզգոյն արշինաչափ տառերով, որ հարիւր քայլ հեռաւորութիւնից էլ կարդացւում էր. «Երկաթուղու համար բանւորներ են հարկաւոր, օրա վարձը 2—10 շիլինգ. Վիլհէլմ փողոց № 17» Իսկոյն Լոպպին երեսը շուռ տուեց, նաւահանգիստի ճամբէն թողնելով քայլերն ուղղեց Վիլհէլմ փողոցը:

— Ես աշխարհիս խելառը պտէի լինիւ, որ երբ այլ կերպ հաց վաստակելու հնար կայ, այդ թողած ծովը գնայի: Աշխատելը ամօթ չէ, աւելի սիրով կամենում եմ սայլակ գլորելով հող կրել, քան թէ նաւաստիների քացիներն ու դմբուղներն ուտել: Օրական 2 շիլինգով կարելի է ապրել, մնացածը կը տնտեսեմ սև օրի համար: Ի հարկէ, գաղտնի գործերի ատենագրի համար սայլակ գլորելը իսկի էլ յարմար պարապմունք չէ, բայց քաղց յագեցնելու համար փող վաստակելը այժմ գլխաւոր հոգսն է. ուրեմն, Լոպպի, առանց ժամանակ կորցնելու անձի:

Գնաց պաշտօնեային ներկայացաւ, որ մշակներին ընդունում էր: Գործակալը սկզբից կասկածոտ հայեացք գցեց վրէն, երբ Լոպպու քընքոյշ սիպտակ ձեռները տեսաւ, որոնք դեռ կոշտ բանի սովոր չէին: Լոպպին ստիպուած սկսեց

լեզուի ճարտարութիւնը մէջ բերել, որով կարողացաւ գործակալին համոզել ու սայլակ քաշողի պաշտօնն ստանալ: Մի վկայաթուղթ ընդունեց, որ անյապաղ գնայ 40 մզոն հեռու գտնուող դրաֆական գետին, ուր երկաթուղին շինուելու էր: Մի քանի շիլինգ ճամբածախս ստանալով գործակալից մեր գաղտնի ատենագրիւրը շատ գոհ սրտով դուրս եկաւ Լոնդոնից իւր գործատեղը հասնելու, նոր ասպարէզը իբր հող կրող մշակ սկսելու:

Վայ նրա վիճակին: Սկզբում դառից էլ դառն էր. ողջ օրը առաւօտից մինչև մութը աշխատում էր ձիու նման, քնքոյշ ձեռները, որ միայն գրչակոթ ու ձիու սանձակոթ էին բռնել, այժմ փշտել էին, ու դարձել փուչիկ-փուչիկ, պլոկուել տեղ-տեղ: Մէջքն ու կռները ցաւից մոմոմ էին, ոտները հօ ընդդիմանում, չէին ուզում ծառայել, երբ օրուայ ծանր աշխատանքից իրիկունը իւր փոքրիկ հիւզն էր գալիս, դիշերները կոշտ ծղնտէ դոշակի վրայ քնելու: Այս տառապալի, կեանքը տեւց միայն եօթն օր, ապա նրա մարմինը դուրս կանգնելով աւելի առողջացաւ, կարողանում էր միւս բանւորների պէս աշխատել, որոնք սկզբում անչափ ծաղրել էին Լոպպու սիպտակ ձեռները, նուրբ բարեկազմ հասակն ու տեսքը:

Լոպպին ուսել էր մատեմատիկա. մտածելով հնար գտաւ իւր սայլակը այնպէս բարեփոխեց,

որ բաները դարձաւ նրա համար մի խաղ, այժմ նա սկսեց ընկեր մշակների վրայ ծիծաղել: Առաջին որ ստիպուած չէր առաջուայ պէս առու առու քրտինք թափել, վրայ երկուսը՝ վարձատրութիւնը օրուայ կամ ժամի հաշուով չէր, այլ շինած գործի քանակութեան համեմատ, ուստի վաստակում էր երկու անգամ աւելի քան թէ սկզբում: Այժմ նա օրեկան դատում էր 8—9 շիլինգ փող. խնայելով անտեսում էր աւելորդ գրամը, որ բան է, եթէ անգործ մնայ, կարող լինի եկող ձմեռ հանգիստ անցկացնել, Բացի այդ՝ բարեկամներ ճարեց ոչ միայն մշակների մէջ, այլ և վերակացունների ու մեծաւորների, որոնք երբեմն շահաւէտ պատուէրներ էին տալիս նրան: Այսպէս զնալով Լոպպու վիճակը այնքան բարւօքուեց, որ նախանձ կարող էր շարժել: Նա յոյսը չէր կորցնում, որ օրի մի օրը կըրկին բարձրանալու է: Երբ մի մարդ կարգին բան է ուսել, աշխատելու սէր ունի և առ հասարակ առողջ, մարդավարի ոքմին է, նրան ինչ կարող է անել ձախորդութիւնը, վաղ ուշ այդ մարդը կեանքի մակերևոյթն է բարձրանալու: Լոպպին շատ ցաւ ու կսկիծ էր քաշել, բայց իւր հաստատակամութիւնը, տակունութիւնը չէր կորցրել, գիտնական տեղեկութիւնները մանաւանդ, որ թագաւորազին հանդիպելուց դէսը շարունակ ժողովել էր, ամեն քամբաղութեան կարող էին յաղթել:

Վեց շարաթ անց այն օրից, երբ Լոպպին իբր հող կրող իւր ասպարէզն սկսել էր, ճաշուայ հանգստից ետ եկաւ, որ բանը նորից սկսի, տեսաւ երկաթուղու գծի վրայ սովորական կարգն ու հանդարտութիւնը խանդարուած, մշակները, վերակացուք պարապ գէս դէն էին դնում, ճարտարապետները մանաւանդ չափազանց մտահոգ գէմքերով վազվզում էին երկաթուղու վերջամասի ներքև ու վերև: Լոպպին հարց փորձ արեց, թէ ինչ անսովոր բան է պատահել ու իմացաւ, որ ճամբի շարունակութեան մէջ մի անակնկալ խափանառիթ է լոյս ընկել, ճարտարապետները չեն կարողանում իսկոյն վերացնել: Լոպպին թողեց իւր սայլակը, մօտեցաւ յիշեալ տեղին ու գտաւ ճարտարապետներին մատը բերաններում կանգնած: Լուռ ու մունջ քննեց հանգամանքները, ուսած մատեմատիկան ու սովորական անդօրրութիւնը մատուցին նրան ինչ որ պէտք էր: Մի քանի րոպէից ետ արդէն չարիքի թէ պատճառը և թէ վերացնելու հնարը գտել էր: Երկու խօսքով բացատրեց զլիսաւոր ճարտարապետի մօտ իւր հայեցակէտի ճշտութիւնը, սա համոզուեց հիմնովին ու պայծառացած դէմքով ձեռը մեկնեց Լոպպուն:

—Այ մարդ, այս ո՞վ է ձեզ ասել, դուք ճիշտ հողուն վրայ հասաք, սրանից աւելի նեղ տեղ չէր լինի: Իրար հետ ետոյ մենք խօսելու շատ բան կունենանք, առ այժմ շտապենք շա-

րաբաստ արգելքը մէջտեղից հեռացնել, որ այն-
քան գլխացաւանք է պատճառել: Այս կողմը ե-
կէք, այ մշակներ, այստեղ բանեցէք, այնտեղ
բաւական է. ժիր, եռանդով, հորէս շուտով գործը
կարգի կը բերենք:

Լոպպին պարապ չը մնաց, միւսների հետ
նա՛ էլ բանում էր, մի քանի ժամից զկնի ընդ-
հատուած ճամբէն նախկին կարգով առաջ էր
գնում: Լոպպին ուզում էր միւս մշակների հետ
իւր տեղը գնալ, գլխաւոր ճարտարապետը կան-
չել տուեց իւր մօտ:

— Ձեր խորհուրդը հրաշալի էր, այ մարդ,
տակն ուրախագէտ, առայժմ վերցրէք այս հինգ
գունէն (30 ու.) որին դուք լիուլի արժանի էք
ու ապա ասէք տեսնեմ. ո՞վ էք, ի՞նչ մարդ էք:
Դուք հասարակ մշակ չէք, այդ ցոյց է տալիս
ձեր արաքիներ:

Լոպպին առանց վարանելու պատմեց իւր
մեծաւորին այն պատճառները, որոնք իրան
բերել, հող կրող էին դարձրել: Գլխաւոր ճար-
տարապետը մնաց զարմանքից աչքերը չռած:

— Բարեկամ, դուք մի ընտիր ու ազնիւ մարդ
էք եղել, այդ գիտութիւնների ու նախկին պաշ-
տօնների տէրը մեծ վճռականութիւն է ունե-
նալու, որ գայ վերջը սայլակ դուրսդ, հող կրող
դառնայ: Անցածն անցած է, ուրախ եմ որ ձեզ
ճանաչեցի, ձեր արած ծառայութեան փոխարէն
ուզում եմ ձեզ ծառայել, ձեր սայլակը յանձնե-

ցէք ուրիշի ու իմ մօտ ընդունեցէք ճարտարա-
պետի օգնականի պաշտօնը. ոտձիկը շատ նշա-
նաւոր չէ: Դէ, ի՞նչ ասել կուզի, միշտ բարձր է
քան թէ ձեր օրավարձը. բացի այդ դուք կու-
նենաք ձեզ պատշաճ ու վայել գործ: Յուսամ, որ
առաջարկովս դո՛հ էք, այնպէս չէ:

— Ձեր արածն ինձ անկեղծ ուրախութիւն
է պատճառում. ընդունեցէք իմ սրտանց շնորհա-
կալութիւնը, պատասխանեց Լոպպին միանգա-
մայն հրճուած:

— Բարի, ուրեմն գնացէք երկաթուղու բու-
րօյի իմ բաժանմունքը, ձեզ պարապմունք կը
տամ. յոյս ունիմ, որ մենք լաւ բարեկամներ կը
դառնանք:

Լոպպին հրաժեշտ առաւ. կարիք չունէր այլ
ևս սայլակը լծի անասունի պէս քաշտալու, յանձ-
նեց ուրիշ մշակի ու ճամբայ ընկաւ մօտակայ
քաղաքը: Գնում էր ու ինքն իրան ասում.

— Էլի տեսնում եմ, որ թագաւորազը ճըշ-
մարտութիւն է բերանից հանել, եթէ առաջ մի
փոքր երկրաչափութիւն չէի ուսել, պտէի վիզս
ձգելով հող կրելը շարունակել, ի՞նչ յիմար, հող-
մարածի մէկը պտի լինիլ մի մարդ, որ ժամա-
նակի արժէքը չը ճանաչի: Փորձից տեսնում եմ,
որ մի անգամ ուսածը կորած չի. մի օր այդ
դրամագլուխը լոյս է ընկնում ու սիրուն տոկոս-
ներ բերում: Էլի Աստծուն փառք, ապագաս առ
այժմ ապահովուած է:

Քաղաքում մի յարմար հագուստ առաւ ճարտարագետի ընծայած փողով, վայելուչ կերպով գուգուեց, որ հետեւեալ օրուանից դրչով աշխատեն սկսի: Աս աւելի հաճելի էր նրան, քան սայլակ քաշ տալը:

— Այն, այն, ասում էր Լոպպին մի օր ինքն իրան գրչածայր սրելիս, ժամանակը սօկի է, շատ ճիշտ է: Եթէ կարգալ, գրել, օտար լեզուներ, մատեմատիկա ուսած չը լինէի, ինչ կը լինէր իմ վիճակը. — անպէտք, ողորմելի արարած մնացած կը լինէի ու շատ կարելի է բանդում նստած: ժամանակը խելօք գործադրելը, գիտութիւն ժողովելը չեն թողնում մարդուն, որ կորչի, ինչքան էլ կեանքի փոթորիկները ուժգնապէս նրա գլխի վրայով փչեն: Ամեն բանի գեղն ու բանալին է ուսանելը, շնորք սովորելը. կեցցէ թագաւորազը, որ ուսանելու փափագը իմ մէջ վառեց:

Թ.

Լոպպին առ ժամանակ խիստ լաւ վիճակի մէջ էր. գլխաւոր ճարտարագետը շատ գոհ էր նրանից և աշխատութեան համար վճարում էր առատօրէն, Լոպպին առանց կուշու հուպ անելու ապրում էր ու կարողանում մի կլորիկ գրամագլուխ կազմել: Երկաթուղու շինութիւնը առաջ գնաց, աւարտուեց, գրանով և Լոպպու գործը պրծուաւ: Չմեռն արգէն մօտ էր, ինչ կը լինէր Լոպպու վիճակը, եթէ ոռճիկից խնայողութիւն

արած չը լինէր: Բոլոր մշակները ցրուեցին, գլխաւոր ճարտարագետը Լոպպուն ողջերթ մաղթելիս սիրով խոստացաւ գարնանամտին գործ տալ, եթէ որեէ տեղ, պաշտօն ճարած չը լինի: Լոպպին այս խոստումի վրայ ուրախ դարձաւ Լոնդոն, փոքրիկ կացարան վարձեց, աւելորդ ժամանակ չը կորցրեց սկսեց, հիմնաւոր ուսումնասիրել երկրաչափութիւն, մատեմատիկա, ճարտարագետութիւն և այլն: Վաղ առաւօտ զբաղուած էր գրքերով, նկարներով, քարտէզներով, իրիկնագէմ հանգստանալու համար մի զբօսանք էր կատարում ու գալիս արուարձանի փոքր, մաքուր ճաշարանում իւր էժան, հասարակ, առողջարար ճաշը վայելում: Մի օր զբօսանքը սովորականից վաղ աւարտած Տավէրնի մօտ կանգ առաւ. դռան առաջ ծառան երկու ձի էր պահում սանձերից բռնած. զարմանալի սիրուն կենդանիք էին, Լոպպին իբրև ընտիր նժոյգների սիրահար, մտեցաւ աւելի մանրակրկիտ նայելու.

— Հրաշայի գեղեցիկ անասուններ են, Չօն, ասեց ծառային, ու՛մ են պատկանում:

— Չը գիտեմ, պնդոն, երկու օտար յարգիկ կան ներսը, չեմ ճանաչում, չեմ էլ տեսել նրանց կեանքումս, ձիանը նրանցն են:

— Շատ տարօրինակ է թւում ինձ, խօսեց Լոպպին, մեծատուն անձինք սովորութիւն չունեն այստեղ յաճախելու, իսկ այս ձիանը այնպէս թանկագին են, որ միայն խիստ հարուստ մար-

դիկ կարող են ունենալ:

— Ճիշտ է, նրանցից մէկը իրան մեծատնի պէս հպարտ է պահում, պատասխանեց ծառան. նա անշուշտ մի հարուստ լորդ է կամ դրա նման բան, միւսը երևի նրա ձիապահն է, բայց զարմանքս նրա վրայ է գալիս, որ երկուսն էլ մի սեղանի մօտ նստած միեւնոյն շշից են խմում: Այսպէս բան երբէք ոչ մի տէր իւր ծառայի հետ չի անում:

— Ի հարկէ ո՛չ, խօսեց Լոպպին, բայց այդ չի ինձ հետաքրքրողը. թող ովքեր ուզում են լինեն, անի, ինչպէս սրտով կուզէի մի ժամի չափ այս սեւաթոյրի վրայ նստել, ուզիլ ասեմ, այս ձին աննման արարած է:

— Այո՛, պարոն, ճշմարիտ էք ասում, ինձ նոյնպէս սեւաթոյրը աւելի դուր է գալիս քան այս մոխրագոյնը, ուստի զարմացայ թէ ինչո՞ւ դրա վրայ մեծատուն երևող մարդը չէր նստած, այլ միւսը, որ սպասաւոր է լինելու. այդ մասին գիմեցէք նրան, գուցէ թոյլ է տալիս նստել:

— Լաւ, ուզում եմ ներս գնալ, այդ մարդկանց մօտիկից մօտիկ անել. նրա համեմատ կարելի է եզրակացնել, թոյլ կը տայ թէ ոչ:

Մտաւ սեղանատուն, ուր միայն երկու հոգի էին: Ծառան ճիշտ էր նկատել, մէկը մի մեծատուն էր, միւսը սպասաւոր. Լոպպին, որ աչխարքում անչափ փորձուել, անթիւ բաներ էր տեսել, շարժուածքներին, յատկանիշներին նա-

յելով հեշտութեամբ այդքանը զանազանեց:

Ներս մտած բուպէին անձանօթները անգլիերէն էին խօսում: Լոպպին նստեց թէ չէ, մեծատուն անձն ասեց. «Փրանսերէն խօսենք, մեզ ականջ դնող կը լինի, զգուշութիւնն անհրաժեշտ է:

— Այս մարդը օտարական է, պատասխանեց սեղանակիցը Լոպպու վրայ կարճ զննող հայեացք գցելուց ետը. նա մեզ չի հասկանալ, բայց երբ հրամայում էք, ես կարող եմ ֆրանսերէն խօսել:

Որպէս զի իրան լրտեսի տեղ չընդունեն, ազնիւ Լոպպին ուզում էր նրանց պարզ ասել, որ ինքը ֆրանսերէն եւ հասկանում է, երբ անձանօթի մի խօսքը նրան այդ մաքից ետ կացրեց:

— Չգոյ՛ լինելը դովական բան է, սատանէն ամեն տեղ միշտ իւր պոչը խառնում է. եթէ թագաւորազ Ադելբերգը իմանար, թէ այստեղ նրա համար ինչ սպաս է եփուում, այն ժամանակ, մեր տղայ, վայն եկել է քեզ տարել:

— Ճշմարիտ էք ասում, պատասխանեց երկրորդը մտահոգ դառնալով, աւելի լաւ է, եթէ կուզէք, առանձին սենեակ գնանք: Թէ չէ՛ այս մարդը էլի կը հասկանայ, թէ մենք ինչի՛ վրայ ենք խօսում:

— Չէ, չեմ կարծում, ասաց լորդը կամաց, փորձելու համար կարող ես հետը խօսել:

Ինչքան էլ ձայները ցածրացնում էին, Լոպպին ամեն մի խօսք հասկանում էր: Թագաւորազի անունը նրան շուարեցրեց, սիրտը վկայում

էր, որ այս Աղելքերդը իւր թագաւորազն է և վճռեց իրան այնպէս ձեացնել, իբր Ֆրանսերէնից բան չի հասկանում. անտարբեր կերպարանք ընդունեց, իբրև թէ անձանօթներին ուշ չի դարձնում և իրան այնպէս էր պահում, ոնց որ տըխմարի մինը: Յանկարծ նստողներից մէկը նրան մտեցաւ ու Ֆրանսերէն քաղաքավարի հարցրեց, արդեօք նա դուրսը ծառային չի տեսել ձիաների մօտ:

— Ձեռ հասկանում, պատասխանեց Լուպլին անգլիներէն ու գլուխն օրօրեց.

— Ես հարցնում եմ, պարոն, արդեօք ծառանդ եռ ձիաների մօտն է, կրկնեց այժմ անգլիներէն:

— Այո, պարոն, պատասխանեց Լուպլին այնպէս սիրալիր ու պարզ կերպով, որ անձանօթների սրտերում եղած կասկածն էլ կարող էր վերացնել. այո, պարոն, շատ գեղեցիկ ձիաներ են:

— Անկասկած, գեղեցիկ են, շնորհակալ եմ, ասեց անձանօթն ու դարձաւ սեղանակցի մօտ:

— Անհոգ եղէք, իմ լորդ, այս մարդը ցանկանար էլ, չէր կարող մեզ համար վտանգաւոր լինել: Տխմարութիւնը երեսից ձկնում է, անտաշի մէկն է:

— Փոյթ չէ, զգոյշ լինելը դովական է, մէջ տեղը փօքրիկ բան չի խաղում, ասեց լորդը, այժմ գործից խօսենք, դու գիտես հօ ինչ բանի մասին է:

— Ես այսբանը գիտեմ, որ աղին լորդը

ու իմ տէրը իրար հետ գրազ են եկել, մնացած հանդամանքները ինձ անյայտ են.

— Բարի, ես քեզ կը յայտնեմ. նորերս միա-



տեղ էինք, խօսք ու զրոյց եկաւ գերմանական ու անգլիական ճարպիկութեան վրայ ձի ու կառք վարելում: Քո տէրը պնդում էր, որ գերմանա-

ցիք այդ բանը աւելի լաւ են հասկանում քան թէ մենք. ես պաշտպանում էի իմ երկրի պատիրը. բանը հասաւ գրազի, մրցումի: Գլուխներս գինուց ու եռանդից տաքացած էր, կապած գրազը քսան հազար գրվ. ստերլինգ է. անգլիացի բարձր մեծատուն, հարուստ անձինք ներկայ էին, դաշնագիրը ստորագրել են. 8 օրից ետ գրազը վճռուելու միջոցին ամենն էլ ներկայ են լինելու. կարճ ասեմ՝ ես քո օգնութեան կարիք եմ զգում:

— Ո՞նց, ինչ կերպով, աղնիւ լորդ:

— Ահա՛ թէ օնց, ես գիտեմ որ դու թագաւորազի ծառաների մէջ ամենահմուտ ձիավարն ու կառավարն ես. տասն անգամ զգուշացրեց թագաւորազը քու անունով. «դուք չէք ճանաչում եմ ձիավար Գէորգին, իմ ձիաներին, իմ սևաթոյր քուռակ Աքիլէսին: Գուք գրազը կորցնելու էք, երբ իմ Գէորգը ձեր ախոռապետի դէմ դուրս գայ»: Հա՛, ես քեզ էլ էի ճանաչում, նրա ձիանն էլ. բայց ե այնպէս գիտէի, որ դրազը կը տանեմ, եթէ քեզ իմ կողմն ունենամ: Գործը շատ պարզ է, դու իբրև ճարպիկ մարդ, կարող ես այնպէս սարքել, որ իմ ձին առաջ ընկնի. դրա համար ի հարկէ լաւ վարձատարութիւն կստանաս ինձանից. մի արշաւը խոչընդոտներով է, քու սևաթոյրը պտի վազիլ իմ մոխրագոյնի հետ:

— Բայց դուք քաջ գիտէք, որ սևաթոյրը ձեր մոխրագոյնից ամեն բանով գերազանց է:

— Նոր հարցնում ես, շնչ գլուխ, արդեօք գիտեմ թէ ոչ: Եթէ այդ չիմանայի, բանս կտրուել էր, որ գայի, հետո գրոյցի նստէի: Գու կարելի է էլի գլխի չես ընկնում. եթէ թագաւորազը իւր գործը ապահով չիմանար, երբէք ահագին գումարով գրազ չէր բռնել: Իմ միտքն է նրա դրամը իմ ձեռը գցել, հասկանում էս:

— Հասկանում եմ, աղնիւ լորդ, բայց ես այստեղ ինչ ունեմ, անելիքս ինչ է:

— Նոյնպէս դրամ վաստակել: Չիդ այնպէս քշիր, որ տէրդ գրազը կորցնի ու այն ժամանակ քսան հազար ստերլինգի երկու հազարը քոնն է:

— Ի՞նչ էք ասում, լորդ, այդ մի ցածահագի գաւաճանութիւն կը լինէր տիրոջս դէմ:

— Վահ, դու էլ բան ասիր, երկու հազար գրվ. ստերլինգով քու խղճւածանքին կը կերակրես, հանդարտ կը նստի:

— Բայց չէ՞ որ Ադելբերդ թագաւորազը խաբէութիւնը անշուշտ կիմանայ ու դրա համար ինձ պաշտօնից իսկոյն կը վաճարի:

— Եթէ այդպէս կանի, կը դաս ինձ մօտ ծառայութեան կը մտնես: Քեզ նման ճարպիկ ոքմինի ամեն ժամանակ կարիք ունեմ:

— Երկու հազար գրվանքէն, իմ լորդ, չէ՞ որ քիչ է:

— Քիչ է, զարմացած հարցրեց լորդը, քաշելիք նեղութիւնէ ինչ է լինելու, չէ, Գէորդ, դու ամօթի կտոր չունես: Անելիքդ այնքան պտի լի-

նիլ, որ մինչև նպատակէտ մօտ հասնելը առաջին տեղը գնաս ու ետոյ թողնես իմ մտխրագոյնին առաջ ընկնի:

— Լաւ, իմ Լորդ, հապա ինչ կը լինի լծի ձիանց վերաբերմամբ, ձեր դրազը միայն կիսովին տարուած կը լինի, եթէ թագաւորազին կառք վարելում չը յաղթէք:

— Է՛հ, դրա համար իսկի հօգ չունեմ, իմ լծի ձիանը ամեն կողմով գերազանց են ձերիննորից, այդտեղ վախ չունեմ. կառք վարելում դու պայմանի տակ չես մտնում, ազատ ես, ես վստահ եմ, որ տանելու եմ:

— Գնա հարց է, իմ Լորդ, արդեօք ճանաչում էք թագաւորազի ունգարական լծի ձիանը:

— Իհարկէ ճանաչում եմ, հ՞ը, ինչ կայ այնպէս:

— Չորս ձին արշաւում են իրար հետ ոնց որ քամի:

— Իմ սե ձիանը աւելի արագ են փախչում:

— Ախր մտանում էք, թէ ինչպէս են վարժած, իսկի տեղեկութիւն ունիք, որ ամենաթունդ վագելու միջոցին մի հատիկ խօսքով կարելի է կանգնեցնել. ինձնից ու թագաւորազից զատ ուրիշ ոքմին չի իմանում այս բացականչը:

Լորդն ունքերը կիտեց, — սատանի սչքը քուռանայ. իսկի այդ բանը մտքովս չի անցկացել, եթէ թագաւորազը այդ նպատաւոր կողմը լաւ բանեցնի, ի հարկէ... ես...: Սակայն վախենալու

ինչ կայ, դու կարող ես այդ բացականչը մի կողմ թողնել: Նզովում լինի սատանան, նոր է ինձ հասկանալի դառնում, թէ ինչո՞ւ թագաւորազը շարունակ նախազուշացնում էր: Գրազը կապուած վերջացած է, երկու ստով ընկել եմ մէջը, ինչպէս լինի, պտես օգնիլ: Էլ նազ ու քուղ մի անիլ, Գէորդ, երկու հազար գրվանքէն ահագին դուժար է, ամեն օր հեշտով մարդու ձեռ չի ընկնիլ. Գերմանիա գնաս, կարող ես նրա միայն տոկոսն ուտելով ապրել:

— Ախր ինչո՞ւ, իմ Լորդ, իմ տիրոջ մօտ աւելի լաւ եմ ապրում, այսպիսի չնչին գնով ինչո՞ւ իմ տիրոջը դաւաճանեմ:

— Ա՛, հիմի հասկանում եմ միտքդ, դու շատ տակէտակ խորամանկն էս, լաւ, թող լինի Յ հազար:

— Չէ, հինգ հազար, իմ Լորդ, այնպիսի բարի տիրոջ չի կարելի փոքր գումարի համար խաբել:

— Հինգ հազար, աղաղակեց Լորդը սարսափած, մտրդ Աստծու, դա հօ մի ամբողջ կարողութիւն է:

— Ի հարկէ, իմ Լորդ, մի ամբողջ կարողութեան էլ կարիք ունիմ, երբ Գերմանիա դառնալով կարգին ապրել ուզենամ, ոնց որ այժմ տիրոջս մօտ Անգլիայում: Բայց իմ միջոցով երեք այդչափ դուք տանում էք, եթէ համաձայն չէք, ձեր կամքն է, ես կը մնամ մի պատուաւոր մարդ ու

կը ծառայեմ տիրոջս մօտ:

— Գրոզի տարած, ինչ անպատկառ մարդ ես եղել. հեշտ է հինգ հազար ասելը, դա ձեր փողով երեսուն հազար թալեր է: Չէ, աւելի լաւ է գրազից ես կենալ:

— Ոնց կուզէք, իմ Լորդ, ձեր կամքն է, ասեց թագաւորազի ծառան սառնասիրտ ու սեղանի մօտից վերկացաւ, աւելի շատ դուք էք կորցնում և ոչ ես:

— Դո՛ւ գրողի խեղդած, ինչ ես չուտով տեղէդ թռչում, շատ էլ ջանս ցաւում է, ինչ արած, ընկել եմ ուժիդ տակ, հարկադրուած պտեմ քու ասածն ընդունիլ: Լինի հինգ հազար գրվ. կըստանաս հէնց որ յաղթութիւնը իմս եղաւ: Խօսքս խօսք է:

— Հաւատում եմ, իմ Լորդ, էլ ուրիշ բան չի հարկաւոր, երբ խոստումը բերանիցս թռաւ, պրծուած է. Աստուած ձեզ հետ, ինձ հարկաւոր է շտապիլ, թէ չէ իմ երկար բացակայութիւնից կասկածի կը գան:

— Ես քեզ չեմ պահում, գնա՛, բայց մի մոռանալ, որ 5 հազար գրվ. ամբողջ կարողութիւն է:

— Այդ ինձ լաւ յայտնի է, իմ Լորդ, դուք ապահով կացէք, գրազը ձեր կողմն է:

Այս խօսքերով հեռացաւ սպասաւորը սենեակից. Լորդը արհամարհական հայեացք գցելով նրա ետնից շընջաց, — այ դու, ստոր արարած, տես, ինչպէս է իւր շահը հասկանում: Գլուխը

քարը, գրազը իմ տարածն է, մէջտեղը քիչ օգուտ չունեմ:

Կրկին թեթև ակնարկ գցեց Լոպպու վրայ, որ մի բաժակ պորտէր գինի առջևը դրած, անտարբեր նստել, չուբուխը բերանին լուսամտով դէպ փողոցն էր նայում:

— Դա ոչինչ չի նկատել կամ հասկացել, փնթփնթաց Լորդը ըթի տակ ու դուրս եկաւ: Լոպպին այնքան համբերեց, որ նա ձին նստեց ու սրարչաւ հեռացաւ:

— Այսպիսի ստորութիւն դեռ աշխարք չի տեսած, գոչեց Լոպպին գայրացած վեր թռչելով: Տարակոյս չը կայ, թագաւորազ Ադելբերգը իմ թագաւորազն է ու խարդախները կամենում են նրան խաբել, գլխին խաղ խաղալ. սպասիր, ես ման եմ գալու նրան գտնիլ, այն ժամանակ տեսնենք, թէ գործը ինչ ընթացք կատանայ: Տես, ինչ լաւ էր, որ Փրանսերէն սովորել էի: Ա՛հ, ինչպէս է բարեսիրտ թագաւորազը զարմանալու, երբ ես նրան այս ստոր պատմութիւնը բաց անեմ: Դէ, էլ ժամանակ կորցնելը պէտք չի, Լոպպի, այսօր նրան գտնելու ես, նախադատչացնելու, ու ետոյ փորձելու ես, որ դու տղայութեանդ միջոցին զուր չես ախոռատանը ծառայել. Գէորգի պէս ստոր արարածներին ձիափարելու մէջ չես ասիլ թէ Աստուած է ստեղծել: Դէ, սոռաջ, ինչ լինելու է, թող ժամ առաջ լինի: Գդակը ծածկեց ու օստիկանատան ճամբէն

բռնեց, իբրև ամենակարճ միջոց թագաւորազի բնակարանը գտնելու համար: Այնտեղ յայտնեցին, որ այդ անունով թագաւորազ Լոնդոնում չի բնակուում:

— Անկարելի է, նա այստեղ է լինելու, ասեց Լոպպին հաստատապէս, խնդրում եմ, պարոններ, օտարականների անուանց ցուցակը լաւ նայել:

Նրա խնդիրը յարգելով նորից նայեցին, սակայն դուր, թագաւորազի անունը լոյս չընկաւ, Լոպպին տխուր դուրս եկաւ այնտեղից:

— Միթէ խօսքը ուրիշ թագաւորազի մասին էր, հարցրեց Լոպպին ինքն իրան, շատ կարելի է, բայց սիրտս ինձ հանգիստ չի տալիս, պտեմ ման գալ, հարց փորձ անիլ:

Մէս մտածեց, դէն, վերջն եկաւ այս մտքին. «արգեօք լաւ չի լինիլ մեծանուն անձանց տները գնամ ու ծառաներից հարցնեմ. թագաւորազը բոլոր առաջաւոր ընտանիքներում ծանօթ, յայտնի պտի լինիլ»: Այս ասեց ու առանց կանգ առնելու գնաց անգլիական մեծատան հոյակապ պալատը, որ ամենից մօտիկ էր: Քաղաքավարի կերպով տեղեկութիւն խնդրեց իւր թագաւորազի մասին, բայց ոչով բան չը գիտէր: Գնաց առաջ, չորս հինգ փառաւոր հիւրանոյններում հարցրեց. ամեն տեղ նոյն բացասական պատասխանը: Հետզհետէ գալիս էր այն համոզման, որ այդ իւր թագաւորազը չէր լինելու, որին խարդախները կամենում էին խարել, Աւզում էր իւր բնակարանը

դառնալ, նրա միտքն ընկաւ հետեւեալը.

— Թագաւորազը իբրև թագաժառանգ պտի այստեղի արքունիքում յայտնի լինիլ, արի իբրև վերջին փորձ այնտեղ էլ գնամ:

Պայտը հասնելով դռնապանին հարցրեց. նա տեղեկութիւն չունէր, զրկեց սպասաւորի մօտ. նա էլ բան չիմանալով մատնացոյց արեց սենեկապետին: Սա թուեց բոլոր մեծամեծ անձերի անունները, որոնք արքունիքի մէջ երթեկ ունէին. թագաւորազի անունը չկար մէջը, այժմ Լոպպին հանգստացաւ. «ուրեմն խաբելածաղիկ թագաւորազը իմ թագաւորազը չէր»: Ծնորհակալութիւն արեց սենեկապետին, սա էլ ուղեկցեց մինչև պալատի գլխաւոր մուտքը, ուր մէկ էլ տեսնեա մի կառք սընալով ներս եկաւ: Լոպպին կողքի կանգնեց, որ կառքն անցնի, ապակէ լուսամուտների միջով երկու վայրկեան ներս նայեց ու գազէ ճրագների լուսի շնորհով պարզ տեսաւ թագաւորազին, ուղիղ իւր թագաւորազին: Տեսածը սուտ չէր, նա լաւ էր յիշում իւր բարի խորհրդատուի դիմագծերը:

— Ա՛խ, տէր Աստուած, աղաղակեց նա ու ամուր բռնեց սենեկապետի կուռք. հէնց սա է իմ ասածը, սա էր թագաւորազ Աղերբերգը:

— Իսկի էլ չէ, աչքի լոյս, սխալ էք, գա էր նորին պայծառափայլութիւն գրաֆ Հոխբերգը. ես նրան լաւ եմ ճանաչում, ամենաքիչը շաբաթը մի անգամ արքունի սեղանին մասնակցում է:

Այժմ կարծես մի փառ ընկաւ Լոպպու աշ-
քերից, թագաւորազը ճամբորդոււմ էր ծպտուած.
նա իրան իւր կալուածներից մէկի անունով է
կոչել:

— Ի՛սկ և ի՛սկ, սիրելի պարոն, սա՛ դրաֆ-
հօխերըն է, ասեց Լոպպին սրտոււմ խնդարով,
միայն ազատոււմ եմ ասել, թէ՛ սրտեղ է ապրում նա:

Մառայողը մեծ սիրով կատարեց նրա խըն-
դիրը, ասեց փողոցի ու տան Ձ-ը: Լոպպին ցըն-
ծուն գէժքով հեռացաւ դէպ իւր օթեանը, մըտ-
քում վճռած որ վաղն անպատճառ թագաւորա-
զին դանի ու կարևոր գաղտնիքը հազորդի:

— Ի՛նչ լաւ էր, որ այսօր դուր ժամանակ
չը կորցրի, թէ չէ վաղը ոչ չ Լոնդոնը տակն ու
վրայ անէի, թագաւորազին գանսողը չէի:

ժ.

Հետեւեալ առաւօտ դեռ լոյս չը բացուած
Լոպպին զարթել, շորերը հագել պատրաստ էր:
Իսկոյն վազեց այն փողոցի ուղղութեամբ, ուր
թագաւորազը ապրում էր. տան Ձ-ը փնտռելով
գտաւ բնակարանը, դուռը վռագ թխկացրեց ու
դէմն եկող ծառային հարցրեց.

— Արդեօք թագաւորազը ժամանակ ունի՞
մարդ ընդունելու:

— Թագաւորազը պատրաստութիւն է տես-
նում մի երկու օրով ճամբորդելու, չի կարող որ-
մին ընդունել:

— Այդ ի՛նչ հիանալի է, որ նրա դուրս գա-
լուց առաջ եմ եկել, խօսեց Լոպպին, ես կամե-
նում եմ նրա հետ խօսել, շատ կարևոր բան ու-
նեմ նրան հազորդելու. իմացրէք նրան անյապազ,
խնդրում եմ:

— Ի՛նչ ասեմ, ո՞վ է եկել, ինչպէս է ձեր
անունը, կարելի է իմանալ:

— Անունն այստեղ գործ չունի, պատասխա-
նեց Լոպպին, յայտնեցէք, մի մարդ եկել է, նո-
րին բարձրութեան բան ունի ասելու այն գրազի
մասին, որ եկել է Լորդ... Ա՛հ, անունը մոռա-
ցել եմ:

— Կարծեօք Լորդ Սէյմուր.

— Ճիշտ այդպէս, այդ Լորդ Սէյմուրի հետ
ունեցած զրազի մասին շատ կարևոր յայտնա-
գործութիւն պատի անիլ:

— Լաւ, կը փորձեմ, տեսնեմ՝ կընդունի՞. բայց
խելքս չի կարում, որ ձեզ նրա երեսը թողնեն, ասեց
ծառան ու հեռացաւ: Սակայն իւր կարծածի հա-
կառակ Լոպպին ներս հրաւիրուեց ու մի րոպէից
ետ կանգնած էր արդէն թագաւորազի առաջ,
որին լաւ ճանաչում էր, բայց ինքը մնաց առանց
ճանաչուելու,

— Ո՞վ էք դուք, իմ պարոն, և ինչ ունէք ինձ
ասելու, հարցրեց թագաւորազը:

— Թէ ես ո՞վ եմ, դրա մասին ետոյ, ինչ որ
ձեզ ասելու եմ, ահա՛ այս է. «Լորդ Սէյմուրը
խաբերայի մէկն է, իսկ ձեր ծառայ Գէորդը մի՛

նենդամիտ ու դաւաճան արարած»:

—Ձգոյշ պճրոն, գոչեց թագաւորազը անկ-
մանկ եղած, այդ ինչ խօսքեր էք գործ ածում
իմ բարեկամ Լորդի մասին, որ և է ապացոյց
ունէք այդպէս խօսելու համար.

—Ի հարկէ, ձեր բարձրութիւն, ասեց Լոպպին
ու մի առ մի պատմեց երեկուայ տեսածն ու
լսածը:

—Իրաւ որ այդ մեծ ցածահոգութիւն է, աղա-
ղակեց թագաւորազը. տեսէք, Լորդ Սէյմուրը
ինչ խաբեբան է եղել, իսկ Գէորգը, որի հաւա-
տարմութեան ինչքն չէի հաւատալ, խայտառակ
դաւաճանութիւն է յանձն առնում իւր տիրոջ
դէմ: Բայց հաւատարս չի գալիս, մէջտեղը ապա-
ցոյց չըկայ. պճրոն, գուք ինձ անձանթ մարդ
էք, առաջին անգամն եւ ձեզ տեսնում, ինչպէս
վստահանամ ձեր ասածներին:

—Եթէ ձեր բարձրութիւնը կամենում է հա-
մոգուել ասածիս ճշմարտութեան մէջ, թող միայն
Գէորգին այստեղ կանչել տայ ու նրա անամթ ա-
րարքը երեսին խփի: Ձեր թոյլտութեամբ կողքի
սենեակում կապասեմ, երբ խարդախը աշխատի
ուրանալ, ես իսկոյն լոյս կընինեմ նրա առաջ:
Կարծում եմ, իմ երեւալը նրան այնպէս կը խոր-
տակի, որ սուտ խօսելը կը մոռանայ:

—Լաւ, այդ միջոցը հեռանաք կանենայ,
եթէ ձեր ասածին ապահով էք, սակայն դժուա-
րանում եմ հաւատալ, որ Գէորգը... է՛ն, այժմ

կը տեսնենք, ինդրեմ մտէք կողքի սենեակը ու
դուռը կէս բաց թողէք, որ այստեղ խօսուածը
կարենաք լսել:

Լոպպին հնազանդեց. թագաւորազ Աղել-
բերդը զանգահարեց ու սենեկապանին հրամայեց
Գէորգին կանչել, որը մի քանի վայրկեանից ետ
սենեակը մտաւ: Լոպպին դռան ճեղքից ծկրակե-
լով իսկոյն նրան ճանաչեց: Թագաւորազը հան-
գարտ խօսեց.

—Լսիր, Գէորգ, ես իմանում եմ, որ դու Լորդ
Սէյմուրից կաշառուել ես գրազը տանել տալու
համար, խղճմտանքդ վաճառել ես հինգ հազար
գրգ. ստերլինգով, ճիշտ է:

Ծառան սփարթնեց, դառաւ սպիտակ քա-
թան, սակայն անամթը ճակատը ցցած ճգնեց
ամենն ուրանալ, — ո՞վ է ասում, դա մի անպատ-
կառ ստախօսութիւն է, աշխարք էլ ինձ տային,
ես իմ բարի տիրոջը դաւաճանող չէի:

—Բայց և այնպէս դու նրան դաւաճանել
ես, վրայ բերեց Լոպպին, դռան ետնից շտապով
դուրս պրծնելով ու խաբեբայի առաջ անակնկալ
տնկուելով, ես կարծում եմ, դու ինձ մտաբերում
ես երկկուանից դէսը, չէ:

Ոնց որ մէկը վրիժառու հրեշտակին զայրա-
գնած տեսնի ու զարհուրելով իրան կարցնի, այն-
պէս էլ յանցաւորը դողալով ու լքլքալով Լոպպու
կայմակնափայլ աչքերից փուռեց թագաւորազի
տոների առաջ, ծնկներով փոթաթուեց ու նե-

րումն հայցեց, պաղատեց:

— Ուրեմն ճիշտ է եղել, խօսեց թագաւորազը ցաւագին ու ազնիւ դէմքը թեթեւ սփրթնացրեց, Գէորգ, այսպիսի բան երբէք երբէք քեզնից չէի սպասիլ:

— Ա՛խ, տէր, սա մի փորձանք էր, առաջարկած գումարը խիստ մեծ էր, աչքերս կուրացան: Ողորմացէք, ձեր բարձրութիւն, ողորմացէք, երբէք, երբէք էլ այդպէս դայթակղութեան չեմ տարուիլ:

— Բաւական է, աչքէս հեռու, սենեակիցդ իրաւունք չունենաս դուրս գալ, քաշուի՛ր, թըշուառակա՛ն:

Ծառան ընկած տեղից վերկացաւ ու օրօրուելով սենեակը թողեց. թագաւորազը հրամայեց սենեկապանին, որ խիստ հսկի, ապա դարձաւ դէպի Լոպպին.

— Ինչո՞վ դոհունակութիւնս յայտնեմ ձեզ, պարօն, դուք ինձ մեծ ծառայութիւն արիք իմ դէմ սարքած նենգամտութիւնները բանալով: Գրազի մէջ տարուիլը ինձ խիստ կարիքի մէջ էր գցելու: Տասն չորս օրից ետ ուղևորուելու էի դէպի հայրենի մայրաքաղաքը, ձեռիս դրամներն այնպէս հատել էին, որ գրազի փողը վճարելուց ետ հազիւ թէ ճամբածախս մնար մօտս: Յատուկ շնորհակալութիւն, ազնիւ պարօն, վասնզի այժմ գրազը ոչնչացած է ու փուտ դառած, իմ տագնապն էլ ձեր միջոցով վերացուած:

— Ինչո՞ւ է գրազը ոչնչացած, փուտ դառած, ձեր բարձրութիւն:

— Գէ, ի հարկէ, երբ խաբէութիւնը մէջ է մտել:

— Սակայն ձեր բարձրութիւնը չի խաբել ոքմինի, այլ ձեզ ուզում են խաբել: Դուք կարող էք գրազը պահել ու անշուշտ տանել:

— Ի՞նչ էք ասում, դա անկարելի է. Գէորգը իմ ամենաընտիր ձիաւարն է, նա միայն կարող էր տանել:

— Ներեցէք համարձակութեանս, ձեր սեւթոյր նծոյգի միջոցով ամեն մէկն էլ գրազը կը տանի, եթէ նա կարգին ձիաւար է:

— Սսենք թէ այդ յաջողեց, կառարչաւն ինչպէս կը լինի. Գէորգից զատ ոչ ոք չի կարող իմ ունդարական լծի ձիանը վարել, անհնարին է:

— Սյդ էլ գուցէ յաջողուի, ձեր բարձրութիւն, դուք դեռ ութ օր ժամանակ ունէք, այդ ութ օրն ինձ բաշխեցէք, ես պարտաւորուում եմ Գէորգի տեղը բռնել:

— Դո՞ւք, ձիաւարելու և կառք բանացնելու մէջ այդքան հմտութիւն ունէք:

— Փորձելը դժուար բան չէ. երբ ուզէք, փորձեցէք, տեսէք:

— Հէնց հիմա կամենում եմ փորձը տեսնել, ասեց թագաւորազը, հրամայում եմ այս րոպէիս Սքիլլէսը թամբել ու բակը բերել, սակայն հարկ

եմ համարում նախազգուշացնել, որ Աքիլէսը շատ վտանգաւոր կենդանի է անհմուտ ձիավարի համար:

— Ես էլ կարծում եմ, բայց ոչ ինձ համար, պատասխանեց Լոպպին վստահ ու շտապ իջաւ ընդարձակ բակը, ուր ձին պատրաստ կանգնած էր: Թեթևութեամբ թռաւ մէջքը ու թաղաւորազի աչքի առաջ ձիավարելու մէջ մի այնպիսի շնորք ցոյց տուեց, որ ճարպիկութիւնով միանգամայն ապշեցրեց:

— Հերիք, հերիք, սիրելի պարոն, ձայն տուեց վերեւից թաղաւորազը, ես արդէն տեսայ, եկէք իրար հետ խօսենք:

Լոպպին ժպտալով ներքև թռաւ ձիուց ու շտապեց թաղաւորազի մօտ, որ ընդունեց այժմ աւելի ուրախ ու քաղցրադէմ:

— Դուք ամենաընտիր ձիավարն էք, որ ես երբեքիցէ տեսել եմ, այդ կողմից կարող ենք մեր գործի մէջ ապահով լինել, այժմ դրազի միւս կէտը. — ունգարական լծի ձիանս վարժուած են Գէորգի ձեռով, որ ամենաթունդ սրարշաւի միջոցին յանկարծ կանգնեցնում է ունգարերէն ընթէկ խօսքը միայն կանչելով: Նա իւր գործի ու ձիանց վրայ այնպէս վստահ էր, որ միշտ լիայոյս էր թէ յաջողութիւնը իւր կողմն է. այդ հիման վրայ անկասկած հաւատում էի, որ դրազը տանելու եմ: Աներկիւղութիւնով պէտք էր ամենին ապշեցնել. ահա թէ ինչպէս. իմ ձիանը թունդ

փախտ առած գնալու էին դաշտ ի վէր մինչև Թեմզայի ափը ու միայն պոնգին, որ դառիվէր դէպի գետն է իջնում, անակնկալ կանգ առնելու: Այս ձևի շնորք ոչ մի անգլիացի չի կարող անել, ուստի դրազը անպայման իմ կողմն էր մնալու: Այժմ այս բանի կատարելը անկարելի է, միայն Գէորգը կարող էր, մէկ էլ ես, իսկ պայմանագրում որոշ ասուած է, որ դրազ եկողներէց ոչ ոք իրաւունք չունի ձի կամ կառք վարել. Լորդ Սեյմուրն էր այդ պայման անողը, այժմ հասկանալի է դառնում նրա մտադրութիւնը:

— Իսկի հոգ միք անիլ, ձեր բարձրութիւն, ես պարտաւորւում եմ դրազը ձեր օգտին տանել:

— Դձը, սակայն ասէք տեսնեմ, ո՞վ էք դուք, հարցրեց թաղաւորազը, նախ քան ձեզ վստահելը, իմանալու եմ թէ ո՞ւմ հետ գործ ունեմ: Ձեզ վիրաւորելու միտք չունեմ, բայց գուցէ դուք Լորդ Սեյմուրի մարդկանցից էք, չրկուած իմ Գէորգին ամբաստանելու, որ նրան հեռացնելուց ետ միանգամայն ապահով լինի աջողութեան վրայ: Իմ Գէորգը վաղ ուշ կարող է իւր արածի վրայ փոշմանել ու զղջալ, իսկ Լորդ Սեյմուրի մարդկանց վրայ ինչպէս վստահ լինեմ:

— Ա՛հ հասկանում եմ, ժպտալով պատասխանեց Լոպպին, եթէ ձեր բարձրութիւնը իմ ո՞վ լինեն իմանայ, այն ժամանակ այլ կարծիք կունենայ:

— Դէ, միք ուշացնիլ, ասէք վերջապէս, ո՞վ

էք դուք:

Լուպպին անխօս հանեց ծոցի դրամը, որ շատ տարի առաջ թագաւորազից ստացել էր:

— Խնդրեմ, նայէք այս լուբդորին, երևի ճանաչում էք:

— Ի՞նչ կայ նայելու, մի ոսկէ դրամ է, ուրիշ ի՞նչ պտի լինիլ:

— Ահա թէ ինչ. թագաւորազ, այս ոսկի դրամը ընծայեցիք դուք մի օր, երբ ձեր գնդակահար արած թուչունը անդունդից հանեցի, մի քարափի արծիւ էր, յիշում էք թէ ոչ:

— Ճշմարիտ, այդպէս բան միտս է դալիս. միայն ասէք Աստծու սիրու, միթէ կարելի է որ դուք այն ժամանակուայ փոքր դադարկաշրջիկը լինէք:

— Այո, ձեր բարձրութիւն, հէնց իսկ այն դատարկաշրջիկը, միայն մի քիչ հասակ առած, ժեծացած, խօսեց Լուպպին ժպտալով, այս ոսկին ինձ նուիրելիս ասում էիք, որ ես մրգի եմ տալու վասնեմ, այժմ տեսնում էք թէ սրբան ինչայող եմ եղել:

— Տէր Աստուած, սա մի զարմանալի հանդիպումն է այսքան երկար ժամանակից ետ, ես յիշում եմ պարզ, այն միջոցին դուք իսկապէս, ներողութիւն անքաղաքավարութեանս, էիք մի դատարկաշրջիկ, մի շորթի արարած, իսկ այժմ...

— Այժմ էլ այն չեմ, լրացրեց նրա խօսքը Լուպպին, իսկ եթէ ես բարեփոխուած եմ, դրա

պատճառը ձեր բարձրութիւնն է:

— Ի՞նչպէս, քո, զարմանքից հարցրեց թագաւորազը:

— Այո. դուք ոսկուց զատ ինձ տուիք երկու բարի ու շատ գործնական խրատ. առաջինն էր՝ ժամանակը ոսկի է, անշահ մի թողիլ անցնի. երկրորդը՝ ուսիր ինչ որ կարող ես, մի օր պէտք կը գայ. յիշում էք այս խօսքերը:

— Այո, այո, յիշում եմ. խրատները երկուսն էլ վատ բաներ չեն: Հը՞, ասէք տեսնեմ, հետեւէլ էք թէ չէ:

— Ամենայն խղճի մտօք ու միակ ցանկութիւնս ո՞յն էր, այնքան չը մեռնեմ, որ ձեզ մէկ էլ տեսնեմ: Դ՛րանից ետ ձեզ տեսել եմ մի անգամ շնավարժ տղայ եղած ժամանակս, դուք էլ ինձ որսի շան լակոտ ընծայեցիք. այդ էլ յիշում է ձեր բարձրութիւնը:

— Այո, այո, միտս է, փոքր թափառաշրջիկը քիչ կարգին բան էր դառել, թէև դեռ ուղիղ ճամբէն չէր գտել, նա ժամանակը շահեցրել էր, բայց ոչ ուղիղ կերպով:

— Ճիշտ էք ասում, ձեր բարձրութիւն, այդ այն ժամանակն էլ նկատեցիք. ես սկսայ ուսանել, ամեն ինչ ուսանել, ինչ որ հնարաւոր էր. շնապահ տղայից դարձայ գոմի ծառայ, այդտեղից ձիապահ, ձիավարժ. ապա գնացի դպրոց, աւարտելով դարձայ գրագիր, գրագրից գաղտնի գործերի ատենադպիր ոմն Հատար նախագահի

մօտ: Բաղդիս ակը սլկըհաց, ներքև գլորուելով
դարձայ երկաթուղու շինութեան վրայ հող կրող
մշակ, ամենավերջը դարձայ ճարտարապետ. այդ
պաշտօնի մէջն էի այս աշնանը ու յոյս ունիմ
կրկին դարնանը ստանալ:

— Տէր Աստուած, այս ի՞նչ զարմանալի կեանքի
ընթացք էք ունեցել, ասեցէք կարգով, ի՞նչ էք
ուսել յատկապէս:

— Այս ըստէիս. — ես ուսել եմ՝ կարգալ,
գրել, հաշուել, շներ վարժել, ձի վարել ու վար-
ժել, կառք բանալիքներ, ֆրանսերէն, անգլիերէն
գրել ու խօսել, պետական ու քաղաքական իրա-
ւունք, քաղաքատնտեսութիւն, մատեմատիկա,
ճարտարապետութիւն ու էլ ոչինչ: Վերջինն էլ
գործադրում եմ:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ, բացականչեց թագաւորազը
զարմացած, խղճով ասեմ, սա անչափ շատ բան
է, ինչպէս երևում է, ձեր ժամանակը խիստ հիմ-
նաւոր էք շահեցրել, մեզ հարկաւոր է, որ իրար
լաւ մօտ ճանաչենք:

Լոպպին հարցրեց. — այժմ ձեր բարձրու-
թիւնը վստահ է ինձ վրայ:

— Էլ ինչ կասկած, բոլոր սրտով, չէ՞ որ մենք
հին բարեկամներ ենք:

— Հապա գրազը ինչ էք անում:

— Ի՞նչ ասեմ, եթէ հաւատացած էք, որ կը
տանէք, փորձեցէք ձեր բաղդը:

— Ես ոչ միայն հաւատում եմ, այլ և գի-

տեմ, որ տանելու եմ, միայն այն պայմանով, որ
ձեր մաքրափայլ Լորդը չիմանայ, թէ նրա գաղտ-
նիքին տեղեակ ենք:

— Գրա համար կը հօգանք, Գէորդը կը մնայ
խիստ հսկողութեան տակ, որմինի լուր տալ չի
կարող:

— Այն ժամանակ ամեն բան լաւ կը լինի,
բարեհաճեցէք միայն միւս ծառաներին հաղոր-
դել, որ ես Գէորդի տեղ ձիավար եմ:

— Գուք ձիավար, մի մարդ, որ քիչ է մնա-
ցել թէ նախագահ դառնայ:

— Ինչո՞ւ չէ, ձեր բարձրութիւն, չէ՞ որ հող
կրող ևս եղել եմ, վերջապէս ինչ փոյթ, երբ
ընդամենը ութ օր է տեւելու:

— Շատ լաւ, ես հարկաւորը կը կարգադրեմ,
նստէք պատմեցէք մանրամաս ձեր գլխով անց-
կացած բաները. շատ զարմանալի արկածներ ու
տարօրինակ վիճակներ պտէք փորձած լինիլ:

— Հապա ձեր ճամբորդութիւնը. թագաւո-
րազ աէր:

— Ի՛հ, այդ կարելի է յետաձգել, նստէք
դեռ նախաճաշ անենք ու ետոյ պատմութիւն-
ներդ սկսեցէք:

Լոպպին թագաւորազի խօսքը տափը չգցեց,
պատմեց այն ամենը, ինչ որ մենք գիտենք: Թա-
գաւորազը տեսաւ, որ իւր երկրի բոլոր հանգա-
մանքներին տեղեակ մարդու հետ զօրձ ունի, որ
ոչ միայն ազնիւ, արդարամիտ է, այլ խելօք,

աչքարաց: Հետզհետէ յարգանքը վարարում էր դէպի Լոպպին, երբ ամեն բանի վրայ նրա բերանից լսում էր հիմնաւոր տեղեկութիւններ: Վերջապէս ցտեսութիւն ասելիս աւելացրեց.

— Սիրելի պարոն, ես անչափ ուրախ եմ, որ մեր ծանօթութիւնը նորոգուեց, մենք դեռ իրար հետ խօսելու շատ բան ունենք, յոյս ունեմ, որ հետս Գերմանիա կը գաք, ձեր ուսումնասիրութեանց պտուղները օտար պետութեան փոխարէն ձեր հայրենիքին նուիրելու:

— Շատ էլ ուղենամ սրտով, այդ ինչպէս կը լինի, նախագահը կամ այժմեան նախարարը իմ մշտնջենական թշնամին է:

— Սյդ մարդու վերաբերեալ հոգսը, սիրելիս, ինձ վրայ թողէք, ես կը քաշեմ, միամիտ կացէք. դուք պաշտօն ստանալու էք ոչ թէ կառավարութիւնից, այլ ինձանից: Ես այս բոպէից անուանում եմ ձեզ իմ ատենադպիր, իմ գանձապահ, իմ գաղտնի խորհրդական, կարճ՝ իմ աջ ձեռ, ամեն բանի կառավարիչ: Ձեր ոռճիկը որոշեցէք ինքներդ. Դէ, էլ ընդդիմախօսելու տեղ չունէք, աչքի լոյս, տուէք ձեր ձեռը, տեսնեմ:

Թագաւորազի բարեսրտութիւնը նրա վրայ այնքան խոր ազդեց, որ արտասուալից աչքերով մեկնեց ձեռը ու հազիւ կարաց երկու խօսք կմկմալ գոհութեան համար:

— Ինձնից գոհ լինելու կարիք չունէք, սիրելի, ես կամենում եմ հին և նոր պարտականու-

թիւններս կատարել: Վաղուց խոստացել եմ ձեր մասին հոգալ, եթէ խրատիս լսէք. կարծում եմ, այժմ խոստումներս կատարելու ժամանակն է: Գրանից դատ իմ դէմ սարքած նենգութիւնը բանալով 125,000 թալեր փող էք անտեսում ինձ համար, այսքանը բաւական է, որ զգամ թէ ես լացրեց թագաւորազը, աներկբայ յոյս ունեմ, որ ձեր հայրենիքին ամենափայլուն ծառայութիւններ մատուցանել կարող էք, երբ ձեզ միջոց տրուի. դրա մէջ ես միանգամայն համոզուած եմ. Դէ, այժմ, իմ սիրելի ձիւղար, ձիւնց լաւ ինամք տարէք, զգոյշ եղէք, գրազը չկորցնէք:

— Մազաչափ հոգ միք ունենալ, ձեր բարձրութիւն, իմ հին ճարպիկութիւնից յոյս ունեմ այնքան մնացած լինի, որ քառաձի կառք վարելը հասկանամ:

Լոպպին էլ իւր օթեանը չը գնաց, գիշեր ցերեկ մնաց ունգարական ձիւնց մօտ. հեծած թէ լծած ձիւղարելը, որ իւր նախկին արհեստն էր, այնպէս եռանդով էր առաջ տանում, որ հազիւ քնելու կամ ճաշելու ժամանակ էր ճարում: Զբօսանքի էր գնում մենակ, ոքմինի չէր թողում իրան ուղեկցել, անգամ թագաւորազին: Բայց սա տեսնում էր, որ ձիւնը զարմանալի սովորել էին Լոպպուն. մի խօսքի կամ սուլոցի վրայ ախոռատնից վազում էին նրա մօտ, ձեռ ու երես լիզում ու նրա շուրջը խաղում ցատկոտում փոքր

չների պէս:

Վերջապէս եկաւ որոշեալ օրը, թագաւորազը կառքով դնաց մրցումի տեղը. Լոպպին ձին սրարչաւ քշում էր թեթեւութաց կառքի կողքից: Այնտեղ եկել պատրաստ սպասում էին Լորդ Սէյմուրը, գրազի դատաւորները և ահագին բազմութիւն մեծամեծ հանդիսականների, որոնք հետաքրքիր դիտում էին թագաւորազին ու իւր ուղեկցին: Լորդ Սէյմուրը աչքերով մէկի փընտուում էր, որոնածը չգտնելով ճակատը կնճռեց.

— Ո՞ւր է ձեր Գէորգը, թագաւորազ, հարցրեց նա:

— Այս օր նա սենեակից չի կարող դուրս գալ, իմ Լորդ, և ես ուրիշ ձիաւար եմ նրա տեղ վերցրել: Այդ միևնոյն է, ես իմ գրազի վրայ կանգնած եմ:

— Այդ կարող էք դուք անել, թագաւորազ, բայց ես գրազը անխախտ պահել չեմ կարող, մեր պայմանն այնպէս էր, որ ձիարչաւն ու կառարչաւը Գէորգի միջոցով լինի:

— Ես չեմ կարծում, պատասխանեց թագաւորազը, թող նշանակուած դատաւորները վճռեն:

Հարցը խորհրդածութեան նիւթ դարձրին դատաւորները ու վճռեցին թագաւորազի օգտին, սա գրազի փողը վէր դրեց. անճարացած յօժարուեց Լորդ Սէյմուրը:

Մրցումն սկսուեց: Լոպպին իւր սևութոյրին ասպանդակեց, ազնուարիւն կենդանին թռաւ

ցցերի, խրամաանների ու զատնէչների զլխով ու թողեց Լորդ Սէյմուրի մոխրագոյնին իրանից շատ ետև: Ընդհանուր ծափահարութիւն տարածուեց օդում, երբ Լոպպին վերադառնում էր: Գրազի կէսը թագաւորազի օգտին տարուած էր, այլ ևս ոչինչ չունէր կորցնելու:

Այժմ կառքերն առաջ եկան. Լոպպին ու Լորդի կառապանը իրանց ձիանը այնպէս հմտութեամբ ու շնորքով էին վարում, որ գրազի միւս կէսը երկա՞ միջոց անորոշ էր մնում. ոչ մէկին չէր կարելի յաղթական անուանել. Լորդ Սէյմուրը ձեռը մեկնեց իւր փողին, որ գոնէ իւր գումարը անկորուստ ազատէ, եթէ չի յաջողում աւելի տանել. այդ միջոցին Լոպպին քաղաքավար ու վճռական կերպով հետևեալ առաջարկն արեց.

— Հարկաւոր է իմանալ, թէ ո՞վ կառք վարելու և ձիան վարժելու մէջ հմուտ, ճարտիկ է: Մինչև այս վայրկեան կատարել եմ Լորդ Սէյմուրի ձիաւարի արածները, այժմ հերթն իմն է, ուզում եմ վերջը մի փորձ անել. եթէ իմ հակառակորդը այդ կարենայ անել, այն ժամանակ իմ ողորմած տիրոջ թոյլտուութեամբ գրազը մեզ համար կորած համարաւ ի, իսկ եթէ չէ, մեր տարն է:

— Համաձայն եմ, բարձրաձայն պատասխանեց Լորդ Սէյմուրը, այդպիսի առաջարկով հայ հայ օր ես տանելու եմ:

Մրցումի դատաւորները պայմանները ստորագրեցին: Լոպպին թռաւ կառքից ցած, սան-

ձերը ձիանց գլխներից հանեց ու մի կողմ գցեց
ու նորից բարձրացաւ կառքի գլուխը: Ամենն էլ
մնացին ապշած, անգամ թագաւորազը:

— Այդ ինչ ես անում, Լոպպի, ձայն աուեց
նրան, խելքդ թուցրե՛լ ես, ինչ է, առանց սանձի
կառք վարել կը լինի:

— Թողէք իմ կամքին, ողորմած տէր, ու
մտիկ արէք, ճնց եմ գործը գլուխ բերում, ասեց
Լոպպին, ձեռը օգու՛մ պարզեց ու մի թեթեւ սու-
լոց հանեց. կայծակի պէս արագ տեղներից պոկ
եկան փառաւոր երիվարները, կառքը հետները:

— Այն գնա՛ն է, ինչ գնում են, էլ դարձողը
չեն, ծաղրական մտքով նկատեց Լորդ Սէյմուրը:

Նա սխալու՛մ էր: Լոպպին մի խօսք բացա-
կանչելով, սուլելով դարձրեց ձիանը ետ արշաւա-
սոյր պտոյտ անելով, ապուշ կտրած հանդիսական-
ների գլխներով, յանկարծ նետի պէս արագ սլա-
ցաւ Թեմզայի մօտակայ ափը, հէնց այն կողմը, ուր
գառիվէր ու գահավէժ գէպի ջուրն է իջնում:

Շատերի երեսը սփարթնեց, ինքը թագա-
ւորազ Ադելբերգը հազիւ կարաց իւր շփոթու-
թիւնը ծածկել, վասն զի անգունդը խոր էր. եթէ
երիվարները ներքեւ թափուէին, սարսափելի կեր-
պով ջարդ ու փուրթ էին լինելու. Աւելի ու աւելի
էր մօտենում լծած կառքը վտանգաւոր ափին.
մի վայրկեան ես, անյայտանալու էին ներքեւի
խորութեան մէջ. հէնց այն է սմբակներով շոշա-
փում էին պռունգը: Ահա այժմ սրտեզ որ է փոր-

ձանքը կը պատահի. «նա կորած է» բղաւում էին
ամենը ու այդ տագնապալից վայրկենին զի՛րթ
կանգնեցին ձիանը, կարծես սմբակները գետնի
մէջ մեխած ու վզները ետ ծալելով խրխնջացին
դէպ իրանց աներկիւղ վարիչը: Մի խօսք հնչուե-
լուն պէս դէպի աջ թեքուելով թռաւ կառքը լի
թափով մինչև դուրս եկած տեղը: Բէ՛րէ՛կ, գո-
չեց Լոպպին ու ձիանը կանգնեցին հէնց այն-
տեղը, որտեղից արշաւելն սկսել էին:

Ընդհանուր ցնծութիւնը երկինք վեր ելաւ.
Լորդ Սեյմուրն ինքը գայրութից դողացող շըր-
թունքներով խոստովանեց գրազը տանուլ տուած
ու սրտի մորմոքը ծածկելու համար վաղորօք
ձին հեծնելով հեռացաւ մրցման տեղից: Թա-
գաւորազը գումարները ժողովեց. Լոպպին սան-
ձերը կարգի բերեց, գեղեցկատես ձիանց վզերը,
շփելով փաղաքչեց, գուրգուրեց: Ամենն էլ վե-
րագարձան Լոնդոն. թագաւորազը խիստ գոհ
էր, որ խաբեբայութեան գոհ չը դարձաւ. Լոպ-
պին բաղբաւոր էր, որ իւր յանձնառութիւնը
հիանալի կատարեց. այժմ քթի տակ փնթփնթա-
լով այսպէս խօսեց. «Ժամանակը ոսկի է, կեցցէ
աշխատասիրութիւնը»:

Թագաւորազը տուն հասնելուց ետը հրամա-
յեց Լոպպուն իւր մօտ կանչել: Մատով ցոյց
տուեց սեղանի վրայ դիզած ոսկուն ու ասեց.

— Իմ սիրելի, ահա ձեր բաժին ոսկին, վեր-
ցրէք:

— Ի՞նչ բաժին, տէր, հարցրեց Լոպպին ար-
մացած:

— Ճիշտ այն գումարը, որ Լորդ Սեյմուրը
ձեր վրայ տանուլ է տուել:

— Իմ վրայ չէ, ձեր բարձրութիւն, այլ ձեր:

— Ամենեւին չէ, աչքի լոյս, պատասխանեց
թագաւորազը ժպտալով, ես անչափ գոհ եմ, որ
իմ փողը կորստից ազատեցիք, միւսը ձեզ է
պատկանում, վասնզի ձեր ճարպիկութիւնով էք
տարել: Ի՞նչ վերցրէք առանց այլևայլութեան:

Լոպպին գիտէր ոչ, դարթուն է թէ երա-
զում: Վահ, ոսկու ահագին շեղջը իրան էր պատ-
կանում:

— Սա մի մեծ կարողութիւն է, տէր, մի հա-
րուստ մարդի կարողութիւն, թոթովում էր նա:

— Անշուշտ, սա այն դրամագլուխն է, որ
դուք ձեր ժամանակի իմաստուն գործադրու-
թեամբ ժողովել էք, ասեց թագաւորազը, վեր-
ցրէք ու վայելեցէք, լիովին արժանի էք: Ես ինձ
բաղդաւոր եմ զգում, որ դուք իմ խրատներին
հետևելով այսպիսի ընտիր պտուղներ էք քաղում:
Այս պտուղները չէին հասունանալ, եթէ ձեր ջա-
նասիրութիւնը չը լինէր: Ութ օրից ետ ուղե-
որում ենք դէպի Գերմանիա, դուք կուղեկցէք
ինձ առ այժմ իբրև բարեկամ: Թէ ապագայում
ինչ պաշտօն էք ունենալու, որպէսզի բեղմնաւոր
լինի ձեր գործունէութիւնը այդ իմ անելիք
հոգան է: Այն ժամանակ կը պարզուի ճշմարտու-

թիւնը, որ ինքներդ զգացել էք: առաջին՝ որ
անշուշտ ժամանակը ոսկի է, երկրորդ՝ որ միայն
ուսածը մենակ իւր համար չէ, այլ նոյնպէս
ուրիշներին, և որ աշխարքիս վրայ ուրիշ աւելի
ապահով աղբիւր չը կայ բաղդաւորութեան ու
գոհութեան, քան թէ ժամանակ շահեցնելը ու
մտաւոր գանձեր ժողովելը:

Լոպպին թագաւորազի հետ դարձաւ Գեր-
մանիա: Մի տարուց ետ թագաւորազի ձեռն ըն-
կաւ կառավարութեան ղեկը. Լոպպին, որ մի
ժամանակ շնավարժ տղայ էր, դարձաւ նախա-
գահ, վերջն էլ նախարար: Սակայն մի բան, որ
բոլորից Լոպպու համար քաղցր ու նշանաւոր էր,
այդ այն էր, որ մինչև շունչ փչելը մնաց բարեկամ
իւր թագաւորին, որ իրան յարգում, գնահա-
տում ու սիրում էր:

Կինդերլայն տիկինը, իւր մօրաքոյրը մի բա-
նի տարի մասնակից էր իւր հոգէորդու բաղդա-
ւորութեան. Լոպպին չէր մոռանում իւր մանկու-
թիւնը, ամեն բարիքից բաժին էր հանում մօ-
րաքոյրը և պառաւութեան օրերը քաղցրացնում
առատ բարերարութիւններով:

— Այո՛, այո, փսփսում էր ամեն անգամ
պառաւը, երբ լոպպու սենեկապանը որև է ըն-
ծայ էր բերում իւր օթևանը. այո՛, տղէն կատա-
րեալ իրաւունք ունէր այն ժամանակ: Ինքս տես-
նում, զգում եմ, որ ժամանակը ոսկի է եղել,
Հո՛ղը գլխիս... սուր էր թէ այս բանը մանուկ

հասակումս իմանայի, մի կարգին օր ու կեանք էլ ես կուեննայի: Այժմ, ախ ու վախ, շատ ուշ է: Ով մի բան ուսանել է ուղղւմ, մանկութեան օրերին պտի ուսանիլ:— Ժամանակը ոսկի է, ուսածը կորած չի, մի օր իրան պէտք կը գայ: Ախ, սըր էր թէ այս բանի վրայ մանուկները մի ըիչ երկար մտածէին: Մանկութիւն, մանկութիւն, սըր ես, կանչեց պառաւը արտասուելով...

Երանի նրան, ով կարենայ նորից մանուկ դառնալ:



Վ Ե Ր Զ.

ԲԱՅԱՏՐԵԼԻ ԲԱՌԵՐ.

- | | |
|------------------------|---------------------------|
| Անկմանկ լինել | այշել |
| Աչքում մտնել | դուր գալ |
| Բուլդոզի-բուլդոզի անել | շարժել դէս ու դէն |
| Գիրք կանգնել | միանգամից կանգնել |
| Գափ | ազդը |
| Դատել | վաստակել |
| Դմբուկ | կոռվի |
| Ընունք-մըռունկ | ունքերը, դէմքը |
| Թալեր | մօտ 150 կոպ. Գերմ. դրամ |
| Լուրդոր | մօտ 8 ոսր. |
| Մոռս լինել | երևի սոսերի վրա բարձրանալ |
| Մլկել | շտապ վազել |
| Մկլթոց | հեկեկոց |
| Մպպացնել | ծածուկ վերցնել |
| Կեռքնին նիչել | ատամներն իրար կպցնել |
| Կզնուոց | զայրոյթ |
| Հանգ | կերպ |
| Հայ հայ | անկասկած |
| Հալ | վիճակ |
| Հիս անել | զրգռել |
| Ճղմակ | հիւղից հիւսած օդ. |
| Շորթի | պոկոդ, թափառաշըշիկ |
| Շուտի | երկար մտրակ |
| Շիլինգ | 50 կոպ. Անգլ. դրամ |
| Շրբոց | շտաշիւն |
| Ոչ ու փուչ | անպէտք արարած |
| Չխպացնել | խփել |
| Պդիծել | խիտ անիծել |
| Սին | զարդակ |
| Սինգ-սինգ | ձիւ հասարակ ընթացքը |
| Սրտի դալ | բարկանալ |
| Վնգստալ | շան լալը |
| Տուր ու թակ | ձեծ |
| Ցելք տղայ | անհանգիստ տղայ |
| Ցելքութիւն | անկարգութիւն |
| Ցցապարան | խիտ զառի վայր |
| Ցիցաչոր | նիհար |
| Տար | շահած գումար |
| Տարած օր | ամբողջ օր |
| Տուն լինել | հմուտ, տեղեակ լինել |
| Քաջքի պատմէր | դեերի մայրապետ |

Առանձին գրողներով լոյս տեսած աշխատ-
քիւններս

1) Գալո ափօ. սպառուած	10 կօպ.
2) Աստուած չը ճանաչող, սակաւաթիւ	10 »
3) Խուլ խաչիկ, սպառուած.	25 »
4) Ծովինար Բ. տպ. սպառուած	20 »
5) Հէքիաթներ. սակաւաթիւ.	30 »
6) Երկու աղբերացիդ Բ. տպ.	30 »
7) Շէն թագաւոր Բ. տպ. 25 կ.-ի տեղ	20 »
8) Աստուած 'ողջատի կէրպում	20 »
9) Անմեռ աշխարհ	8 »
10) Երկեր կամ փոքր գրուածներ Ա. կապուկ 50 կ.-ի տեղ	40 »
11) Ժամանակը ոսկի	40 »

Տասն օրինակով կանխիկ գնողները կը ստանան
25¹⁰/₁₀₀ զիջում, յիսուն օրինակով՝ 30⁰/₁₀₀:

Տպագրութեան համար պատրաստ են

1. Առակներ, 2. Հէքիաթներ Բ. կապուկ, 3. Աղա-
սու պատմութիւնը «Վէրը Հայաստանի» երկից պատա-
հների համար կազմած, 4. Մանուէլ (Մամիկոնեան):

Այն բարեմիտ անձինք, որոնք կը կամենան
սպառուած կամ անտիպ գրքոյկներէս հրատարակու-
թեան օգնել, գիմելու են ինձ: Հասցէս՝ Ներս. դպրա-
նոց ուս. Քամալեանց Ս.

ՀՀ Ազգային գրադարան



0000000000000

60319

